

Բացին

ԱՄԱՐԻ ՕՐԱՆՆԱԴՐՈՒՄԸ ԿՐԻՔՍԻ

Գ. ՏԱՐԻ 1964
Մ Ա Յ Ի Ս 5

باکین
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين کارنيك قزاقيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՆԱՆ
 ԵՒ ԱՐՈՒՇԱՑԻ

ԱՄՍԱԳԻՐ
 Կ. ՍՍՍՈՒՆԻ
 ԱՄՍԱԳԻՐՆԵՐ
 ԵՂ. ՊՅՅԱՋԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ


ԱՄՍԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆՊԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՅԵԱԿԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԹԷ
 ED. BOYADJIAN
 B P. 1153, BEYROUTH-LIBAN
 Հեռագրային բիւ 252786/14

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ
 ԴԻՆԻ
 Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ
 Մ. ԹԱԻՐԻՋԵԱՆ
 Բ. ԿՈՒՆԵԱՆ
 Գ. ՍԻՀՈՒՆ
 Ա. ՖԱՐԱՃԵԱՆ
 Գ. ԳԵՂԱԿ
 Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
 Լ. ՄԿՐՏՋԵԱՆ
 Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
 Զ. ՄԻՐՋԱՅԵԱՆ
 Բ. Փ.
 Ծ.

 ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ



Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Դ. ՅԱՐԻՆ, ԺԵՐԻ 5

Մ Ա Յ Ի Ս 1964

ՊԵՐՏՈՒԹ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

Նաևը ցնցուկեցաւ՝ ծանրամարմին, անհարակ, քնաթաթախ հսկայի մը պէս։ Ետևտ գնաց, տատանեցաւ կողերուն վրայ, մեղմօրէն հեռանալով ցամաքէն։ Պտուտակի երկու հարուած եւս, եւ... մնաց բարով արձակուրդ, մնաց բարով դեղեցիկ օրեր, ահա կը մեկնինք արդէն հեռու, արդէն շատ հեռու։

Արձակուրդներուն ամէնէն փառաւորը շնորհեցի եւ ինծի այդ ամառ։ Չորս շաբաթներու հնչողական անդործութիւն մը, հանգիստ մը՝ Սւրբապայի մէջ։ Չորս շաբաթ բոլորովին անհոգ ազատութեան մը մէջ։ Նոյնքան թարմ, նոյնքան դեղեցիկ, նոյնքան լուսաճաճան՝ որքան առաջին օրերը Արարչութեան։ Եւ այս ամառայի մը սպասութիւնը՝ քառն տաբիներու երազանքներէ, զստն տարիներու պատրանքներէ եւ... քրտինքէ՛ ետք։ Դէպի Եւրոպա նման ճամբորդութիւն

մը՝ միլիոնատէրի մը համար թերեւս ոչինչ, բայց մեծ բան մըն է, լման արկածախնդրութիւն մը՝ ի հարկէ, ինծի պէս համեստ պաշտօնեայի մը համար։ Կարծես հրաշքով միայն իրադարձելի արկածախնդրութիւնը կեանքի մը։ Բայց ահա, որքան ալ լայն, որքան ալ յանկուցիչ ըլլան արձակուրդները, կայ միշտ նաւ մը կամ նաւու նմանող որեւէ բան, որ կտրծես դարան մտած կը լրտեսէ քեզ, որ նաւահանգիստի մը մէջ կը ոպասէ քեզի, չար ու ամսեղունի, յիշեցնելով շարունակ, թէ չէ՛ս կրնար ուշտնալ, թէ հարկ է մեկնիլ, վերցնել խորիւրդ։ Կայ միշտ նաւ մը այո, որ խելօքիկ մը կը վերադարձնէ քեզ քու փարախդ։

Յամաքի վերջին կարկանդակը հարթուեր անհետացեր էին արդէն առեկէ մը ի վեր։ Կարծես հալեր, դուրսիացեր, ցնդէ՛ր էին անոնք երկնի եւ ծովային

ընդունաւ մտահոգիչ անսահմանութեան մը մէջ, հորիզոն կոչուած մշուշոտ եւ անորոշ գիծ մը կազմելով ի վերջոյ, հեռուն:

Ետեւի կամըջակին վրայ էի եւ այդ բաները կը գիտէի: Անոնց փախուստը, հեռաւորութեան մէջ կորսուելը: Ուրախ բան մը չէ, հաւատացէ՛ք, բնա՛ւ ուրախ չէ՝ վերադառնալը արձակուրդէն եւ աշխատէս յամենալը, նաեւ մը կամըջակին վրայ, յամենալով գիտել շարունակ դիմել հորիզոնին դոր լքեցիք: Հեռուն բան մը կայ, որ երազներու ակնկերքի մը պէս կը փախի քեզմէ անդամ: Լաւ է չնայել անոր:

Նկատեցի յայնժամ որ միակն չեմ, նայուածքը հեռու հորիզոններուն ուղղած: Ընկեր ունիմ: Կամըջակին վրայ եւ ինձմէ ոչ շատ հեռու, երիտասարդ խորտեալ աղջիկ մը, ինք եւս նայուածքը չի բաժնի հեռուններէն, բոլորովին վերացեալ եւ ինքնամոռաց դիրք մը առած: Առաջին անգամ անստծ էի զայն նաւամատոյցը, ճամբորդական պայուսակներու դէպք մը մէջ պեղեցիկ ոտտանայի մը ճաղկիկութեամբ, խճողումէն ինքզինք ազատող:

«Ո՛հ, աղջիկ, կ'ըսեմ իւրովի, եւ ի՛նչ ալ լաւ կերտուած, ով գիտէ ինք եւս ինչ կը կորսնցնէ, ի՛նչ կը ձգէ տարածութիւններէն անդին, որպէսզի աչքերը այդ աստիճան կառած մնան հորիզոնին:

Այս մտածումներուն մէջ թաղուած, չէի նկատած որ նայուածքս լրբորէն զամուսն կը մնար, այն ալ ոչ կարճ ժամանակ մը այդ խորտիչազեղ արարածին վրայ: Ինքզինքս դուայ միայն այն ատեն, երբ դարձաւ ինծի եւ մտաւանջ նայուածք մը նետեց վրաս: Նայուածքը մէկուն, որ անտիկնայի կը բերես իր մը տերմութեան մէջ եւ որ կը թռչի քեզի լըսել: «Մի՛ քաշուի՛ք, ո՛հ, խնդիր չէ, մի՛ քաշուի՛ք»: Յայնժամ յանցանք մը քաշուի՛ք թէ՛ այդ խորտեալ դեղուհիին շնորհին արժանանալու համար պարտականութիւն սեպեցի բարեւել զինք: Բարեւէ աւելի ներողութիւն խնդրել մըն

էր ըրածս, որուն խնդին փոխադարձեց սակայն քաղցրագոյն ժպիտով մը եւ սիրուն զլխու մը շնորհալի շարժումով: Կէսօրին, աւելի խոստմնալից ժըպիտով մը եւ աշխատէս քնքոյշ եւ խրախուսիչ ժեսթով մը զիմաւորեց զիս ճաշարանը:

Մրահի մուտքին մօտ, իր սեղանին շուրջ նստած էին երեք այլ անձեր, որոնցմէ մէկը տարիքը ցոյց չտուող կին մը եւ աղուարկ մազերով ու խոշոր փորով այր մը: Ոչինչ մասնաշաղկապ երկու անձերուն վրայ, եթէ զեղչենք աղջկան ծնողքը ըլլալու անոնց պոռացող երեւոյթը հոն: Ծահեկան չէր, երբեք, երբորդ սեղանակիցը նմանապէս, մարդ մը ասիկա, զրեթէ երիտասարդ, ուսերուն վրայ կարծես սխալմամբ գետեղուած վիթխարի գլուխով մը եւ ծայր աստիճան խնամքով հագուած:

Մանաշաղկապ ու հետաքրքրական իրողութիւնը այդ պահուն, սիրուն խորտեալ աղջկան աչքերն էին, որոնք զամուսն կը մնային իմ վրաս: Ծաշին ամբողջ տեղութեան, այդ աչքերը չդադրեցան բնաւ զիս համադարկի բռնելէ: Զոյգ մը մեծ, կանաչ աչքեր, որոնք կ'առաքէին ինծի պեղեցիկ մտադրութիւններու եւ արեւոյնով խոստումներու ամբողջ կոյա մը:

Իրարու ուղղած մեր նայուածքներուն մէջ գործով ու փաղաքշանք կար միայն: Եւ երբ ելայ սեղանէն, նախազգացումէ աւելի բան մըն էր, որ կ'ըսէր ինծի, թէ պիտի շուշանար զիս դռներու կամըջակին վրայ:

Դուրսը Օգոստոսի արեւը, դաժան ու տենդարոր արեւ մը, որ թերեւս մահացու կերպով կը ձանձրանար անսահման հեղուկներու զգուշի տնքորի մը մէջ, հոգւով մարմնով ու մերկ նետած էր ինքզինք մեր նաւուն վրայ, յաւիտենական միօրինակութենէն իր վրէժը լուծելու համար կարծես: Բայց որքա՞ն ջուր, Աստուած իմ, այս ի՛նչ անծայրածիր շղթայազերծում: Այսքան անսանձ հեղուկներ տեսած ըլլալէ ետք, մարդիկ ինչպէ՞ս կրնային հանդարտ քնանալ:

Սկսայ մտածել մեր նախահայր Նոյի մասին, տապան մը շինելու պայծառատես իր ներշնչման մասին. բայց կը մտածէի նաեւ ոսկեծամ էակի մասին, որուն ժամանակին կը սպասէի, դողունի նայուածքով մը:

Պիտի գա՞ր: Այդ նայուածքները, այդ մպիտնե՛րը... Ոտարուած չէի՞ արդեօք:

Բայց կու գա՞յ ահա, անխոյժ քալուածքով մը, կարծես ող առնելու համար: Կ'ուղղուի շիտակ իմ կողմս եւ մտնկապարտէջէն քեզ ճանչցողի մը շեշտով:

— Այդքա՞ն կը սիրէ՞ ծովը, կ'ըսէ ինծի, որ չէ՞ կրնար բաժնուիլ անկէ:

— Ը՛հ, այո՛... ո՛չ, կ'ուղիմ ըսել ան է որ կը կալանէ մեզ: Ի զուր փախուստ կու տանք:

— Այո, բայց փախչողի երեսոյթ չուներք, առտուընէ ի վեր անոր վրայ հիտնալէ զատ բան չէ՞ք ըներ:

— Այն է որ... կը մտածեմ տապան մը շինել, դիտէ՞ք, Նոյի տապանին պէս...

— Տապա՞ն մը, ճարտարագետ էք արդեօք:

Մովէն չէր որ կը վախճայի այնքան, ոչ ալ ճարտարամիտ նախահօր նախնական նաւը շահեկանութիւն մը ունէր ինծի համար, բայց սկսած էի տապանի մը մասին խօսելով, և պէտք էր ամբողջացընէի ըսելիքս: Եւ յետոյ, չէի կրնար թոյլ տալ որ այդ ազդիկը յաղթանակ մը տանի վրաս:

— Այդ ի՞նչպէս կ'ըլլայ, վերսկսայ. ուրեմն ձեզ չե՞ն մտահոգեր այս հեղուկ տարածութիւնները, սա կառուած ալիքները:

— Ձեզի այդքա՞ն վախ կը պատճառեն, հակառակեց ան, հեղանական:

— Իսկ ձեզ անհանգիստ չե՞ն ըներ, ըսի, չե՞ն սարսափեցներ:

— Ո՛հ, ես ուրիշ շատ մտահոգութիւններ ունիմ այդ մասին մտածելէ առաջ, վերսկսաւ ինք: Բայց կի՛ն ըլլալու է զիտնալու համար թէ ի՛նչ է սարսափը, բայց իրական սարսափը:

Եւ, դադարէ մը հտք.

— Բայց այդ մարդիկ ինչ կրնան դիտնալ անոր մասին: Վայրենիներ են, մի միայն իրենց մասին կը մտածեն, իրենց հաճոյքներուն, Երբեք չեն կրնար հառկընալ սարսափը որ մեզի կը պատճառեն:

Այս բոլորը նետեց իմ վրաս մեղադրանքի մը շեշտով եւ լրջութեամբ, մինչդեռ ես սաստկօրէն կը տենչայի իմ հաշտոյս քաւելու այս մեղաւոր անհատկացողութիւնը, — այդ մարդոց բերտ վերաբերումը կիներուն հանդէպ:

Մական եւ աշուղէս, քիչ մը շատ առաջ կ'երթայ, կը մտածէի. ինչո՞ւ այս բոլոր ճառերը, ո՛րը հասնելու համար: Եւ յետոյ ի՞նչ կապ իմ առաջին նախադասութեանս եւ իր չափազանց լուրջ պանդաստներուն միջեւ: Ըսածս զաւելտական խօսք մըն էր լոկ, քեռի Նոյէն փոխ առնուած երեւակայական տապան մը. իսկ հետո խօսող այս գեղեցկութիւնը ի՛նչ մեքենայի, ի՛նչ տեսակ կառքի մը մէջ կ'ուղէր զնիւ զիս:

Բայց այսպէս են կիները. սեղ մը հասնելու համար դիտեն բոլոր կարճ ճամբաները. անգամ մը որ մաքերնին զնեն քեզ վարել, կը տանին հոն ուր որ կ'ուզեն:

— Տեսա՞ր մարդը քիչ առաջ, բոսայանկարծ:

— Մա՞րդը: Ո՞ր մէկը:

— Մերը չէ, որ հայրս է, այլ միւսը:

— Մի՞ւսը: Ան որուն գլուխը...

— Այո՛, այո՛: Գլուխը, խոշոր գլուխը, ամուսնալուծուած մարդ մըն է եւ սեղանաւոր մը ի գծախտութիւն ինծի:

— Այդպէս կ'երեւի, այո՛, սեղանաւոր մը: Նշանաւոր մէկը ըլլալու է, չէ՞, զորքը գիտցող սեղանաւոր մը: Արքեմիտեսի իր գլուխով՝ Թշուառականօրէն խելացի մը ըլլալու է:

— Խելացի՞, ի՞նքը, դիտնակա՞ն, ի՞նքը. աւելի ճիշդ՝ անպիտան մը, ապուշ մը, ըսէ, ըսէ...

— Բայց հապա սեղանաւոր...

— Օ՛, սեղանաւոր, սեղանաւոր: Բայց խեղճ բարեկամս, այդ մէկը ոչ մէկ կապ ունի ուշիմութեան հետ: Եւ

յետոյ ի՞նչ կ'ուզես որ արժէ ինծի հա-
մար իր ուշիմութիւնը: Ամուսնալուծ-
ուած մարդ մըն է, աւելցուք մարդ մը:
Ձե՞ն տեսներ որքան պփփաւի է:

— Հաւատա՛ւ...

Ձերցայ աւարտել նախադասութիւն-
նքա, որովհետեւ տեսայ որ խոսիչի մը
կը մատնուէր երիտասարդ զրուցակիցս,
հովի մը անցքէն իրար անցնող տունկի
մը պէս:

— Ահաւասիկ այս կողմ կու գայ, ը-
սաւ, արհամարհանքով լեցուն ծամա-
ծրութեամբ մը, մերձենալով ինծի,
կարծես վտանգի մը դէմ պաշտպանուե-
լու համար:

Ետիս կը դառնամ եւ կը տեսնեմ
հսկայի գլուխով մեր սեղանաւորը, սառ-
ղուիի գլխուն թառած Մաստատոնդի
կերպարանք մը, որ կ'իջնէ կամրջակին
վրայ: Խօսած էի հովի մը մասին որ կը
գողգողացնէ տունկիքը: Բայց ի՞նչ հով,
այս մէկը, աւելի ճիշդ՝ ուրական մը,
որ թաւալըրոր կ'իջնէր աստիճաններէն
եւ կը խոյանար մեր անկիւնը:

Ինքզինքս կը հաւաքեմ, տէր կը
կանգնիմ ուժերուս, ո՞վ գիտէ այս փի-
ղին հետ...

Բայց անգամ մը որ մեր քովն է,
կարծեցեալ փիղը մանուկէ մը աւելի
քնքոյշ կը դառնայ:

— Լէյլա, Լէյլա, կ'ըսէ երգեցիկ
ձայնով մը, ո՞ւր էիր այս ամբողջ ժա-
մանակի ընթացքին, ամէն կողմ քեզ կը
փնտռէինք...

— Բայց հոս էի, վաղեմի բարեկամիս
հետ, կը պատասխանէ անմեղօրէն խաբ-
տեալ գեղեցկուհին:

Ահա քեզի ներկայացնեմ... Եւ դիտ
մատնացոյց ընելով.

— Հին բարեկամս, Ալֆոնսը:

Յետոյ դառնալով միւս կողմը.

— Ահաւասիկ պարոն Ալեքսանտրը,
կ'ըսէ կարծես հակառակ իր կամքին,
մեր տունին բարեկամն է:

— Բայց, Լէյլա, քեզմէ հարիւր ան-
գամ խնդրեցի, որ դիտ պարոն չանուա-
նես... Եւ... Թող բարեկամդ ներէ, ծը-
նողդ մեզի կը սպասեն:

Պեղծ մարդ, կը կարծէր, անկասկած
թէ Լէյլան ինձմէ կը հեռացնէր, թէ
դայն կը տանէր ուրիշ մոլորակ մը: Կը
մոռնար անշուշտ թէ նաեւ մը մէջ էինք,
բնակիչ՝ մանտրտիկ մոլորակի մը, որ
անվերջ կը շրջի յաւիտենական երկինքի
մը եւ յաւիտենական ջուրերու միջեւ. եւ
նաեւ մը, յայտնի է, թէ որչափ կը մօ-
տեցնէ եւ կը փութացնէ բոլոր բաները:

Հաղիւ երկու ժամեր անցեր էին,
երբ ողջիկը վերադառաւ դիտ կամրջակին
վրայ, նոյն տեղը:

— Ամէն բանէ առաջ, կը կարծեմ թէ
պարտական եւ բացատրութիւն մը տալ
ինծի, — կ'ըսեմ իրեն:

— Բացատրութի՛ւն:

— Այո՛, բացատրութիւն եւ այն եր-
ջանիկ արարածի մասին, որ Ալֆոնս կը
կոչուի եւ ըստ երեւոյթին՝ ձեր վաղեմի
բարեկամն է:

— Ա՛հ, այդպէ՛ս ըսի... Ի՞նչ կարե-
ւորութիւն ունի:

— Այո՛, անշուշտ, ի՞նչ կարեւորու-
թիւն ունի, Ալֆոնս կոչուե՞ր եմ թէ...
Ապրատապապրոս: Բայց, աստանա՛ն
տանի, ինչո՞ւ ուստ խօսեցաք, ըսելով
որ հին բարեկամ մըն էի:

Որովհետեւ... խնդրանք մը ունիմ
քեզի: Բայց նախ եւ առաջ, խօսք պիտի
տաս որ պիտի չմերժես:

— Ամէն պարագայի, ըսէ՛ տեսնե՞ք:

— Ինծի նշտնածի դեր պիտի խաղաս:

— Ո՞վ, ինչպէ՞ս, կեցիր նայինք...

— Սա ճամբորդութեան օրերուն
միայն, ոչ աւելի. այդպէս ցոյց պիտի
տաս:

— Եթէ լաւ ըմբռնեցի, կ'առաջարկես
որ դեր մը ընդունիմ, ճիշդ ինչպէս բե-
մի վրայ, կնամեծար եւ կնահաճոյ երի-
տասարդի մը դերը ի վերջոյ:

— Ո՛չ, ո՛չ, ոչ այդ մէկը. ոչ թէ կը-
նահաճոյ մը, այլ իրական նշանած մը,
բայց՝ ժամանակաւոր կերպով: Այո, ա-
յո, ժամանակաւոր նշանած մը:

— Ինծի նայէ, ապու՛րս, կատակը
մէկդի, ասիկա իմ դործս չէ եւ մի կար-
ծեր որ կը համաձայնիմ:

— Ա՛հ, Աստուած իմ, ինչ դժբա՛խտ

եմ, թոյլ տուր որ բացատրեմ զոնէն:
Եւ բացատրեց...

Այնչափ եւ անանկ մը՝ որ, քանի մը վայրկեանէն, պատմեց ոչ միայն իր, այլ իրենց ամբողջ տոհմին պատմութիւնը: Հօր կողմէն, մօր կողմէ՝ հօրեղբայրներ, մօրեղբայրներ, զարմիկներ՝ անցան սրարշաւ, ատելութեան կամ համակրանքի բեռներով, զիս ալ խառնելով իրենց շարքերուն:

Իմացայ ուրեմն որ Լիրանտնի Գ... շրջանէն էր եւ հայրը հիւսուածեղէնի մեծ գործարան մը տնէր մայրաքաղաքին մէջ ուր հիմա կը բնակէին: Իմացայ յետոյ, որ պարոն Ալեքսանտրը սեղանաւոր մըն էր, բայց ոչ պղտիկներէն, որուն իր հայրը կապուած էր, գործարանը մեծցընելու եւ արգիւտկանացնելու սկսելուն ատելին մէկ օրէն:

Ակիզները բանէ մը կասկածած չէր: Այդ հսկայ սեղանաւորին ոչ քաղցր խօսքերէն, ոչ ալ չափազանց ընտանի վերաբերմունքէն: Եւ հակառակ որ բոլոր այս փութաթմբութիւնները, այն ալ նման զանճանճոյ անծի մը կողմէ, ձեռով մը զինք կը վերադարձնէր, Լէյլան անոր հետ վարուած էր, որպէս ընտանիքի անդամի մը, քաղաքավարութեան բոլոր կանոնները յարգելով:

Միայն շատ ուշ, անա՛ղ, հասկցած էր այդ բոլորի միտք բանին, ինչ որ կը ծածկէին բարեկիրթ մանուկի այդ ձեռքերը, հաճոյակատարութեան եւ նրբավարութեան այդ ցուցադրութիւնը:

Շատ ուշ հասկցած էր որ լոկ քաղաքականութիւն կ'իւն այդ գործովայի շարժումները, զինք ցանցի մէջ բռնելու շարժիւտ անգամավարութիւն մը:

— Ձեմ գիտե՞ր թէ ինչ բան սերտօրէն օղակած է հայրս այդ դրամատէրին հետ, ըսաւ Լէյլա, թէ ինչ կընայ իրեն պարտական ըլլալ, գիտես, գործի մէջ...

— Այդ է ուրեմն, գործի հարցեր...

— Ահ, չար մի՛ ըլլար, թոյլ տուր տալարտեմ: Հայրս մեզմէ խնդրած էր զայն հիւրասիրել, հետը լաւ վարուիլ: Բայց անա կը սկսի ինքնիրեն մտքեր յղանալ, այս անպիտան սեղանաւորը: Կ'ուզէ հե-

տըս ամուսնանալ: Ամէն տեղ կը հետեւի մեզի, բանի մը առջեւ կանգ չ'առնէր, եւ խեղճ հայրս քաջութիւնը չունի զայն ետ մղելու: Հիմա չենք գիտեր՝ ինչպէս ձերբազատուիլ անկէ:

— Այս ալ գործին մաս կազմելու է, անգամ մը զանոնք փետրատելէ ետք, մարդոցմէ ձերբազատուիլը...

— Բայց ինչ անգուր ի՞նչ, սրբան շար, վերսկսու աղջիկը եւ ցատումնալի ձայնով մը՝ — կընայ ետեւէս գալ, շարունակեց, կը նախընտրեմ կտոր-կտոր ըլլալ քան թէ ամուսնանալ տղ... այդ շարժումն դրամարկդին հետ, մարդու այդ մնացորդին հետ: Ես այլեւս չափահաս եմ, կ'ամուսնանամ որու որ հաւանիմ... որու որ սիրեմ... ի՛նչ:

— Լաւ կ'ըլլար որ այս ամէնը ըսէիր իրեն, մէջ բերի ես:

— Անկասկած որ ըրած եմ, պատասխանեց ջղայնութեամբ. նախ հասկցուցի որ կը սխալի իմ նկատմամբ: Բայց որո՞ւ կ'ըսես, դու՛ւք է իր ամենցածը. դանձանակ է հաստատայ, հսկայ մէկ դանձանակ որ ականջ ունի միայն դրամի համար:

Յետոյ՝ աչքը աչքիս դամած՝

— Պիտի օգնե՛ս ինծի, չէ՞, աղերսեց, ըսէ՛ որ կ'ուզես օգնել, կ'ուզես գիտ փրկել այս անգղին մագիլներէն:

— Բայց ինչո՞ւ ես, բողոքեցի. եւ յետոյ չեմ գիտեր թէ ինչպէ՞ս...

— Ահա թէ ինչպէս, վերսկսաւ Լէյլա, որդեւորութեամբ: Ամէն ինչ ըրի զայն վստելու համար բայց ի զուր: Հիմա ես աւ դուն միտսին պիտի զգուցընենք զինք, պիտի նուաասացնենք, պիտի ծանակենք եւ վստահ եմ որ օճիքս թող պիտի տայ անմիջապէս որ տեսնէ թէ ընտրած եմ ուրիշ մը իբր նշանած... Կ'ընդունիս, չէ՞: Ահ, ըսէ՛, ըսէ՛ որ կ'ընդունիս:

Ահապէս մըն էր կարծես, օգնութեան կանչ մը, եւ այդ ալ այսքան երիտասարդ, այսքան գեղեցիկ աղջկայ մը կողմէ: Պիտի ուղէի ճանչնալ այն տխմարը որ կարենար մերժել այս օգնութեան կանչը:

Եւ, ի վերջոյ, պարզապէս զեր մըն էր ինձմէ խնդրուածը, զեր մը միայն ու այդ ալ շատ կարճ ժամանակի մը համար: Մնաց որ (խօսքը մեր մէջ) պատարաստ էի այդ զերը ստանձնել նոյնիսկ... իրականութեան համար, նոյնիսկ երկար, լաւ երկար ժամանակի մը համար:

Եւ յետոյ, այս արձակուրդս... Պէտք էր օգտուիլ անկէ այս նաւը զիս Պէյրութ չհասցուցած: Որովհետեւ այդ պարագային... որովհետեւ արկածախնդրութիւններու շատութենէն չէ որ կը առաւապի պաշտօնեայ մը: Որովհետեւ առատ չեն անոնք իր կեանքին մէջ, նոյնիսկ եթէ կեղծ նշանածի զեր մը ըլլայ:

Եւ իրիկունն իսկ, ճաշարանին մէջ՝ առաջին տեսարան, առաջին արար: Լէյլան կը ներկայացնէ զիս իր ծնողքին: Պարոն Ալեքսանտրը միշտ հոն է, ներկայ: Իսկ ես անշուշտ Ալֆոնս եմ միշտ, հին, երանելի միակ մէկ օրուայ վաղեմի ընկեր: Հաճոյք մը չէ ինձի համար իմ անունս սա խեղճուկ Ալֆոնսին տակ ծածկելը, բայց ի՞նչ ընել, ընդունած եմ արդէն զեր մը կատարել եւ անգամ մը բեմին վրայ՝ ալ անձագրերը ոչ մէկ բանի չեն ծառայեր:

– Ի՞նչ են մեր բարեկամ պարոնին զրազումները, կը հարցնէ հայրը առանց զիջանելու խօսքը ուղղակի ինձի ուղղելու:

Արազ հաշուելու մէջ երեք վարպետ չեմ եղած, ոչ ալ կրնամ պարծենալ պատրաստարան մը ըլլալուն, բայց կայծակի արագութեամբ չելլեմ չգտնեմ որ սա հսկայ պանքէրին ու հսկայ միւս գործատէրին միջեւ տեղաւորուելու արժանի միակ տիտղոսը Տնօրէնի տիտղոսն է:

– Տնօրէն, ինչի՞ տնօրէն:

Դիւրին գոհացող չեն այս երկու մարդիկը: Բայց որովհետեւ ծերուկը միշտ կ'անտեսէ զիս եւ հարցումները կ'ուղղէ աղջկանը միջոցաւ՝ ես ալ դժուր եւ դարձեւ առաստաղին ու կը պոռամ ամբողջ ձայնովս:

– Գործարանի՛ տնօրէն:

– Բայց ինչի՞ գործարան, վրայ կը բերեն գործարանատէրն ու սեղանաւորը:

– Փլասթիքի՛, վլասթիքի՛: Փլասթիքի գործարան:

Ի՞նչ գիւտ, չէ՞: Կատակ չ'ըլլար փլասթիքի հետ: Մերուկն ու սեղանաւորը իրար կը նային ասլած: Համոզուած են այլեւս: Թող երթան տեսնեն, զրպանս զրի երկուքն ալ, մաքուր ըրի զիրենք: Կ'ընթերենք: Դպալ առ դպալ կը ճաշակեմ տակաւին տաք ատելութիւնն ու հագիւ ջողարկուած արհամարհանքը երկու խօսակիցներուն, սեղանաւորին ու գործարանատիրոջ: Դժուար կը հանդուրժեն իմ ներկայութեանս, մանաւանդ սեղանաւորը որ կարծես բարկութեանն պիտի ճայթի: Զարմանալի է սակայն, որքան անխորտիկ համ մը ունին այս ձեռի թշնամութիւնները երբ արձակուրդի մէջ ես ու երբ մանաւանդ զեր ես ստանձնած զանոնք գրգռելու համար: Միայն մայրն է որ ծայրագոյնս տեսելութիւն մը չի ցուցարեւրել իմ անձիս հանդէպ: Իր նայուածքները առատ ներողամտութիւն մը կը վկային ինձի եւ տակաւին չես գիտեր լուռ ու զաղտագողի ինչ տեսակ դաշինք...

Մինչ մենք կ'ընթերենք՝ հեռուէն կը հասնին մեզի հոգեզմալ երաժշտութեան մը ընդհատ Յօքերը: Լէյլա կը խլտի, տեղը չի կրնար նստիլ եւ ձեռքէս քաշելով դուրս կը տանի զիս, վերջին պատուր տակաւին կուլ չառած:

Որախճանքը վարը, կամրջակին վրան է: Արձակուրդէ դարձող խումբ մը ուսանողներ են: Անոնցմէ մէկը տեսակ մը կիթառ կը ճոճոցնէ, ուրիշ մը ագլափափէ կը նուագէ իսկ երբորդ մը դատարկ շիշերու դէմ կը պայքարի: Իրենք երեքով, դժոխքի աղմուկ մը կը բարձրացնեն որ կարող է պարի հանել ծովը ամբողջ իր բնակիչներով:

Կան նաեւ քանի մը պարող զոյգեր: Ծարժումով մը մեկ ալ սպարի կը հրաւիրեն: Մեր ալ ուղածը ուրիշ բան չէ արդէն: Կը սկսինք պարել:

Վայրկեան մը ետք, կամրջակին վր-

բայ կ'ուրուագծուի անմրցելի կերպարանքը նշանաւոր մեր սեղանաւորին: Անօթի եւ իր որսը կորսնցուցած զազան մը կարծես: Եւ ուրեմն՝ երկրորդ տարբեր, պատկեր երկրորդ...

— Մօտեցի՛ր, սեղմուէ՛ր ինծի, կ'ըսէ Լէյլան հետազոտիչ ձեւեր առնելով, չես տեսներ որ մեզ կը դիտէ, անպիտանը:

Կը սեղմուի, կը փաթկուի Լէյլային, կը ցածիս չափ...

— Բայց ոչ, այդպէս չէ, աւելի մօտ, աւելի ամուր, կը փափայ ահանջիս Լէյլային, կը փակցնէ մարմինը մարմինս, ծեփեցուն շարժումներով, կը փակցնէ այստէս այստէս եւ կը սկսի ծոծրակաւ լսել անպատուած խանդաղատանքով:

— Սեղմէ՛ կ'ըսեմ քեզի, սեղմէ՛ զիս ամուր, չե՞ս տեսներ որ կը դիտէ մեզ, աւելի ամուր, աւելի, աւելի...

— Կը սեղմեմ, կը սեղմուիմ, միշտ աւելի ուժգնութեամբ:

Եւ յայնժամ, ահաւասիկ որ ներսս կը սկսի... երգել, երգել ու պարել միաժամանակ: Իսկոյն կը հեռանամ:

— Բայց ի՞նչ ունիս, ինչո՞ւ այդպէս հեռու կը պահես զուն քեզ, կը ջղայնանայ պարակիցս, տես, պարոն սեղանաւորը աչքը չի հեռացներ մեր վրայէն, մօտեցի՛ր, մօտեցի՛ր, համարելու պէս ըրէ՛ զիս:

Կը սեղմեմ, կը սեղմուիմ, կը զգամ իր մարմինը մարմինս... Տէ՛ր, զրո՞գը տանի, ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ:

Այնքան լաւ կը կատարենք մեր դե-

բը, այնքան միմօտութիւն կ'ընենք որ փերջապէս կը յաջողինք ջղայնացնել խոշոր սեղանաւորը որ պայրոյթով կծիկը կը դնէ:

Գիշերը, խուցիս մէջ, դադար: Ոչ դեր կայ, ոչ կատակերգութիւն: Միայն ես կամ, ես ինծի հետ եւ հետու եմ հըպարտ ըլլալէ, շատ հեռու եմ ուրախ ըլլալէ: Որովհետեւ, ճիշդը ըսելու համար, այս բաները թմբոքած չեն: Ես տակաւին չեմ կըցած... արդիականա-

նալ: Ջարմանալի է՝ ինչպէս ուրիշներ կը յաջողին իրենց զործերը կարգադրել: Կը յաճախեն երիտասարդ աղջիկներու այնչափ ատեն որ հանել թուի իրենց, կը զուարճանան անոնց հետ որչափ կ'ուզեն: Անհաւատալի է սակայն թէ ինչպէս ուղուած պահուած, մէկ անգամէն կը լքեն ամէն ինչ, թէ ինչպէ՛ս կը պրծին, ահաղմուկ ու անվնաս:

Անպէ՛տք նկարագիր մը՝ իմս: Գործըս երբեք չի յաջողիր կիներու հետ: Կան կիներ որոնցմէ կը փախչիմ, որովհետեւ անբան կը զտնեմ զիրենք: Իսկ անոնց որ կը հաւնիմ, անոնք ալ իրենց կարգին կը փախչին ինձմէ, որովհետեւ այս անգամ ես ինքս ալ սարսափելի կերպով անբան կը դառնամ անոնց ներկայութեան: Որովհետեւ երկրորդ հանգիստումէն իսկ զիրենք սեփականացնելու ցանկութիւններ կ'ունենամ, յաւիտեան ինծի պահելու համար: Եւ այն ատեն... այն ատեն ջրհեղեղն է, մէկը այն ջրհեղեղներէն որոնցմէ փրկուիլ չկայ:

Ժ. Թ.

(Վերջը յաջորդով)

?

ԴԵՒ

ԱՇՆԱՆ ԳԱԶԵԼ

Հողմատատան ծառերին աշուն է իջել,
Մազիկներին ու ջրին աշուն է իջել:

Թռչնել են կանաչները ու խամրել միգուս,
Արեւավառ գոյներին աշուն է իջել:

Մազիկները գլխահակ արտասում են լուռ,
Գարնանածին բոյրերին աշուն է իջել:

Խալ կռիմյով թեւածող սգաւոր ու ռել
Ագռաների թեւերին աշուն է իջել:

Շուրջը դալուկ, շուրջը պաղ ու շուրջը ճմշող,
Սրտաբեկ իմ յոյզերին աշուն է իջել:

Ու թախծոտ եմ ու անշուք երգերս հիմա,
Նրգերիս ջինջ լարերին աշուն է իջել:

ՊՈԷՏԻ ՎԻՇՏԸ

Գորշ է օրերի շղթան, գորշ է թախիծը դեմքին,
Պաւտի վիշտը հիմա էլ ո՞վ, էլ ո՞վ կ'իմանայ,
Թէ ինչո՞ւ է յացացնում արեւավառ իր հոգին,
Թէ ինչո՞ւ է թափառում փողոցներում հիմա նա:

Ո՞վ, ո՞վ հիմա կ'իմանայ, տազնապալի օրերում,
Թէ ինչո՞ւ է այն կեանքում անհունօրէն նա տրտում,
Թէ ի՞նչ յոյզեր են հիմա նրա հոգին օրորում,
Թէ ի՞նչ ունի նա պահած աստեղափայլ իր սրտում:

Պաւտ, լուսէ գալիքի շողը մեռաւ քո հոգում,
Եւ ի՞նչ յոյսով, ի՞նչ յոյսով, ի՞նչ պէս ու ե՞րբ կը գայ նա.
Պաւտ, հոգիդ փոթաբիկ – ծիածա՛ն է երկնքում,
Պաւտ, դրա՛խտ է հոգիդ, քայց ո՞վ, ո՞վ կ'իմանայ...

Թեհման

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Դ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ Ը

(ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐ)

ԳՈՐԾՈՂՆԵՐ

ԴԵՂԱԳՈՐԾԸ
ՄԻՄՈՆ (օգնականը)
ՄՈՒՐԱՑԿԱՆԸ
ԾԵՐՈՒՆԻՆ
ՕՐԻՈՄԱՆԸ
ԳԵՐԸ
ՆԻՀԱՐԸ
ԱՆԱՄԱՍԻՐ ԿԻՆԸ
ԻՄԿՈՏ ԿԻՆԸ
ԱՌԱԽ-ՓԱՆԱԻԸ
ԱՐԵՐԻԿԱՀԱՅԸ
ՇԱՄԻՐԱՄ
ՍԱՐԱՓԱՀԱՐԸ
ՆՊԱՐԱՎԱՃԱՌԸ
ԳԻՆՈՎԸ

(Տեսարանը կը ցերեպայցնէ համեստ դեղարան մը):

Ժողովուրդին կողմէ դիտուած՝ աջ կողմի կեդրոնը կը գտնուի մուտքի դուռը: Իսկ ձախ կողմի կեդրոնը կայ դռնակ մը, առջեւն ալ երկար սեղան մը: Աջ կողմի վերին անկիւնն ալ երկար սեղան մը: Աջ կողմի վերին անկիւնն է քէսը, իսկ ձախ կողմի առաջամասը կը գտնուի կշիռը: Խորը կամ քանի մը արձաններ, նաեւ սանդուխ մը, վեր բարձրանալու, դեղեր առնելու համար: Խորքի եւ ձախակողմեան պատերը լեցուն են դեղերով:

Յետ միջօրէ է: Բեմին վրայ է դեղագործը, որ հաստ ու համակընդի տիպար մըն է, եւ ձեռքերը կը շփէ ու կը սպասէ յաճախորդի: Հագած է զգեստին վրայէն՝ սպիտակ ու երկար շապիկ):

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ԴԵՂԱԳՈՐԾԸ ԵՒ ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

(Մուրացկանը դեղարանէն կը մտնէ, աւելն կախած տապրակ մը)

ԴԵՂԱԳՈՐԾԸ.— Ի՞նչ կ'ուզես...

ՄՈՒՐԱՑԿԱՆԸ.— Ուտելիք բան մը... Հետն ալ խմելիք բան մը...: Երեք օր է որ բան մը չեմ կերած ու խմած: Ստամոքսիս լինը ցամքած ու եղած է ճահիճ: Աղիքներուս դեղին մէջն ալ հոգ կը հոսի:

Դ.— Դժբախտաբար, հոս տուն չէ, նպարաւանդատունն ալ չէ, ճաշարան չունի՝ ան ալ չէ, խոզիկէն վաճառող բընաւ չեմ, հացադործ երբեք չեմ եղած, գինեպան անգամ չեմ:

Մ.— Մեղք: Խմելիք բան մըն ալ չունի՞ս:

Դ.— Եթէ երկու օր ետքը դոս, թէ՛ սուտիլիք, թէ՛ խմելիք կրնամ առալ քեզի:

Մ.— Ի՞նչ պիտի ըլլայ ուտելիքս, ի՞նչ պիտի ըլլայ խմելիքս...

Դ.— Երկուքը մէկ պիտի ըլլայ. պընակ մը ապուր:

Մ.— Բո՛ւհ... Ատիկա ուտելիքներուն ամէնէն անհամն է ու խմելիքներուն ամէնէն անհամը: Ապուրը... Ապուրը... Եւ ան ալ երկու օր ետքը... Ապուրը հիւանդի ուտելիք ու խմելիք է:

Դ.— Մի՛ մոռնար որ ախտեղ դեղարան է:

Մ.— Գիտեմ, շատ քաւ գիտեմ: Գիտեմ նաեւ որ դեղարանին մէջ ալ թեծի

յարմար խմելիք կայ: ազանդեր անգամ կայ:

Դ.— Ո՞րն է խմելիքը, եւ որո՞նք են ազանդերները:

Մ.— Գաւաթ մը իննսուն աստիճան աւել տուր, հետեւ ալ քանի մը հաստ a, b, c:

Դ.— Աւելորդ արդիւնած է առաւ: Իսկ a, b, c-ն ի՞նչ է...

Մ.— Վիթամին: Ե՞ն Քեղի պիտի սորվեցնեմ:

Դ.— Դուքն պէտք չունիս վիթամիններու: Քաջառողջ ես:

Մ.— Բայց անօթի եմ:

Դ.— Միակ միջոցը առողջ մնալու: Ամէն շաբաթ կը ծնի ուտելէն ու խմելէն:

Մ.— Դուքն ինչո՞ւ չես հետեւիր այդ միջոցին, որուն ես կը հետեւիմ ակամայ...

Դ.— Ես ալ կ'ուտեմ ու կը խմեմ ակամայ:

Մ.— Գոնէ շաբաթը մէկ օր ծոմ պահելու ես, քո՛ւ առողջութեանդ համար: Ու շաբաթը մէկ օր ուտելիքդ ու խմելիքդ ինծի տալու ես, ի՞մ առողջութեանս համար:

Դ.— Ժամանակ է որ կտուգէ քեզ:

Մ.— Ես կտաք չունիմ որ քչեմ: Ես կը Լանամ էչս քչել:

Դ.— Սանձէն քաշէ ու քչէ: Դուք քաջ մարդ ես, դուն յուսահատող չես:

Մ.— Քաջութիւնս ու յուսահատող չըլլալս անկէ յայտնի է որ քննէ ողորմութիւն կ'ուզեմ: Քեզի պէս անխիղճէն, Ամբողջ թաղին մէջ պիտի ըսեմ՝ ինչքան անողորմ ըլլալդ, որպէսզի ո՛չ ոք առուտուր ընէ քեզէ:

Դ.— Եթէ ատանկ բան մը ընես, քեզի դէմ դատ կը բանամ ու քեզի բանար կը նետեմ:

Մ.— Կ'աղաչեմ որ ըսածդ ընես: Ինծի համար իտէալ կեանք մը կը ստեղծես: Բանալ, ինծի համար թէ՛ մրի պանդոկ է, թէ՛ մրի ճաշարան, թէ՛ մրի գրասարան: Անշուտ երեք-չորս օրը անգամ մը կ'այցելես ինծի, հետդ բերելով չորս-հինգ տուփ ծխիկ: Իմ ծխածս կըլ-

ուագ է, կ'ապոյտը: Ամէնէն աժան ծխիկը:

Դ.— Ամէն օր կ'այցելեմ քեզի:

Մ.— Ամէն օր, ատ հիւանդի դէմքդ տեսաւ չեմ ուզեր: Զորս-հինգ օրը անգամ մը՝ բաւական է: Բայց ամէն մէկ դաշուղ մոռնալու չես հետդ բերելու շաբաթական ծխիկիս պաշարը:

Դ.— Կը բերեմ նաեւ երկու չիչ պիւրի:

Մ.— Կ'աղաչեմ, ատանկ բան մի՛ ընէր: Շատ ծանր կ'ըլլայ ու կը հիւանդանաս, ու ես ծխախոտէս ալ կը զրկուիմ: Ատանկ բան չընես: Ես կը գոհանամ ծխիկներով: Մնաս բարի ու ցտեղ սուրբիս:

Դ.— Դուքն վա՛ղը եկուր:

Մ.— Վաղն ալ ուշ է: Մի՛ մոռնար որ այս թաղին մէջ, շատ մը խանութներու փակուելուն, ու շատ մը խանութներու բանկուն պատճառը ե՛ս եմ:

Դ.— Այս իրիկուն եկուր:

Մ.— Ինչո՞ւ աւելորդ տեղը յոգնիք երկուքս ալ: Դուքն ինծի ամսական տասնոց մը տուր, ես ալ քու ռէքլամդ ընեմ, ամէն օր: Արդիւնքը շուտով կը տեսնես:

Դ.— Ա՛ռ (կու տայ):

Մ.— (Աջ ձեռքի ցուցամատը ֆակտիմ կը տանի ու դուրս կ'իյլէ այրացօրէմ)

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը և Ծերունին

Ծեր.— (Շնչարգելաբէնէ կը տառապի) Դեղ մը ինծի, ազդեցիկ դեղ մը շնչարգելութեանս համար: Մանկ հրաշք դեղ մը կա՞յ...

Դ.— Դեղագիր չունի՞ք...

Մ.— Դեղագիրին խերը անիծեմ, Դեղ մը տուէ՛ք:

Դ.— Դժբախտաբար, առանց բժիշկի մը դեղագիրին, դեղ չեմ կրնար տալ:

Մ.— Բժիշկին խերը անիծեմ, Դեղ մը տուէ՛ք:

Դ.— Ընկերային ապահովութիւն չունի՞ք:

Մ.— Ընկերային ապահովութեան խեղճը անիծեմ: Դեղ մը տուէ՛ք:

Դ.— Նախ՝ հրաշք դեղ գոյութիւն չունի, չնչարդելութեան համար: Դեղեր կան, բայց չեմ կրնար ըսել թէ՛ ձեր պարզային ո՛րը պէտք է: Բժիշկը անգամ չի կրնար ըսել, առանց ռատիոլոկին:

Մ.— Ռատիոլոկին ալ խեղճ անիծեմ:

Դ.— Շնչարդելութեան համար որեւէ դեղ պէտք է վեց ամիս կամ տարի մը շարունակութիւն, օրական չորս—հինգ անգամ: Երեւակայեցէք թէ ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը, եթէ վեց ամիս կամ տարի մը սխալ դեղ տայ ձեզի դեղագործը:

Մ.— Դեղագործին ալ խեղճ անիծեմ: Մնաք բարի:

Դ.— Ամէն բանի խեղճ անիծեցիք: Դեղին ալ, ձեր կեանքին ալ խեղճ անիծեցէք, որ կատարեալ ըլլայ: Ձեր շունը՝ զժողովին մէջ տէք: Ձեզի պէս հիւանդին ալ ես խեղճ անիծեմ:

Մ.— Ձէք կրնար, որովհետեւ խեղճ արդէն անիծուած է: (Կ'ըրթայ):

Դ.— Սա սղօտիկ դեղարանէս՝ մարդկութիւնն է որ կ'անցնի իր ջաւազարեհորով, տկարներով ու տխմարներով:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը եւ Օթիմանը

Օթ.— (Կէս մը յիմարացած տիպար մը) Կ'ուզեմ ունենալ շիւ մը էլիքսիւր Բալեկորիք:

Դ.— (Սրտակ մը ներկայացնելով) Ահա ապրիկ:

Օ.— Այդքան քիչը ի՞նչի կը ծառայէ: Ես պիտի ճամբորդեմ: Յաճախ տապահալ կ'ունենամ: Ինծի լիթրանոց շիւ մը պէտք է:

(Այդ պահուն, դիզերաւ տատապանքով պարապող Սիմոնը դուրս կ'ելլէ գոմակէն, ու կը գրադի գործով մը):

Դ.— Պարոն, իրաւունք չունինք վաթսուն անթիմիթոց այս սրտակէն աւելին ծախելու:

Օ.— Գոնէ՛ առանկ սրտակ տուէ՛ք:

Դ.— Ինչպէ՞ս ըսի, մէկ սրտակէն աւելի տալու իրաւունք չունիմ:

Օ.— Դուք պարտականութիւն ունիք՝ մարդոց ցաւերը մեղմացնելու, նոյնիսկ անհետացնելու: Մինչդեռ դուք մարդոց ցաւերը կ'աւելցնէք, նոր ցաւեր կը ստեղծէք:

Դ.— Մենք կը շարժինք, ըստ կառավարական հրահանգի:

Օ.— Կառավարութիւն, կառավարութիւն... Ո՛ւր որ դառնաս՝ դէմդ կը կարկառուի կառավարութիւնը... Կառավարութիւնը թո՛ղ կառավարէ ինքիներէ... Ինծի պէս մէկը պէտք է որ կառավարութիւնը կառավարէ... Ինչո՞ւ կառավարութեան զերին եղած էք... Այն՝ ժանապարհութիւն չունի՞ք, պատիւ չունի՞ք, ծանրութիւն չունի՞ք, բարձրութիւն չունի՞ք, մեծութիւն չունի՞ք, հեղինակութիւն չունի՞ք, ապաստարի հոյի՞ք ալ չունիք... Ուրեմն օտարեկներ էք... Ամօ՛թ, ամօ՛թ...

Դ.— Կը խնդրեմ որ ձեր ճառը, ճառացեալ պատրաստէք, ու խօսիք երեսփոխանական ժողովին, ծերակոյտին, նախարարաց խորհուրդին կամ բժշկական տարեկան համագումարին մէջ:

Օ.— Ամէնուն ալ խեղճ անիծեմ: Պիտի ջնջեմ այդ բոլորը երբ ես անխիտապահանս՝ դառնամ տիկտաթէօր: Իբր թէ կ'ապրինք ազատութեան մէջ, ու դեղ խլամելու, դեղ կլլելու ազատութիւն անգամ չունինք:

Դ.— Դիմեցէք բժիշկի մը, ու ստացէք դեղագիր մը:

Օ.— Պիտի ջնջեմ բոլոր բժիշկները, որոնք կ'ընծ գառնուկներ են կառավարութեան տղեւ, ու իրական գազաններ են հիւանդներուն հանդէպ:

Դ.— Փոխանակ հոս ժամանակ կորսնցնելու, դացէք ու ձեր ճառը պատրաստեցէք:

Օ.— Ի՞նչպէ՞ս կրնամ ճառս պատրաստել, երբ չունիմ մէկ լիթր էլիքսիւր Բալեկորիք:

խորհէն, այլ աշխարհն է որ պիտի հեռանայ մեզմէ։

Ս.— Հաշիւը նոյնն է, վարպետ։

Դ.— Հաշիւը ըսիր ու միտքս ձեռքերէ։ Այսօր դեռ անճ մը անդամ չեմ բռնած։

Ս.— Դեռ օրը իրիկունն չէ հղած։ Եթէ թոյնները արդիւում չըլլային, քիչ առաջ լիթրա մը էլիքեր խալկորիք ծախած կ'ըլլայինք։

Դ.— Անմիտ օրէնք։ Ատեն մըն ալ դիմեպաններուն արդիւում էր՝ միեւնոյն անձին վրայ վրայի տալ տաղտոսներկու բաժակ ըմպելի։ Գինեմուշներն ալ շրջապառլա մը կ'ընէին երկու-երեք փողոցներու մէջ, ամէն մէկ դինն-տունէ ըմպելով չորս-հինգ պաւաթ ըմպելի։ Գինետունն ալ դեղարանի պէս մեծ կայարան մըն է, ուր կ'երեւին մարդկային տիպարներ։

Ս.— Գինետան մէջ չեն երեւիր հակալքողականներ։

Դ.— Դուռն ալ հակալքողականները մարդու տեղ կը գնեն։ Հակալքողականները գերեզմանատունի ծառեր են, չորացած տեսակէն։

(Սիմոն կը ֆաշուի մերս)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Գէրը, Նիկարը

Գէր՝ Բարեւ, պարոն։

Նիկար՝ Պարոն, բարեւ։

Դ.— Բարեւներ, պարոններ։ Միասին էք...

Գ.— (Արիւմարիւմով մայիլով մի-հարիմ) Ո՛չ, պարոն, ես անոր հետ չեմ։

Ն.— Աւելի ճիշդը՝ ես է որ անոր հետ չեմ։ Դիպուածով իրարու հետ ներս մտանք։

Դ.— Բայց ո՞րքան կ'ուզէիք ինծի պէս ըլլալ։

Ն.— Գիրանալ այո՛, բայց ոչ թէ ուսիլ օղապարիկի մը պէս։

Գ.— Ես ալ կ'ուզեմ նիւարնալ, բայց ոչ կմախք դառնալ։

Դ.— Պարոններ, այստեղ վիճարան

չէ, այլ դեղարան։ Ըսէք թէ ի՞նչ կը փափաքէք։

Դ.— Ես իմ մասին խօսելով՝ կը փափաքեմ նիւարնալ, բայց շնորհով նիւարնալ։ Մինչեւ հիմա դոյութիւն ունեցող նիւարցնող բոլոր դեղերը դործածած եմ, նիւարցնող բոլոր միջոցները զործողութեմ եմ։ Անօգուտ։ Նիւարցնող բոլոր դեղերով ու բոլոր միջոցներով ոչ միայն կրամ մը չեմ նիւարցած, այլ ասկի դիրացած եմ։

Դ.— Ձեզի կը մնայ՝ վերանալու դեղերը դործածելու։ Գիրանալու միջոցները դործադրել, նիւարնալու համար։

Դ.— Ես պէտք ունիմ նոր, նորագոյն, ամենանոր դեղի մը կամ միջոցի մը։

Դ.— Դադրեցէ՛ք ուսեկէ։

Դ.— Այդ մէկն ալ փորձեցի ու շատ աւելի դիրացայ։

Դ.— Ձեր փորձը պակասաւոր էր։

Դ.— Ի՞նչ ընեմ, ի՞նչպէս ընեմ...

Դ.— Վայրկեան մը։ (Դառնալով մի-հարիմ) Եթէ չեմ սխալիք դուք ալ դիրանալ կ'ուզէք եւ աղքատ էք։

Ն.— Ընդէ՛ք է՝ կ'ուզեմ դիրանալ թէ՛ քսակով, թէ՛ մարմինով։ Քսակս մարմինէս աւելի նիւար է։ Մարմինս նիւարախոս ունի, իսկ քսակս՝ հիւծախոս։

Դ.— (Գէրիմ) Ահա միակ միջոցը թէ՛ ձեր նիւարնալուն, թէ՛ այս անտառի գիրանալուն։ Ձեր տունը հրաւիրեցէք այս հէքը, մէկ ամսուան համար, ու անոր կերցուցէք ու կերցուցէք, քանի որ ձեր արտաքինէն դատելով՝ դուք քսակով ալ դէք կ'երեւիք։ Անոր կերցուցէք, բայց դուք մի՛ ուտէք, որպէսզի անոր ուտելը ու դիրանալը աւանելով՝ դուք հալիք, հատնիք, մրկիք, մաշիք ու նիւարնալ։ Իսկ եթէ կծծի էք, աւելի լաւ ասկի շատ ու աւելի շատ կը մրկիք, կը մաշիք ու կը նիւարնալ։

Ն.— Եւ առաջին անգամ ըլլալով՝ կծծի մը, իր մահէն առաջ, օգտակար կ'ըլլայ թէ՛ ինքզինքին, թէ՛ ուրիշին։

Դ.— Այսինքն ես պէտք է մրկիմ, մաշիմ, մարիմ ու մեռնիմ, որպէսզի այս կմախքը հաղուի արիւն, ճարպ ու միս։

Դ.— Այդ է նոր, նորագոյն, ամենա-

նոր ու հանճարեղ միջոցը: Ձեք այլ հը-
նարք: Իսկ ձեր գիրուկիւնը մայրն է ա-
մենայն շարեաց: Մահը իր մանգաղով
առաջին անգամ կը հարուածէ անո՛նք,
որոնց փորը զլծէ դուրս է կտրկառուած:

Գ.— (Նիհարին) Դուն քանի՞ պնակ
կերակուր կրնաս լակել, մէկ ճաշի ըն-
թացքին:

Ն.— Թէեւ մինչեւ ութ-տասը պնակ
կ'ուտեմ, բայց կը դռհնամ վեց-եօթը
պնակով, եթէ զոնէ երեք պնակը առատ
մսեղէն ըլլայ:

Գ.— Վա՛յ ուտող ուրացող:

Ն.— Բայց կերած չեմ, որ ուրանամ:
Կրնամ ուտել, եթէ ըլլայ: Եւ կ'ուտեմ,
առանց ուրանալու:

Գ.— Կրողս կեր:

Ն.— Կրողդ չէ, բայց կողերուդ,
կուրծքիդ ու կախուած մտերուդ միտե-
րը կ'ուտեն...

Գ.— Աւելի փափուկ մասերս ալ ան-
տես մի՛ առնէր:

Ն.— Ես հիւր պիտի ըլլամ տանդ մէջ:
Ինչեր որ հրամցնես, կ'ուտեմ անտը-
տունջ: Սակայն, հրամցուցածներդ քե-
զի պատիւ բերելու են, ինծի ալ՝ նը-
պաստ:

Գ.— Պատուական պատասխան: Ալ
հեռացէք, հանգչեցէք սրճարան մը ու
համաճայնեցէք: (Երկուքին կանգնելն
հրելով՝ կ'ազդէ դէպի դուռը, ըսելով)
Ես ո՛չ միայն դեղ, այլ գազափար ծա-
խող եմ: Ձեզի տուի հանճարեղ գազա-
փար մը: Եթէ դործադրէք հնարամտու-
թիւնս, պարկշտօրէն ինծի վճարելու էք
յիսուական ֆրանք: Դուք երկուքդ ալ
պիտի օգտուիք, ես ալ օգտուելու եմ:
Դեղարանը գառնալ կ'ուղէ:

Գ.— Թէ՛ կմախքի զարդանկարիչ ըլ-
լալ, թէ՛ դրամ վճարել:

Ն.— Թէ՛ ճրիօրէն ճահիճ մը ցամքե-
ցընել, թէ՛ նախատուիլ անգագար: Ի՞նչ
աղտոտ ճակատադիր: (Կ'ելլեն)

Գ.— Մեկնեցէք, բայց մի՛ մոռնաք
ըսածս:

ՎԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը եւ Առասնաւեր Կինը

Ա.Ա.Ս. ԿԻՆԸ.— Բարեւ, պարոն դե-
ղագործ: Կռեցէք զիս, եթէ կը հաճիք:
(Կը քարձարանայ կշիռին վրայ)

Դ.— Ճիշդ ու ճիշդ վաթսուներեք
քիլօ: Արձանագրե՛մ թուականով, Բըղ-
թիկի մը վրայ:

Ա. Կ.— Օ՛, ո՛չ: յիշողութիւնս դո-
րաւոր է:

Դ.— Աւելցած էք, թէ պակասծ էք...

Ա. Կ.— Օ՛, չեմ յիշեր թէ քանի՞ քի-
լօ էի, շարաթ մը առաջ: Ի՞նչ կը պար-
տիմ...

Դ.— Օ՛, ոչինչ, տիկին, ոչինչ:

Ա. Կ.— Վաղը Մարթէնս ալ բերեմ,
որ կռէք: Բայց պէտք է վճարեմ:

Դ.— Քանի՞ տարեկան է ձեր Մար-
թէնը:

Ա. Կ.— Երեք տարեկան, չնիկ է:

Դ.— Ա՛, ձեր չնիկն է:

Ա. Կ.— Աղնուական է:

Դ.— Ձեմ զարմանալ: Աղնուականու-
թիւնը անասուններուն մնացած է:

Ա. Կ.— Շատ ճիշդ է: Իրաւունք ու-
նիք: Մարդիկը ոսկկացած են: Լաւ յի-
շեցի. շատ անուշահոտ տանթիֆրիս մը
ունի՞ք: Հոգ չէ, թո՛ղ սուղ ըլլայ, բայց
շատ անուշահոտ ըլլայ: Միեռեք հա-
մար է:

Դ.— Ա՛ն ալ շուն է:

Ա. Կ.— Ո՛չ, ան կատու է: Բայց ան
ալ աղնուական է: Հնդկաչիհցի աղնուա-
կան է: Սխմցի քրմապետի կը նմանի:
Կապոյտ աչքեր ունի:

Դ.— Ահաւասիկ աղնիւ ու շատ հո-
տաւէտ տանթիֆրիս մը ձեր աղնուական
Միեռին համար:

Ա. Կ.— Ի՞նչ կ'արժէ... (Կ'առնէ)

Դ.— Երեքուկէս ֆրանք:

Ա. Կ.— (Կը վճարէ) Ահաւասիկ:

Դ.— Մեռտի:

Ա. Կ.— Օր մըն ալ Միշօս պիտի բե-
րեմ:

Դ.— Միշօն ի՞նչ է... կապի՞կ է...

Ա. Կ.— Կապիկ չէ, բայց կապիկի պէս սիրուն է: Ձաւակս է:

Դ.— Ա՞ն ալ ազնուական է:

Ա. Կ.— Դժբախտորար ոչ. սակայն կ'ազնուանայ, խաղալով ազնուական շան մը ու ազնուական կատուի մը հետ:

Դ.— Ի՞մ կողմէս հաճեցէ՞ք համբուրել ձեր Մարթէնը, Մինուն ու Միշօն:

Ա. Կ.— Մէյ մէ՞կ անպամ:

Դ.— Տասնական անգամ, եթէ չէ՞ք յազնիր:

Ա. Կ.— Ե՞ս յազնիմ համբուրելով Մարթէնս, Մինուն ու Միշօն...

Դ.— Վաղը երբոր Մարթէնը բերէ՞ք՝ անձամբ կը համբուրեմ:

Ա. Կ.— Այն ատեն, ես ձեզի կը համբուրեմ:

Դ.— Ի՞նչ ես ե՞րբ կրնամ համբուրել ձեզ...

Ա. Կ.— Բայց հիմա, անմիջապէս: (Կը մօտենայ ու շրթները կ'երկարէ: Դեղագործը ուժգնօրէն կը համբուրէ: Կիմը ծիծաղելով կը թելէ դուրս)

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը ու Սիմոնին Ձայնը

Դ.— Սիմոն, արձանագրէ: Երեքուկէս ֆրանք եւ համբոյր մը: Դեղարանէս կ'անցնին մարդոց բոլոր տեսակները.— սոխակները, մեխակները, կաշաղակները, թուխակները, տատրակները:

Ս. Ին ՁԱՅՆԸ.— (Ներսէն) Ծուշակները մոռցաք, վարպետ:

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը եւ Մսկատ Կիմը

Ս. Կ.— Պարոն դեղագործ, այսօր քալելու անգուստ փափաք մը ունէի, ու այս կողմերը ինկայ: Բնաւ եկած չէի այս թաղը: Երբ ձեր գեղարանը տեսայ, մտքէս ըսի.— Յաճախ համեստ թաղերու մէջ, կը գտնուին հանճարեղ մարդիկ: Սա դեղարանէն ներս մտնեմ եւ

հարցում մը ուղղեմ: Ձեր պատասխանին համար պատրաստ եմ վճարումի:

Դ.— Մեր պատասխանները, այսինքն խորհուրդները ձերն են:

Ս. Կ.— Կանխաւ կը խնդրեմ, որ ընդունիք վարձատրութիւնս:

Դ.— Լա՛ւ. հաճեցէ՞ք հարցնել:

Ս. Կ.— Ձմեռը իմ սարսափս է: Սառալի կը մօխմ մեռը, չափազանց կը սրբորփամ: Պաղը մինչեւ ծուծերուս մէջ կը մտնէ ու կը մնայ մինչեւ ամառ: Ի՞նչ է պատճառը, ի՞նչ է դարմանը:

Դ.— Պատճառը պարզապէս ձեր քրնքուշ ծաղիկի մը ըլլալն է:

Ս. Կ.— Բայց ջերմանոցի ծաղիկները չեն մօխի: Ես ալ ծաղիկ մըն եմ ջերմանոցի: Ուրեմն ինչո՞ւ կը մօխմ:

Դ.— Դուք տաք երկրի ծաղիկ մըն է՞ք: Եթէ չեմ սխալի մեծահարուստ է՞ք:

Ս. Կ.— Ամուսինս մեծ ճարտարութեամբ մըն է: Ամիսը մէկ միլիոնին դրամ չ'ըսեր: Շատ անգամ կը ճամբորդէ: Ե՛ս է որ բախտ բերի իրեն:

Դ.— Վախճամ բերէ՞ք նաեւ անբախտութիւն: Ձմեռը անցեցէ՞ք Եգիպտոսի մէջ:

Ս. Կ.— Բայց Փարիզէն հեռանալը՝ ինծի համար մեծագոյն գրկանքն է, մանաւանդ ձմեռնային եղանակին: Երբ Փարիզի մէջ չեմ, ապրիլս չեմ զգար:

Դ.— Ուրեմն այս ձմեռ՝ կատաղօրէն պարեցէ՞ք Փարիզի մէջ: Պարեցէ՞ք պրազիլական վերջին պարերը, այսահարի ցնցումներով ու կրակ կը կարէ՞ք:

Ս. Կ.— Կատաղօրէն կը պարեմ արդէն, բայց դարձեալ կը մօխմ:

Դ.— Ուրեմն կատաղօրէն կռուեցէ՞ք, որ ձեր արիւնը շարժի: Մորվեցէ՞ք պոքօ, քաշ եւ ժխտօ:

Ս. Կ.— Միբահարներուս հետ կատաղօրէն կը կռուիմ: Կը կռիահարեմ, կ'ապտակեմ, կը խածնեմ, բայց նորէն կը մօխմ:

Դ.— Կատաղօրէն խմեցէ՞ք:

Ս. Կ.— Բայց դուք մարդարէի պէս անմիջապէս գուշակեցիք քնքուշ, փափուկ, նուրբ ծաղիկ մը ըլլալս: Շատ ալքու վերցնել չեմ կրնար:

Դ.— Այդ պարագային ներսէն ու դուրսէն լաւ հաշուեցէ՛ք: Ներսէն հաշուելու համար, ճարտուտ, շարժուտ ու տեղիքներ կերէք, նսեւ Մալակայի սեւ չամիչ: Իսկ դուրսէն հաշուելու համար, երկու մուշտակ հազէք:

Մ. Կ.— Երկու մուշտակով ու երկու վերմակով ալ կը մսիմ:

Դ.— Ուրեմն երեք մուշտակ ու երեք վերմակ դորձածեցէ՛ք:

Մ. Կ.— Այդ պարագային ալ սաստիկ կը տաքնամ: Ձափազանց տաքն ալ կը նեղէ դիս:

Դ.— Սպասուէ՛րներ ունի՞ք:

Մ. Կ.— Անշուշտ: Սպասաւորներ ալ ունիմ:

Դ.— Ուրեմն երկու մուշտակ հազէք, ու ձեր սպասաւորներէն մէկը՝ երրորդ մուշտակը թո՛ղ ձեր վրայ դնէ ու հանէ, դնէ ու հանէ, դնէ ու հանէ միշտ, որպէսզի երկուքուկէս մուշտակ ունենաք, ջափը դառն ըլլաք, ու ա՛լ չնեղուիք ո՛չ ցուրտէն, ոչ ալ տաքէն: Իսկ ձեր ննջասենեակին մէջ, երկու սպասուէ՛րներ ունեցէ՛ք, որպէսզի երրորդ վերմակը դնեն ու վերցնեն, դնեն ու վերցնեն, դնեն ու վերցնեն միշտ, եւ այդպէս ունենաք երկուքուկէս վերմակ:

Մ. Կ.— Ո՛չ ձեր առաջին ըսածը կարելի է, ոչ ալ ձեր երկրորդ ըսածը: Նախ երկուքուկէս մուշտակով կը դառնամ մուշտակազուռ մը: Ննջասենեակին մէջ ալ երկու սպասուէ՛ր ունենայր անյարմար է, որովհետեւ երբեք առանձին չեմ ըլլար երկու վերմակներու տակ:

Դ.— Խնդիրը կենտոտեցաւ:

Մ. Կ.— Ձեր տուած խորհուրդները խելքի մօտ են, բայց անպատեհութիւններ ունին:

Դ.— Կը հասկնամ: Եւ սակայն, ինչպէս կ'երեւի, դուք քնքուշ ծաղիկ մը չէք, այլ պինդ պտուղ մը:

Մ. Կ.— Պարոն, ես պատիւ ունիմ:

Դ.— Անշուշտ ունիք: Բայց ձեր պատիւը թաղուած է մուշտակներու եւ վերմակներու տակ:

Մ. Կ.— Ձղջիկ ձեր աղտոտ խանութը մտնելու:

Դ.— Դո՛ւք աղտոտեցիք խանութս: Տաքցաք ալ: Միշտ մէկը պէտք է որ ձեր դիմակը վար առնէ, որպէսզի բարկանաք ու տաքնաք:

Մ. Կ.— Ձիղերս քայքայելու դնով տաքնամ, անանկ չէ՞: Որպէսզի բժիշկ ու դեղագործ արիւնս ծծէք:

Դ.— Ընդհակառակն մենք ձեզի արիւն կը ներարկենք: Ատկէ պատ, մարդ նպատակին հասնելու համար, նոյնիսկ թանկագին րաներ կը քանդէ: Այս մէկը ինձմէ լաւ դիտէք:

Մ. Կ.— Հեռանամ ձեր քովէն:

Դ.— Վարձատրութիւնը կը մոռնաք:

Մ. Կ.— Ձեզ չապտակելո՞ւ՝ վարձատրութիւններուն մեծն է:

Դ.— Ձմեռը ձեր տեսակցութիւնը յիշելով տաքցէք: (Կը հեռանայ կիմը, ցուցարարի մը պէս) Գիշ առաջ, համարյա մը պանծեցի, հիմակ ալ քիչ մնաց ապտակ մը պանծէի, Բագուս աղմուկ վասն ոչնչի: Բայց ալ ասիս սաստիկ կը քերուի. այսօր անպատեհաւ շահաւէտ դարձ մը պիտի ըլլայ: (Կը քերէ աջ ավիւր) Ի՞նչ ալ անոյշ կը քերուի: Անոյշ դրամի մը պիտի տիրանամ: (Կրկին կը շփէ)

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, լրագրողը

ԼՐԱԳՐՈՂԸ.— Բարեւ, պարոն դեղագործ: Ես աշխատակիցներէն եմ «Դարմանում» պարբերականին: Կը կատարեմ մեծ անգէթ մը, խօսեցնելով մշտաւորական վերադարձները, բժիշկները, դեղագործները, ռատիոլոկները եւ հիւանդապահներն ու հիւանդապահուհիները: Որոշեցի ոյցելել ձեզի ալ, լսելով որ դուք մտաւորական դեղագործ մըն էք: Ձեր մականունն ու անունը, եթէ կը հաճիք:

Դ.— Ժան Պատմական:

Լ.— Շնորհակալութիւն: (Կը գրէ տետրակի մը մէջ) Հաճեցէք խօսիլ ձեր ասպարէզին մասին, իսկ ես պիտի սղադրեմ: (Կը մտնի) Պատրաստ եմ:

Դ.— (Շրջելով կը խօսի, հետզհետէ)

Դ.— Եթէ շատ սուղ չէ, հաճոյքով կը վճարեմ:

Լ.— Քլիշէներու դինները յայտնի են: Երեսուն ֆրանք:

Դ.— Օ՛, այդքանը բան մը չէ: (Կը վճարէ Երեմ տասնոց)

Լ.— Բաժանորդ էք «Դարմանում» մօրն:

Դ.— Ո՛չ. բայց իմ խօսքերս ու պոետ-կերս գտնուող օրինակէն հաս մը դիկե-ցէք: Հաւանաբար, կը բաժանորդագրու-ւիմ:

Լ.— Հինգ օրինակ կը դիկեմ: Կան-խայտա շնորհակալութիւն: Շատ հա-ժակելի դեղագործ մըն էք: Մնաք բա-րի:

Դ.— Երթաք բարի: Եթէ այս կողմե-րէն անցնիք, հաճեցէք հանդիպել ինծի:

Լ.— Մեծ հաճոյքով: (Կը մեկնի)

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործ Եւ Սիմոն

Ս.— (Սեղանին նստելու ետեւում) Վար-պետ, այդ «Երագործը» պարկը կոխեց ձեզ:

Դ.— Ի՞նչ... Ի՞նչպէս գիտցար...

Ս.— Այդ մարդը լրագրող չէ, այլ խաչագող: Կը հոտէր:

Դ.— Փաստ կ'ուզեմ:

Ս.— «Դարմանում» անունով թերթ մը դոյութիւն չունի:

Դ.— Ինչէ՞ն գիտես:

Ս.— Ես բոլոր բժշկական թերթերուն բաժանորդ եմ: Ընկերս Ալպէրը նոյնպէս: Երբ բժշկական նոր թերթ մը լոյս տես-նէ, Ալպէրը կը բաժանորդագրուի, դիս ալ կը բաժանորդագրէ:

Դ.— Վա՛յ խոյտառակ: Տուած դը-րամէս աւելի, կը ցաւիմ խօսածներուն համար: Կուտ խօսքեր ըրի: Ներշնչուած էի:

Ս.— Եւ երեսուն ֆրանք վճարեցիք: Մարդը հիմա պիտի ըսէ.— «Դեղագործ-ները նպարավաճառներուն չափ ալ աբ-ժէք չունին»:

Դ.— Բայց անկարելի է որ այդ ըն-նորհքով երիտասարդը խաչագող ըլլայ:

Ս.— Բոլոր խաչագողներն ալ շնոր-հալի են, քանի որ կը յաջողին խաչա-գողել շնորհալի կերպով: (Կը քաշուի)

Դ.— Բայց մտաւորական խաչագող մըն էր:

ՏԱՍՆԵՐԿԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Ամերիկացի

ԱՄԵՐԻԿԱՆԻՍԹԸ.— Բարեւ, պարոն Ժան Պատմաժան: Ի՞նչպէս էք...

Դ.— Ի՛, փա՛ռք Աստուծոյ, աղէկ ըսենք որ աղէկ ըլլանք: Անշուշտ ձեզի տեսնելով՝ աւելի աղէկ եղանք:

Ա.— (Ժպտելով) Էս որքան կեղծա-ւոր էք Պոլսեցիներդ: Բայց որքան կեղ-ծաւոր էք, էնքալ ալ՝ համակրելի: Զեյր կիներն ալ էդպէս են. նոյնիսկ բան մը աւելի:

Դ.— Նստեցէք, պարոն Ժոն Արայ-հան:

Ա.— Ո՛ր նստիմ. պոլսեցի կիներո՞ւն վրայ:

Դ.— Խնայեցէք դոնէ պոլսեցի կիներ-րուն: Եթէ անոնց վրայ նստիք ձեր հա-սակին ու լայնքին ծանրութիւնով՝ կը ճզմէք զանոնք: Պոլսեցի կիները որքան ալ լայնատարած ըլլան, սակայն փափ-կասուն են. մինչդեռ դուք տիտան մը, Տորք մըն էք:

Ա.— Էլի պոլսական քաղցր կեղծաւո-րութիւն: (Կը մտնի)

Դ.— Ըսենք որ Պոլսեցի կեղծաւոր է: Կը ճանչնա՞ք ուրիշ տեղացի մը, որ ըլլայ անկեղծ:

Ա.— Հարկաւ կը ճանչնամ:

Դ.— Որտեղացին է այդ Հրեշտակը:

Ա.— Խարբերացին:

Դ.— Ես Խարբերացիները չեմ ճանչ-ցած թէեւ, սակայն դուք անպատճառ Խարբերացի էք:

Ա.— Մեր Ամերիկայի մէջ գտնուող Հայերուն հարիւրին ութսունը հինգը մեր Խարբերացիներն են: Մնացածները ուրե՛ն նըկէ մարդիկ են:

Դ.— Մէկ միլիոն կ'ըլլա՞ն ձեր Ամե-
րիկայի, ձեր Թարբերդցիները:

Ա.— Մի քիչ պակաս են, բայց հա-
զարաւոր միլիոն տալէրնեքու տէր են:

Դ.— Խնդիրը լրջացաւ: Այդ կը նշա-
նակէ որ բազմամիլիոն ձերքու ուժ ու-
նին:

Ա.— Հապա ի՞նչ դիպցա՞ք: Մեր Ա-
մերիկայի մէջ մարդու մը քանի ձիու
ուժ ունենալը՝ իր տալէրներով ու կառ-
քերով կ'ըլլայ յայտնի:

Դ.— Ո՞րք աղպէս չէ հիմա, պարոն
ձոն: Դրամ ունի՞ր. մարդ ես: Զունի՞ր. ա-
ւաւանակէ՞ն դէշ ես: Տաղանդ եղի՞ր, հա-
նար եղի՞ր, նոյնիսկ բժիշկ կամ դեղա-
պարծ եղի՞ր, անողուտ է, մարդ չես սեպ-
ուի՞ր: Փող ունեցողն է յաջողածը, յաղ-
թականը: Պէտք է փող ունենալ: Փող
ունի՞ր. ամէն բան կրնաս ունենալ:

Ա.— Ըսի՞ք ամէ՞ն բան:

Ա.— Կ'ըսեմ ու կը կրկնեմ. ամէն
բանին ալ աղնիւր, լաւագոյնը կրնա՞ք
ունենալ:

Ա.— Ե՛ր, կը չափազանցէ՞ք մի քիչ.
բաներ կան, որոնք բախտի հետ կապ ու-
նին:

Դ.— Օրինակի համար...

Ա.— Կիներ:

Դ.— Ամուսնացած չէ՞ք, պարոն ձոն:

Ա.— Ո՛չ. բայց կը փախա՞քիմ ամուս-
նանալ: Ա՛յ՛ մամանակ է:

Դ.— Ամօթ չըլլայ հարցնելս, բայց
քանի՞ տարեկան էք:

Ա.— Քանի՞ տարեկան կ'երեւիմ...

Դ.— (Գննելով ու մտածելով) Է՛ր,
առնուաղն քառասուն. իսկ առաւելագոյ-
նը քառասունհինգնոց մը ըլլալու էք:

Ա.— Առաւելագոյնը երկու տարի ալ
վեր ելէ՞ք:

Դ.— Յոյց չէ՞ք տար:

Ա.— Տալիքը կանանչ է, ու մարդս
երիտասարդ կը պահէ:

Դ.— Ե՛ր, քանի՞նո՞ց կին մը կ'ուզէք:

Ա.— Տարիքը երեսունըութէն վեր ըլ-
լալու չէ: Բայց ամէնէն կարեւորը ա-
ռողջ կին մը ըլլալու է. եւ շա՛տ, շա՛տ
առողջ: Ինքը թէեւ առողջ, բայց ըլլա-
լու է հիւանդասէր:

Դ.— Այսինքն տեսակ մը քաջառողջ
հիւանդապահուհի: Կ'երեւի թէ գուցե ո-
րոշ հիւանդութիւն մը ունի՞ք:

Ա.— Փա՛ռք Տիրոջ, մինչեւ այսօր
ոչինչ ունիմ. բայց կրնամ ունենալ, քա-
նի որ յիսունը թեւակոխած եմ:

Դ.— Գիշ առաջ, քառասունըոթը
տարեկան էիք, բայց մէկ վայրկեանէն
միւսը յիսուն տարեկան եղաք:

Ա.— Բարեկամ, ճշմարտութիւնը
բերնէս փախաւ:

Դ.— Կ'երեւի թէ ճշմարտութիւնը
բանտարկեալ մըն էր ձեր մէջ, ու ար-
թը գտաւ ու բանալէն փախաւ:

Ա.— Ե՛ր, էդ մէկը գուցե դիտցէ՞ք: Յի-
սունը դէշ կը Հնչէ, բայց քառասունը-
թը կը պատկանի քառասունին: Յիսուն
եմ թէեւ, բայց առողջութեամբ երեսուն
եմ:

Դ.— Ձեր ներթափան ուժն ալ եթէ
նկատի առնենք, քսան տարեկան կ'ըլ-
լաք:

Ա.— Էդ մէկը ճշմարտութիւն է:

Դ.— Այդ ճշմարտութիւնն ալ չփախ-
ցընէ՞ք ձեր զնդանէն:

Ա.— Դուք ինձ է՞ն ասացէ՞ք՝ թէ չէ՞ք
կրնար ինծի համար ճարել առողջապա-
հական Հայրուհի մը:

Դ.— Նախ, յարգելի պարոն ձոն,
այստեղ ամուսնական զրտանեալ չէ:
Իսկ երկրորդ, գուցե կ'ուզէք առողջա-
պահական կին մը. մինչդեռ հոս եկող
գրեթէ բոլոր կիները հիւանդներ են ու
հոս կու պան դեղի համար:

Ա.— Թոյլ տուէ՞ք, որ ես ալ ջանջա-
խիչ պատասխան մը տամ ձեզի, ու ըզ-
պացնեմ ձեր պարտականութիւնը:

Դ.— Ամբողջովին ականջ դարձած
եմ:

Ա.— Ո՛չ, ո՛չ. ամբողջովին ականջ մի՛
դառնաք. քիչ մըն ալ պլուխ մնացէ՞ք:

Դ.— Ձեր ուղածին պէս եմ:

Ա.— Եւրոպայի մէջ, դեղագործու-
թիւնը սահմանափակ գործ է: Մինչդեռ
մեր Ամերիկայի մէջ, դեղագործ մը կը
ծախէ բազմաթիւ քաներ, որոնք կապ
ունին մարդուս առողջապահութեան
հետ: Մեր Ամերիկայի գեղարաններուն

մէջ, կրնաք դռները առողջապահական վարտիք, շապիկ, դուլպայ, առողջապահական հողաթիւ, առողջապահական գինի եւ ուրիշքի աւ դեռ այնքան բաներ առողջապահական:

Դ.— Առողջապահական կի՞ն ալ...

Ա.— Գալով էդ մէկին, որ ամէնէն կարեւորն է, մօտերս էդ դործն էլ պիտի կատարեն դեղագործները: Դուք կ'ըսէք թէ դեղարան եկող կիները հիւանդներ են: Ո՛չ, բարեկամ. չկա՞ն կիներ, որոնք դեղարան կու գան տարիներէ ի վեր, ու զեղ չեն գներ, հապա կը գնեն առողջապահական խոզանակ օկուայի, ատամ մաքրելու խիւս, անուշահոտութիւն եւայլն:

Դ.— Կեցէ՛ք, կեցէ՛ք: Լոյս մը ծագեցաւ մաքրիս մէջ: Իրաւունք ունիք, երբ կը փափաքիք որ դեղագործութիւնը ունենայ աւելի լայնարձակ ասպարէզ մը: Ասկէ դատ, իրապէս կան կիներ, որոնք երբեք դեղ չեն գներ, այլ կ'ուզեն միայն ձեր ըսածները:— պրոս ա տան, տանթիֆրիս, օ տը քորոն եւայլն: Եւ անշուշտ դեղագործս պիտի վարձատրուի՝ ձեր ըսած գործին համար...

Ա.— Մենք Ամերիկացիներս դիտենք վարձատրել եւ լա՛ւ վարձատրել:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դիպագործը, Ամերիկացիք և Շամիրամ

ՇԱՄԻՐԱՄ (Երեսուցիքի մը տարեկան, տեսնու կիմ մըն է) Բարեւ ձեզ: Պարոն Պատմաժան, ուս բոմատը պատրաստէ՛ք: (Թուղթ մը կու տայ)

Դ.— Երեք-չորս ժամէն եկէ՛ք առէ՛ք:

Շ.— Ի սէր Աստուծոյ, մէյ մըն ալ ո՛վ պիտի գայ: Դատարդէ մը պատրաստեցէ՛ք: Տեղ մը ունիմ երթալիք, գարմիս կ'առնեմ:

Դ.— Լա՛ւ, լա՛ւ: Սիմոն (Սիմոն կ'երևի խորհէ) Մա բոմատը շուտով պատրաստէ՛ք: (Սիմոն քաղաքը կ'առնէ ու կ'անշատանայ: Շամիրամիմ) Դուք ալ, տիկին Շամիրամ, օր մը օրանց դեղագործը

մը չէ՛ք բերած: Միշտ ու միայն բոմատ մը կ'ուզէ՛ք եւ ան ալ շուտով կ'ուզէ՛ք:

Շ.— Դուք ալ կ'ուզէ՛ք որ ամէն մարդ հիւանդ ըլլայ: Ձեր խաթերը համար ո՛չ ես, ոչ ալ աղջիկս չենք կրնար հիւանդանալ: Մենք առողջ ծնած ենք, առողջ կ'ապրինք, ու առողջ ալ պիտի մեռնինք:

Ա.— Պաւլո՛, տիկին: Շատ լաւ պատասխանեցիք:

Շ.— Պարոնը հա՛յ է եղեր:

Դ.— Ամերիկահայ է:

Ա.— (Ուրիշ ելլելով ու խնայողով) Ճոն Արայան:

Շ.— Շամիրամ Երբեմնան: Այրի: Ըսէ՛ք Ամերիկայէն է՛ք: Շատ կը գովեն Ամերիկան: Ո՛վ դիտէ հոն ինչե՛ր կան: Խնդրեմ, նստեցէ՛ք:

Ա.— (Նստելով) Անունէն յայտնի է: Ամերիկա, ամէն բան կայ, բայց մանաւանդ տալէր շատ կայ:

Շ.— Հարկաւ նորէն պիտի դառնաք պանքա, այսինքն Ամերիկա:

Դ.— Բայց առանձին պիտի չըստանայ: Պիտի ամուսնանայ Հայուհի մը հետ:

Շ.— (Հառաչելով պէս) Երանի տղա խախտաւ Հայուհիին... Հազար երանի... Ես դաջի. տասը՛հինգ վայրկեանէն կու գամ: (Ամերիկացիք) Յետեւորին, պարոն:

Ա.— Յետեւորին, տիկին Շամիրամ:

Դ.— Պահէ՛ք մը կեցէ՛ք: Ձեր աղջիկը ի՞նչ կ'ընէ...

Շ.— Պատուաւոր աղջիկ մը ի՞նչ կ'ընէ. կ'աշխատի ու ամուսին կ'երազէ... Դուք եթէ կատարեալ մարդ ըլլայիք, ինչե՛ր կրնայիք ընել: Դուք ձեր յաճախորդներուն միայն հիւանդութիւններով կը հետաքրքրուիք, բայց բնաւ չէ՛ք հետաքրքրուիր անոնց առողջութիւնով: Աղջիկ ըսածդ, մարմինով ալ, մտքով ալ, հոգիով ալ կը հիւանդանայ, երբ չ'առնանաւոր ժամանակին: Դեղագործին պարտականութիւնը ձեռն է: Ան ինչե՛ր կրնայ ընել, եթէ ուզէ: Ո՛վ աւելի լաւ կը ճանչնայ յաճախորդները— դեղագործը: Ճանչնալը բանի մը պէտք է ծառա-

յէ: Դուք մէկ վայրկեան մտածած էք, աղջկանս մասին: (Բարկացած) Ո՛չ անոր մասին մտածած էք, ոչ ալ ուրիշ մը մասին: Ամօթ: Անդգամութիւնն ալ չափ մը ունենայու է:

Ա.— Անգամ մը եւս պոստօ՛ւ, տիկին: Շատ շիտակ կը խօսիք: Նոյն դիտողութիւնը ես ըրած էի, ձեր գալէն զիւ առաջ: Ձերը բերան չէ, խորան է:

Ե.— Ինձմէ ձեզի երեք անգամ պոստօ՛ւ: Մարդ կոչուելու արժանի մարդ մը կայ եղեր: Ձեր բերանը մէկ չէ, երեք խորան է: (Կ'ըլլէ):

Խանցիկ հիւանդութիւնով չէ որ մեռած է:

Դ.— Աղջիկը կարգելու է, որ իր ճամբան բացուի:

Ա.— Ճամբան բացուի գէպի Ամերիկայ:

Դ.— Լռութիւն, Յուսահատ մը կու գայ:

Ա.— Ատե՛նք գտաւ: Ասանկ անուշ պահու մը, լեղի մարդ մը կը տարուի... (Կը նստի):

Դ.— Վայրկեանէ մը կը ճամբեմ:

ՏԱՍՆԵՐԵԲԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Ամերիկացի

Ա.— (Ոտքի) Կը կարծեմ թէ ես իմ փնտրածը գտայ:

Դ.— Շամիրո՞մը... Շատ լուռ կ'ըլլայ... Միայն թէ նախ աղջիկը կարգելու է... Ինք կազմ ու պատրաստ ըլլալը յայտնեց, նոյնիսկ պոստով յայտնեց:

Ա.— Աս գործը գլուխ հանեցէք եւ անմիջապէս:

Դ.— Աս մէկը եղածէն սկսելու է: Անցեալները Կոմիկը իր տղուն համար հայ աղջիկ մը կ'ուզէր: Տարիներն ալ յարմար են: Շամիրոմին աղջիկը քսան տարեկան է, Կոմիկին տղան ալ երեսուն տարեկան:

Ա.— Իսկ տիկին Շամիրոմին տարիքը...

Դ.— Երեսունը հինգէն տակի չէ: Իսկ դուք քառասունը եօթը: Շատ յարմար էք: Շամիրոմը Շամիրոմ է:

Ա.— Այսինքն...

Դ.— Այսինքն ցածկալի է:

Ա.— Եւ առո՞ղջ, առո՞ղջ, առո՞ղջ: Ու գաղափարակից: Իր ամուսինը ի՞նչէն մեռած է:

Դ.— Օ՛, կաթի արկածով:

Ա.— Հիանալի:

Դ.— Արկածը...

Ա.— Ո՛չ, ա՛յ: Ըսել ուզեցի թէ փո-

ՏԱՍՆԸՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Ամերիկացի,
Սարափախարը

ՍԱՐՍԱՓԱՀԱՐԸ.— Կը խնդրեմ որ սա դեղերը տաք: (Թուղքը կ'ընկարէ)

Դ.— (Դեղագիրը տոնելու ա. կարգալէ ետքը) Հաճեցէք երեկոյեան ժամը եօթնին հանդիպիլ, որովհետեւ այս դեղերէն մէկը չուշիմ ու բերել պիտի տամ: Եթէ ուրիշ դեղաբան մըն ալ երթաք, նոյն պատասխանը պիտի ընդունիք:

Ս.— Հոգ չէ, իրիկունքը կու գամ: Միայն թէ կ'ուզէի գիտնալ թէ ձեր չունեցածը ո՞ր մէկն է:

Դ.— Սա երբորդը:

Ս.— Ա՛, լա՛ւ: Կը խնդրեմ որ ինծի ըսէք թէ սա երկրորդ դեղը ի՞նչի համար է:

Դ.— Ինչո՞ւ կը հարցնէք...

Ս.— Ինչո՞ւ չէք պատասխաներ...

Դ.— Պատասխանեմ. պարզապէս վիթա՛մինի տեսակ մըն է. օրական երեք անգամ, մէյմէկ հատ առնելու է, ճաշերէն առաջ: Ահա ես պատասխանեցի: Հիմա գուք ըսէք թէ ինչո՞ւ հարցուցիք:

Ս.— Ըսեմ: Մահօթներէն մէկը ըսաւ.— զիմ եղբայրս քանակէրէ մեռաւ. անոր ալ սա դեղէն կը տրուէր: Ուրիշն դուն ալ քանակէր ունիս:

Դ.— Ատանկ ըսաւ...

Ս.— Այո՛, եւ զիս սոսկումով լեցուց:

Դ.— Ատ ձեր ծանօթը չա՞ր է թէ տխմար է:

Ս.— Տխմար չէ, չարն ալ քիչ է իրեն համար:

Դ.— Հասկցայ, հրէշ մըն է:

Ս.— Այո՛, բուն բառը ըսէք: Հրէշ մը, որուն հոգին հոտած է, որուն գանդին մէջ, ուղեղի անդ, օձ ծուարած է: Որուն բերնէն թոյն կը հոսի:

Դ.— Մի՛ անհուիք ասոր հետ: Ժամբեցէք, կայարան դրկեցէք, վռնեցէք, թո՛ղ դժոխք երթայ:

Ս.— Ուրեմն քանի՞ր չունի՞մ...

Դ.— Առանկ բան չկայ, բարեկամօ. բացարձակապէս ասանկ բան չկայ: Սիւմն (կ'երեւի Սիւմն) այս դեղերը ժամը եօթնին համար պատրաստ ըլլան: Երբորդ դեղը կ'օւպեն հետաձայնով: (Սիւմն քեզագիրը կ'առնէ ու կ'անհետանայ):

Ս.— Ձեր այս խօսքը դեղերէն աւելի կ'արժէ: Հոգիս հանդարտեցաւ, հանդըստացայ: Շա՛տ, շա՛տ շնորհակալ եմ:

Դ.— Երկու շաբաթէն, այս դեղերով կը լաւանաք, ձեր ընդհանուր տկարութիւնը կ'անցնի: Եղէք վստահ:

Ս.— Շնորհակալութիւն, հազար շնորհակալութիւն: Մնաք բարի: Այս երեկոյ ժամը եօթին: Անվերջ շնորհակալութիւն:

Դ.— Ոչինչ, բարեկամս, ոչինչ:

Ս.— Շնորհակալութիւն: Ձեզի բան մը ըսե՛մ. դուք իմ մէջն գտնուող սարսափի աստանան խեղդողիցիք: Անգամ մըն ալ ես պիտի խեղդողի՞մ, գիտեսնա՞մ մէջ:

Դ.— Արդէն խեղդուած ըլլալով՝ շատ ալքովի պէտք չկայ:

Ս.— Ես ալքով չեմ գործածեր:

Դ.— Զուրի՛ մէջ պիտի խեղդէք:

Ս.— Ես ստատանան լուալու միտք չունիմ, որ ջուր գործածեմ:

Դ.— Հապա ի՞նչ կը գործածէք...

Ս.— Ազնիւ գիտի:

Դ.— Օրական ա՛րքան:

Ս.— Ես չեմ չափազանցեր, անհոգեղէք:

Դ.— Բայց ձեր օրական չափը ո՞րքան է:

Ս.— Տունը հինգէն վեց չէշ, իսկ դուրսը վեցէն ութ պաւաթ:

Դ.— Օրակա՞ն:

Ս.— Հապա ի՞նչ... Կ'ուզէիք որ շաբաթակա՞ն գործածէի այդքան քիչ քանակութիւնը:

Դ.— Եւ կ'ըսէք թէ ալքով չէք գործածեր. մինչդեռ դուք կը գործածէք օրական եօթնասուն աստիճան ունեցող չէշ մը ալքով: Ձափը կ'անցրնէք: Դուք թէ՛ սարսափահար էք, թէ՛ սարսափելի:

Ս.— Իսկ դուք տրամաբանող էք, սակայն գէշ կերպով կը հաշուէք:

Դ.— Որովհետեւ իմ հաշիւս ձեր գործին չեկաւ:

Ս.— Հաշիւ ըսուածը միայն գանձողին գործին կու գայ: Յտեալութիւն: Բա՛ժակ մըն ալ բացէն պիտի խմեմ, ձեր թանկագին առողջութեան համար: Ժամը եօթնին կու դամ:

Դ.— Տատանելով մի՛ դաք:

Ս.— Եթէ տատանիմ անգամ, չեմ տապալիր: Ձեմ ալ խեղդուիր, այլ կը խեղդողդեմ: (Կ'երթայ):

ՏԱՍՆԸ ՀԻՆԳԻՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Ամերիկահայը

Ա.— Վերապէ՛ս, կորուսեցաւ յաշտախօսը, որմէ վար չէք մնար նաեւ դուք:

Դ.— Մարդը սարսափահար էր: Իր կորովը բարձրացուցի: Է՛, ի՛նչ ընեմ, բարեկամս, թէ՛ դեղագործ եմ, թէ՛ բժշկ եմ, թէ՛ խոստովանահայ եմ, թէ՛ վարժապետ եմ, թէ՛ թաղապետական պաշտօնեայ եմ, թէ՛ ժողովրդական նախագահիւր եմ: Իսկ դուք այսքան մասնագիտութիւններ, այսքան գործեր քիչ գտնելով՝ ամուսնական միջնորդութիւնն ալ աւելցուցիք ուսերուս վրայ: Ձայն ալ պիտի տանիմ սիրով ու հաճոյքով, մանաւանդ յաջողութեամբ եւ յաղթանակով: Մի՛ մոռ-

նաք որ միայն թաղեցիները չեն որոնք կը դիմեն ինծի. կան հեռու թաղերէ եկողներ ալ: Անոնք չեն ուզեր իրենց խոտովանանքը կատարել իրենց թաղի դեղագործին:

Ա. Ինչ հարցերը որոնք բժշկական են, ինչո՞ւ չեն դիմեր իրենց բժիշկին:

Գ. Զեր ըսածը երկար խնդիր է: Ոչ միայն ծախս է բժիշկի երթալը, այլ նաեւ կորուստ է աշխատանքի ժամանակի: Բժիշկի երթալու համար, նախապէս ժամադրուելու է: Ապա, սպասման սըրահին մէջ, երբեմն ժամ մը սպասելու է: Մինչդեռ ինծի կու գան՝ իրենց ուղած տոններ, ու Հինգ-տասը վայրկեանէն կը յայտնեն իրենց ցաւը: Ա՛հ, եթէ գիտնաք թէ ինչերու համար կը դիմեն դեղագործին:

Ա. Մանաւանդ շատախօսելու համար:

Գ. Սխալ: Մէկը կու գայ խնդրելով որ խմորներ խնդրադիր մը, ուրիշ մը կ'աղաչէ որ դրեմ պաշտօնական գիրքի մը պատասխանը կամ լեցնեմ հարցարան մը: Նոյնիսկ պատահած են որ սիրային նամակներ գրեմ: Ի՞նչպէս մերժեմ, բարեկամս, սրտի խնդիր է, իսկ սիրտը մեծագոյն կեդրոնն է առողջութեան: Այս բոլորը բաւական չըլլային, սէրերէն զատ, ամուսնութիւններն ալ աւելցան գործերուս վրայ: Թէեւ սիրով ու հաճոյքով ատենք ալ պիտի կատարեմ: Բայց այսքան բեռը դեղագործի մը ուսերուն համար անբնական չե՞ն...

Ա. Երբե՛ք: Ընդհակառակն, հիմա է որ կը մտնէք ձեր պաշտօնին, ձեր պարտականութեան մէջ, ու կը կանգնիք պատուանդանի մը վրայ պանծալի: Դուք ցաւի գէժ պայքարելու համար դեղագործ եղած էք: Մարմնական ցաւերէն զատ, կան մտքի ցաւեր, հոգեկան ցաւեր, սրտի ցաւեր: Դարմանեցէք բոլոր ցաւերը, ու ձեր վարձքը մեծ պիտի ըլլայ թէ՛ երկրի վրայ, թէ՛ երկնքի մէջ: Դեղագործին առպարէզը լայնարձակ է: Իբրեւ դեղագործ բարձրացէք, մեծցէք: Քօսիք Շամիրամի մասին: Կը ճանչնա՞ք զինքը մօտէն:

Գ. Կին մը մօտէն կարենալ ճանչնալու համար, անոր հետ ամուսնացած ըլլալու է: Ապա, անհամաձայնութիւն մը ունենալու է, որպէսզի կինը իր բուն գոյնը դուրս թափէ: Սակայն Շամիրամը տարիներէ ի վեր ծանօթ է ինծի:

Ա. Ի՞նչ են իր թերութիւնները եւ առաւելութիւնները:

Գ. Ամէն տեսակ առաւելութիւններ ունի. Տունն ի վեր տանտիրէն է, ամուսինն ի վար կինն է, շնորհալի է, շէնոյ է, լաքարոտ է: Թերութիւն ըլլալով՝ երբեմն խենթ ու խելար կը խօսի:

Ա. Յանկայի կնոջ մը խենդուխելար խօսիլը իմաստութիւն է: Թռչնոց երգին մէջ ալ իմաստ չկայ, բայց հաճելի է լըսելը: Դուք աշխատեցէք որ տեղաւորէք Շամիրամին աղջիկը: Այդ գործին համար ալ ձեզ կը վարձատրեմ: Ուրեմն ձեր վարձատրութիւնը կ'ըլլայ կրկին:

Գ. Վարձատրութիւնս կրկին ըլլալու պարագային, գումարը ո՞ր կը բարձրանայ:

Ա. Հինգ հարիւր տալէրի:

Գ. Անուշ գումար է, մեղրաթաթախ դրամ է:

Ա. Շամիրամը բան մը ուզեց: Ա. տոբ գինը ի՞նչ է:

Գ. Զորսուկէս ֆրանք. մօտաւորապէս մէկ տոլար:

Ա. Անոր քով դէք նաեւ մեծ շիշ մը ամենալաւ անուշահոտութիւն: Մրկուք մէկ ծրարել տուէք: Քանի՞ կ'ըլլայ:

Գ. Ումէնը մէկ տասը տոլար:

Ա. (Դրամապահակը խանելով) Ա. ուէ՛ք:

Գ. (Դրամը գրպանելով) Մի՞մն, տիկին Շամիրամին բո՞մարին քով աւելցուր մեծ շիշ մը Ծանէլ օ տը քօլոնեք եւ երկուքը մէկ ծրարէ:

Ս. (Կ'երեւի. սեղանին վրայ ծրարել ետքը, կը քաշուի խորը)

ՏԱՍԵԸՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Գեղագործը, Ամերիկայից, Գիճովը

ԳԻՆՈՎԸ. (Յանկարծ կը բացուի)

դիպարամին դուռը աւ Գիմովը տապալի-
լաւ տատիճամ տատամնիով՝ մերս կը մտնէ
աւ զգուտմով կը բացագանչէ) Բո՛ւՖ...
Ինչ գէշ կը հոտի ալտեղ... Ա՛, գե-
ղարան է եղեր... Ներդուրիւն, պա-
րոններ, ես գինեւորուն կարծեցի... Բայց,
բայց կը շնորհաւորեմ ձեզ, պարոն գե-
ղադործ: Կը շնորհաւորեմ, որ ձեր խո-
նովին արտաքին մասը նմանցուցած էք
գինեւորուն... Ահա թէ ինչպէս սխալե-
ցայ...

Գ.— Անպատկառ, Բ՛նչպէս կը յան-
դըզնիւ լուրը դեղարանս նմանցնել զը-
մանոց գինեւորուն:

Գ.— Այս նմանութեանս համար ու-
րախացէք, պարոն գեղադործ:

Ա.— (Դեղագործին) Մի կուսիով
դուքս չպարտե՛մ էս թուկից փախածը:

Գ.— Կը խնդրեմ, ատանկ բան չը-
նէք: Այստեղ գինեւորները նստիւրական են:
Սրբազգիւններն է զանոնք հարուածե-
լու:

Գ.— Ես ձեզ չեմ հասկնար, դուք ալ
դիւ չէք հասկնար: Պատճառը մեր միեւ-
նոյն ըմպելիին չիմելն է: Ես կը կոչուիմ
Պէպէր: Պօրաօ-ան-կաթինեցի եմ. չը-
ւարէն: Հինգ տարի է որ առաջին ան-
գամ ըլլալով դուրս ելած եմ գիւղէս, ու
չիտակ փարիզ եկած եմ: Աւ կ'աշխա-
տատիմ, այո՛, կ'աշխատիմ պարկեշտօ-
րէն ու կը խմեմ տարկեշտօրէն: Ո՛չ ոքի
տաղապուկ չեմ պատճառեր, կը հասկնա՞ք,
ո՛չ քի:

Ա.— (Դեղագործին) Առանց խփելու,
զրկեմ ու դուքս չպարտե՛մ, գրկելով ու
ժպտելով:

Գ.— Այդ ալ մի՛ ընէք: Ես հիմա կը
ճամբեմ դիւրը:

Գ.— Մեր դիւղին մէջ, մարդիկը
փոքրամասնութիւն էին: Մեծամասնու-
թիւն էին կովերը եւ կաղամբները ու
ճաղարները եւ ճակնդեղները: Կային
նաեւ խոզեր: Ընդամէնը յիսուն հոգի
էին: Եւ ունէինք միայն մէկ գինեւորուն:
Ի՛նչ յետադիմութիւն... Փարիզը, ա՛հ,
փարիզը մէկ հատիկ է: Ամէն մէկ փողո-
ցի մէջ կան չորս-հինգ գինեւորուններ:
Փարիզի գեղարանները ահաւմ կը հմա-

նին գինեւորուն: Փարիզը գինեւորուննե-
րու ցուցահանդէս մըն է:

Գ.— Վերջ է վերջոյ, գինեւորուն յա-
ճախողները գեղարան պիտի գան:

Գ.— Վերջ է վերջոյ, ամէնուս եր-
թալիք տեղը գերեզմանատունն է: Քանի
կ'ազրիմ, կը նախընտրեմ գինեւորունը,
որ կենսութեան վայր է: Որեւէ բան կը
ճանչցուի իր համով ու հոտով: Գինե-
ւորունը անմահութիւն կը բուրէ, իսկ գե-
ղարանը բո՛ւհ... Զգուշիք է... Բո՛ւհ,
բո՛ւհ, բո՛ւհ... (Դուրս կ'ելլէ):

ՏԱՍՆԸՆԹԵՐՈՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Ամերիկացի

Ա.— Այս քաղաքին մէջ ո՛րքան խն-
թանոցէն փախածներ կան...

Գ.— Խնթանոցէն փախածներ չկան,
այլ խնթանոց դրուելիքներ շատ կան:

Ա.— Թողէք հէ գիտելու, Երբ Շամի-
րամը վերադառնայ, ծրարը կու տաք ու
կ'ըսէք որ ավճարուած է: Ատկէ խօսք
կը բացուի: Միւս նուէրն ալ կը շուսփէ:
Կ'ըսէք թէ իրեն շատ համակրեցայ: Կը
հարցնէք թէ կ'ուզէ՞ երթալ Ամերիկա:
Եւ այլն: Ձեր շնորհը ցոյց տուէք: Ան-
շուշտ ես ալ իմ շնորհը ցոյց կու տամ:
Շամիրամն ալ իր շնորհները ցոյց կու
տայ, բնականաբար:

Գ.— Կու գայ թագուհին...

Ա.— Թագուհին ո՞վ է:

Գ.— Բայց Շամիրամ թագուհին:

ՏԱՍՆԸՆԹԵՐՈՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Ամերիկացի, Շամիրամը
աւ Սիմօնը

Շ.— (Մտնելով) Կեանքս վաղէ մը ե-
ղած է: Ես գերեզմանիս մէջ պիտի հանդ-
չիմ: Բարեբախտաբար գիշերը լաւ քը-
նացած է: Ո՛ր է բոճատս:

Գ.— Վայրկեան մը նստեցէք ու
հանգչեցէք: (Շամիրամ ծայրի աքռոյ
կ'ուզէ գրաւել, տակայմ, դեղագործը շը-

նարիսի կնամեծարութեամբ մը չի քաղուր, աւ կը տեղաւորէ Ամերիկացիացումն ինկը) Ահա հո՛ւն է ձեր տեղը: Տիկին Շամիրամ, աւետիս մեծ ու սքանչելի: (Կաղարէ մը ետքը կը շարունակէ խօսիլ) Դուք քուսն, իսկ ձեր աղջկան բախտը արթուն: Քիչ առաջ, ձեր աղջիկը ամուսնացնելու խօսքը կ'ընէիք: Ի՞նչ է ձեր աղջկան անունը...

Շ.— Շահասպրամ:

Դ.— Միտքս եկաւ որ Կոմիկը իր արժան համար հայ աղջիկ մը կ'ուզէր, անցեալ օր: Կոմիկը պատուական մարդ է, իր կէնը Անթառամը պատուաւոր տանտիրէն է, իսկ իրենց մէկ հատիկ մանջն ալ պարկէշտ տղայ է: Կոմիկին ուղան Գեղամը Շահասպրամին հետ նըշանենք ու կարգենք: Ի՞նչպէս կ'ըլլայ...

Շ.— Ե՛, հիմա համոզուեցայ որ դուք զեղադրած պիտի կրնաք ըլլալ, թէեւ զեղադրածութիւնը ինձմէ ստղծեցաք:

Դ.— Դուք ան ըսէք թէ Շահասպրամ ու Գեղամ ի՞նչպէս կ'ըլլան, եթէ միասին:

Շ.— (Կը մտածէ)

Դ.— Պատասխանի, աւելի ճիշդը պատգամի կը սպասեմ:

Շ.— Վարդիկան մը համբերեցէք: Ուսանաւորով պիտի պատասխանեմ:

Ա.— Պա՛հ, պա՛հ, էս որքան շնորհալի է տիկին Շամիրամը:

Շ.— Պարտն Գեղամը ունի իր համբ, Բայց իր հոտն ունի իմ Շահասպրամը: Երբ համն ու հոտը իրարու քով գտն, կ'ըլլան կատարեալ եւ ամսահալան:

(Սիւնն կ'ընդունի ու երեք այլերը կը ծափահարեն: Շամիրամ կը նստազայթէ)

Ա.— (Ոտքի կը կանգնի, ձեռքը կը սեղմէ խոնարհելով) Դուք, տիկին, հանձար էք մտքով ու մարմնով:

Շ.— Օ՛, կը շփազանցէք:

Ա.— Պիտի համոզուիք որ իմ գնահատութիւնը մինչեւ ո՛ւր պիտի հասնի: (Կը նստի)

Դ.— Պարտն Ամերիկացայը մարգարէ է: Քիչ առաջ, ձեզի համար ըսաւ.— «Շահասպրամն է տիկին Շամիրամը»:

Շ.— (Տխրօքէն) Ի՛նչ ընեմ որ բախտըս անշնորհ է:

Դ.— Դուք քուսն, ձեր բախտը արթուն: Առէ՛ք տա բոմատը, հետն ալ մեծ շիշ մը անուշահոտութիւն:

Շ.— (Առնելով) Բայց ես ձենէ միայն բոմատ ուզեցի:

Դ.— Բոմատն ալ, անուշահոտութիւնն ալ վճարուած են: Նուէր են անոնք մեր պատուական Ամերիկացայէն, որ Միքանի ու Տանձի թագաւորն է, եւ խոնարհելով ձեր առջեւ, պատրաստ է պսակուելու ձեզի հետ: Ահա ըսի ըսելիքս: Ահա պայթեցուցի մեծ աւետիս: Դուք ի՞նչ կ'ըսէք, այս բախտին, երբ քիչ առաջ անիրաւօրէն կ'ամբաստանէիք ձեր բախտը: Ձեր աղջիկը կը կարգենք Գեղամին հետ, ձեզ ալ կը կարգենք մեր պատուական բարեկամին հետ, ու կը շուէք օդի ճամբով Ամերիկա, ուր չկայ՝ չկայ:

Ա.— (Ոտքի կը կանգնի ու Շամիրամին առջեւ կը խոնարհի) Տիկին Շամիրամ, խոնարհաբար կը խնդրեմ ձեր ձեռքը: Ձեզի կու տամ երեք օր պայմանաժամ. կը մտածէք ու ձեր պատասխանը կը հաղորդէք մեր պատուական բարեկամին:

Շ.— Բայց խենթ ըլլալու եմ երեք օր մտածելու համար: Կ'ընդունիմ ձեր առաջարկը, անտիջապէս կ'ընդունիմ, հաճաքով եւ հպարտութեամբ կ'ընդունիմ: Դուք կը խնդրէք իմ մէկ ձեռքս: (Ոտքի կ'ելլէ ու ծրարը սեղանին վրայ դնելով) Ես ձեզի կու տամ երկու ձեռքս ալ: (Ձեռքերը կ'երկարէ, մինչ Ամերիկացայը երջանիկ ժպիտով կը բռնէ զանոնք) Անոնցմէ մէկուն մէջ գրած հոգիս, միւսին մէջ ալ սիրտս:

Ա.— Պառա՛ւ: Կուս ու կտրուկ կին էք դուք: Իսկական Շամիրամ:

Դ.— (Հռետորական ձայնով ու ձեռով) Կին արագաթոյշ, կին արագալը՝ ճիւղ, կին արագադործ: Կի՛ն, որ կ'աշխատի վիթ է պիւն:

Ս.— Կին վճռական ու վսեմ, արծառնի կողուելու Շամիրամ Թագուհի:

Ա.— Այս դեղարանն էլ կոչուեալու է
Շամիրամ Թագուհի:

Դ.— Եթէ ատիկա ծախսի կարօտ չըլ-
լար, կ'անուանէի խանութն «Շամիրամի
Տը Լա Բէն Սէմիրամի»:

Ա.— Ես կը վճարեմ:

Շ.— Ապագայ ամուսինիս անունը
ի՞նչ է...

Դ.— Ճոն Արայեան:

Շ.— Արայեան՝ն, Արայեան՝ն, Կատար-
եալ: Դեղարանը անուանելու է «Արա
Գեղեցիկ ու Շամիրամ Թագուհի»:

(Ամերիկացիք եւ Շամիրամ կը նստին)

Ս.— Այո՛րեքն «Արա Լը Պէլ է Լա Բէն
Սէմիրամի»:

Դ.— Բայց այդ անունները ի՞նչ կապ
ունին դեղագործութեան հետ...

Ա.— Մարդկութեան պատկանող ա-
մէն մէկ անհատ կը փնտռէ Արա Գեղե-
ցիկ մը կամ Շամիրամ Թագուհի մը: Հո-
գեկան ու մարմնական ցաւերուն գերա-
զոյն դէպք կամ Արա մըն է կամ Շամի-
րամ մը:

Ս.— Ահա դո՛ւնեցաւ կապը դեղա-
գործութեան ու այդ դեղական ու գիւ-
թական անուններուն:

Դ.— Հիմա, տիկին Շամիրամ, պէտք
է հիւսէք նոր բանաստեղծութիւն մը,
նոր Արային ու նոր Շամիրամին համար:
Սիմոն, մատիտը ձեռք առ եւ պատ-
րաստ կեցիր, ընդօրինակելու համար:

Շ.— Բանաստեղծութիւնը բո՛ւստ
պատրաստելուն չի նմանիր:

Դ.— Այդ ալ գիտենք. սակայն գի-
տենք նաեւ որ Շամիրամայ ահլը մշտա-
հոս է:

Շ.— Լա՛ւ, երկունքի մէջ կը մտնեմ:

Ա.— (Դեղագործին) Դու հիմա ելար
զազաթը դեղագործութեան:

Դ.— Ես ձեզի հրաշագործ սիրաշուք
մը պիտի պատրաստեմ: Սիրաշուքովս
ձեզ զմօսեմ, որ յաւիտեան ապրիք իր-
բեւ ողջ մոմիաներ, գիրար խենթի պէս
սիրելով:

Ա.— Ձեզի բլլայ սիրաշուքը: Մի՛
մոռնաք որ բուն ու բարձրագոյն դեղա-
գործութիւնը մենէ սորվեցաք: Մենք սի-
րաշուքով չէ որ գիրար պիտի սիրենք:

Մենք պէտք չունինք սիրաշուքի, երբ
ունինք բիտղ, բնական սէրը: Շինճու
սէրը պէտք չէ մեզի: Սա էլ ասեմ որ
դուք թէեւ դեղագործութիւնը մենէ սոր-
վեցաք, բայց շուտով վարպետ ելաք ու
զազաթ մը բարձրացաք:

Դ.— Ես բարձրացայ զազաթը գե-
ղագործութեան, ձեզ ալ բարձրացուցի
զազաթը երջանկութեան, իսկ տիկին
Շամիրամը բարձրացաւ նաեւ զազաթը
քերթողութեան: Կարծեմ տիկին Շամի-
րամը պատրաստ է: Պոստիումէ:

Շ.— (Կ'արտասանէ, իսկ Սիմոն կը
գրէ)

Դարեր ետքը, Գարնա Բամբ...

Արամ սիրեց Շամիրամին:

Շամիրամն էր հաւատք, յայտ, ար-

իւր Արային միշտ կը սպասէր:

Երկուքը մէկ, թեւով հընկայ՝

Պիտի ֆայսքն Ամերիկայ:

Պիտի երթան Հոմալուլու,

Իրարու վրայ հիամալու:

Դ.— Սիմոն, անգամ մըն ալ դուն
կարգայ:

Ս.— (Կ'արտասանէ գրածը, չափա-
զանցուած ժայնով ու ձեւերով)

Դ.— Հիմա, ծափահարենք (Երեք
այլերը կը ծափահարեն) Ամէնէն խոր-
հըրդաւորը՝ վերջին երկու տողերն են:
(Կ'անցնէ քուղթը ու կ'արտասանէ վեր-
ջին երկու տողերը)

Ա.— Ամբողջ բանաստեղծութիւնը ի-
մաստներով լեցուն է ու պահպանուած
է անուշահոտ խորհուրդով մը:

Ս.— Երկու ամուսնութիւն ծրագրե-
ուած են: Երբորդ ամուսնութիւնն ալ
մեր դեղագործ վարպետինը բլլաւու է:
Մաղթենք որ չորրորդն ալ ինծի համար
բլլայ: Մեր պատուական պարոն Սիմիր-
կահայ Արան, այս երկու ամուսնութիւն-
ներուն պէտք է բլլայ կնքահայր, իսկ
տիկին Շամիրամը բնականաբար՝ կըն-
քամայր:

Ա.— Մենք (քեւը անցընելով Շ-իմ
մէջքին) պատրաստ ենք կնքահայրու-
թեան ու կնքամայրութեան, եթէ դուք
զտած էք մէկ մէկ թագուհի:

Դ.— Ամուսնութիւններով՝ դեղաբա-

նրա կը բարձրանայ գագաթը Մասիսի։
Ս.— Այս դեղարանը եղաւ պեղարան,
ցեղարան, դեղարան ու տնկարան։

Գ.— (Աթոռի մը վրայ քարձրամա-
լով եւ հոնտորօրէն) Դեղարանն հասաւ
անհասանելի բարձրութեան, իբրեւ Նոյ-
եան Տապան։

ՏԱՍՆԸԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Դեղագործը, Սիմոնը, Ամերիկահայը,
Շամիրամը եւ նպարավաճառը

ՆՊԱՐԱՎԱՃԱՌԻ.— (Կը մտնէ ուժգ-
նօրէն, գայլոյթով. աշխատամքի հա-
զուստով. քառասուննոց է. կը նմանի
ցուլի։ Խօսքը ուղղելով դեղագործին, որ
աթոռին վրայ կանգնած է) Քիչ առաջ
մարդուն մէկը ներկայացաւ ինծի, ըսե-
լով որ լրագրող է, ու կարգաց քու խօս-
քերդ, որոնցմով նախատած էիր նպա-
րավաճառները։ Ուկեց որ ես ալ արտա-
յայտուիմ։ Ու ես ըսի.— Ներկայիս դե-
ղագործութիւնը ամէնէն հասարակ, ա-
մէնէն ստորին գործն է։ Նպարավաճառը
գոնէ կը կտրէ, կը կտնէ։ Հասաւ դեղա-
գործը ի՞նչ կ'ընէ. ոչինչով ոչինչ. ա'լ
ընելիք չունի։ Տու՛ք մը կամ շիշ մը կու
տայ ու դրամը կը դանձէ։ Մոյլի դործ,
մակարոյծի դործ, անպատիւ դործ, Դե-
ղագործութիւնը դեղնած է ու ինք պէտք
ունի դեղի։

Գ.— Ի՞նչ (աթոռէն վար կը ցատկէ)
Շուտով ներսուցիւն խնդրեցէք, ապա
թէ ոչ...

Ն.— Խայտառակ խամաճիկ, խայտա-
ռակ խրատիւրակ, ո՞վ ո'րմէ ներողու-
թիւն պիտի խնդրէ։ Քու պատճառովդ
երեսուն ֆրանք ալ տուի այդ առաւ-
փախաւին, իբրեւ պատկերիս քլի-
շէին ծախսը։ Իր մեկնելէն ետքն է որ
ապուշ յաճախորդ մը բաւաւ անտը առաւ-
փախաւ ըլլալը։ Թէ՛ նախատեցիր զիս,
թէ՛ պատճառ եղար որ կորսնցնեմ երե-
սուն ֆրանք։ Ի՞նչպէս պիտի հատուցա-
նես պարտքդ, թունավաճառ դեղագործ։
(Կը կոփախարէ դեղագործը, որ կ'իյ-

նայ։ Սիմոն կը փութայ վարպետին քով)

Ա.— Յցուելով նպարավաճառին առ-
ջիւ) Պո՞քս... (Ու կոնսիլի հօր հար-
ուած մը կաւ տայ նպարավաճառին ծը-
նօտին, որ կը տապալի)

Գ.— (Սիմոնին օգնութիւնով կ'ելլէ
առի, եւ տեսնելով գետին տապալած
նպարավաճառը, ապուշցած կը խօսի)
Վա՛յ խայտառակ... Ես ալ իբրե՞ն դար-
կի կ'երեւի... Անվայել բան եմ ըրած...
Սիմոն, զբաղէ իմ տապալած սա ծառով։

Ս.— Այնքան ինքզինքէդ ելած էիր,
որ սոսկալի հարուած մը տուիր քա զո-
մէշին...

Գ.— Դեղագործի պատիւս արատա-
ւորեցի։

Շ.— (Ոտէն, գրկելով Ամերիկահայը)
Ա՛ճէն ոք կը տապալի, բայց կանգուն է
նոր Արա Գեղեցիկը ու իր քովն է նոր
Շամիրամը։

Ա.— Բժշկութիւնն ու դեղագործու-
թիւն ինչքան էլ բարձրանան, շատ վար
կը մնան Սիւրբգործութենէն, որ Ա-
ռանցքն է աշխարհի ու նպատակը՝ կեան-
քի։

(Ամերիկահայը աւ Շամիրամը մէյ-
մէկ քեւով գիրար կը գրկեն, իսկ իրենց
տգատ քեւերը վեր կը քարձրացնեն՝ յա-
ջազ նիւմէրօ մը աւարտած՝ յաղթական
անպարտքներու պէս)

Ս.— Այդ այդպէս ըլլալով՝ ես ալ
սորվեցայ որ դեղերուն դեղը կ'ինն է, որ
չինտւած է անուշահամ ծաղիկներով, ա-
նուշահամ պտուղներով եւ աղի, լեղի,
կծու, թթու բայց օգտաւատ թոյներով։
Սորվեցայ նաեւ որ ամէն այլ մարդ հի-
ւանդ է, ու պէտք ունի այդ Դեղին, որ
իւր կարգին պէտք ունի հիւանդ այլ մար-
դուն։ Կարճ. կ'ինք լաւագոյն դեղն է,
ցուցափեղկը իր տեղն է։

Ա.— Օլ ըսյք կը խօսաս։

Ն. Գ.

ՎԱՐԱՎԱՃԱՌ ԵՒ ՎԵՐՋ

(Ամէն իրաւում վերապահուած է)

Վիլմամայլը, 1963

Մ Ո Ւ Ր Ա Ց Ի Կ Ը

Մուրացիկ կին մը կ'անցնի յամրաֆայլ,
Մեղմօրէն սեղմած մանկիկը կուրծքին,
Հեզամագ դէմքին՝ տխուր ու մռայլ,
Ամպամած է զերդ մթաւօղ լուսին:

Ցնցոտիները՝ գունաթափ, մաշա՛ծ,
Շրթները՝ աշնան դեղնորակ տերեւ,
Տփացող կուրծքին մէկ ողկոյզը՝ բաց,
Սառած պտուկը՝ չամիչի պէս սեւ:

Ճանկած է ամուր մատներով վտիտ,
Մանկիկը իր մօր ստինքը դատարկ,
Ճեղքուած են գայն մուրցնով մը քիրտ,
Շեղքերու պէս ցուրտ քամիներ վայրագ:

Կարկառած մարդոց դատարկ ակն բաց,
Արտասուքն աչքին մայրը կը մուրայ.
Մինչ մօր փշաֆաղ ստինքը խածած,
Սնունդ հայցելով մանկիկը կու լայ:

Կ'անցնին անտարբեր մարդիկ քահան,
Նայելով անոնց հայեացքներով սին. –
Կարկուտի պէս ցուրտ պտուկը քերմին,
Մանկիկն ալ խռով՝ կը նիքիէ սոված:

ՄԻՔԱՅԷԼ ԹԱԻՐԻՋԵԱՆ

Հանդիմանում ԿԱՆԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

Բաժնուհիներն հտք, Վարուժան պահ մը քալեց փողոցներէն, ջանաց մտքերը դառաւորել։ Քալելը կը հանդարտեցնէր զինք։ Ընկերոջ վիճակը զինք արամադիք ըլլալու աստիճան մտահոգեց։ «Յենթի պէս բռնուած է», ըսաւ։

Քալեց, քալեց։ Հասած էր Իպրահիմ Փաշայի անկիւնը։ Արագօրէն յառաջացաւ Նաւասարդ Ակումբ։ Աղամեան հոն ըլլալու էր։ Ան էր միակ մարդը, որ կրնար ուղիղ խրատ տալ։ Ձուգեց Յմբապետ Համոյին բացուիլ։ Անիկա շատ խիստ ու արմատական էր նման հարցերու մէջ։ Մինչ կը քալէր, կը մտածէր՝ թէ ինչպէս կրնայ խուսափիլ անկէ եւ Աղամեանին հետ առանձինն խօսիլ։

Հազիւ սանդուխներուն մօտեցաւ, լսեց Յմբապետին եւ Աղամեանին խօսակցութիւնը։ Վար կ'իջնէին։

— Վարուժան ջան, — ըսաւ Աղամեան իր բարի ժպիտով, — մ'ըր ես պնտմ։ Վերը բացի Արամից ոչ ոք կայ։ Արի, եկ ինձ հետ։

Թեթեւ մշուշ մը կար դուրսը։ Հազուադէպ էր։ Վարուժան դող մը զգաց։

— Ուրեմն, վաղը երեկոյ... Գիշեր բարի, Համօ ջան, Տէրն ընդ քեզ...

Համօն մշուշի մէջ կ'սրտուցաւ։

Անձայն քալեցին կողք կողքի բաւական ատեն։

— Լեւոնն ո՞ւր է, — հարցուց Աղամեան։

— Ձեմ գիտեր... ըսել կ'ուզեմ, միասին էինք քիչ առաջ... տեղ մը պնաց...

— Հը՛մ։

— Ձեմ գիտեր ո՛ւր... Պարտաւոր չէ ինծի հաշիւ տալու։

— Ի հարկ է ոչ, ինչ յիմարն եմ, ի հարկ է ոչ։

Շարունակեցին քալել։ Բոպիկ տղաք բարձրաձայն լրագիր կը ծախէին։

— Գնանք մէ սուրճ խմենք։

Հասած էին Օրերայի հրապարակը, բարձրացան Պատիսայի սրճարանին տանիքը:

– Վախատ սատե... Դո՞ւ... Հա՛, այո՛... Վախատ սուքար գիատե...:

– Հաա՛տը՛ր, – ըսաւ խորամանկ աչքերով եզիպտացին եւ փորը շարժելէն մեկնեցաւ: Աղամեան կը սիրէր արարելէն խօսիլ: Լեզուն չէր գիտեր, բայց դադարաւ ունէր անոր կազմութեան մասին: Կը սիրէր մոնաւանդ արարելէնի կոկորդային հնչիւնները:

Անմահական սուրճը տարածեց իր բուրմունքը: Աղամեան քանի մը ուժով ըմբռնեց, մի սիկար վառեց, կոթնեցաւ աթոռին, անհուն երանութեամբ աչքերը փռեցաւ: Հարցուց.

– Ի՞նչ ունիս ասելու:

Վարուժան յանկարծակիի եկաւ:

– Լեւոնը:

– Գիտեմ: Արամն էլ մտահոգուել է:

– Ուրեմն գիտէ՞ք:

– Ուրե՞մն:

Աղամեան ուժով մը եւս խմեց եւ կորսուեցաւ ծուխի քուլաներուն մէջ:

– Կեանքը իր ճամբան կը գտնէ:

– Ըսել կ'ուզէք պէտք է ձեռքերնիս ծալնեք եւ սպասենք:

– Հը՛հը՛:

– Բայց եթէ...

– Կարող է լինել:

– Օտարի՞ մը հետ:

Վարուժան աշխատեց իր: Ի՞նչպէս կարելի էր: Եւ Աղամեանի անտարբերութիւնը... Բնաւ չէր սպասեր...

Մարիան Կիրակի ամբողջ օրը սենեակէն դուրս չեկաւ: Եկեղեցի իսկ չգնաց: Տարիներէ ի վեր առաջին անգամն էր:

– Լաւ չեմ գիտար, հիւանդ եմ, – ըսաւ ծնողքին:

Իրապէս աժդոյն էր, կողքերը ուռած էին եւ աչքերը կարմրած: Ամբողջ գիշերը չէր քնացած:

Մայրը ձեռքը աղջկան ճակատը տարաւ, – փառք Աստծոյ տաքութիւն չունէր: Ուղեց բժիշկին հետաձայնել, Մարիան բացարձակօրէն մերժեց:

– Բան մը չէ, կ'անցնի:

Սինեօր Մարտինելի երկար նայեցաւ աղջկան, յօնքերը կիտեց: Մանրը մտահոգութիւն մը պատեց դինք: Աղջիկը աշխատեց տեսնել չէր: Իրենց միակ դաւաղն էր եւ Սինեօր Մարտինելի կը դողար իր աղջկան վրայ:

Հմուտ ճարտարագէտ էր, հրաւիրուած էր Զուրի Ընկերութեան ճարտարագիտական բաժինը վարելու: Հակառակ խառնացի ըլլալուն, աշխարհի ամենանուաղ յաջողութիւն արարածն էր: Իր զգացումներուն կատարելագոյն կ'իշխէր, կամ, թերեւս, զգացումով աղքատ էակ մըն էր: Հանդարտ ու սառնորէն կը դատէր եւ երբեք չէր խառնուեր մարդկային բնութեան զգացական բարդութիւններուն: Եւ սակայն, երբ հարցը Մարիային կը վերաբերէր, տարբեր էակ մը կը դառնար: Կինն իսկ կը զարմանար այլաբանութիւններէ վրայ:

Աղջիկը աշխատեց տեսնել չէր երբեք: Նստաւ, աւելի շուտ ինկաւ բաղ-

կաթոռին մէջ, մտածեց երկար: Աչքերը կծկեց այնքան, որ կէտի մը վերածուեցան: Լայն շունչ մը առաւ, բռնեց, որոշման մը հասած էր. բայց կարծես անմիջապէս չհաւանեցաւ որոշումը եւ արտաշնչեց ազմուկով: Կատարեալ յուսահատութեան մը մատնուեցաւ:

– Երթանք, Ռպերտօ, – ըսաւ Տիկ. Մարտինելլի, – երթանք, եկեղեցի ուշ պիտի մնանք: Երթանք:

Վերելակի մտան, իջան, քաղցիկն դէպի փողոցի դուռը՝ առանց իրարու բառ մը ըսելու: Եղիպտացի դոնապանը դարձացած հարցուց:

– Ո՞ր է օրինորդը, եկեղեցի չ'երթար այսօր:

– Քիչ մը անհանդիստ է, լաւ չի դուրս, – ըսաւ Տիկ. Մարտինելլի, Փողոց ելան:

– Այդ աղջիկը բան մը ունի, – ըսաւ:

Ամուսինը չպատասխանեց: Գլխարկը հանեց, բարեւեց ծանօթ մը:

– Ռպերտօ, բան մը կայ, որ քեզի չըսի... Ձեզի, որովհետեւ կտրելուր չնկատեցի... Նման դէպքեր ամէն օր կը պատահին աղջկայ մը կեանքի ընթացքին... Ես ինչ գիտնամ...

– Ծիծառ, – ըսաւ Սինեօր Մարտինելլի անյոյզ կերպով, – մի շատախօսեք, ըսէ՛:

– Դիմացի տանիքը ազայ մը կը բնակի, նկատեցի, որ միշտ Մարիայի պատուհանը կը դիտէ... Կարծես Մարիան ալ անտարբեր չէ... Կարծեմ, մտաւ չեմ, ժպտացին իրարու անցած օր եւ... աչքով խօսեցան... Վստահ չեմ...

Հասած էին եկեղեցիի դուռը: Խաչակնքեցին ու մտան: Երգեհոնի Թրթռացումները լռեցուցին աշխարհիկ ձայները: Մունկի եկան եւ խոնարհեցուցին զլուսնները:

Մարիան պառկած էր անկողնի մէջ, աչքերը յառած առաստաղին: Նայուածքը արտայայտութիւնէ զուրկ, քորացած բան մը ունէր, որովհետեւ միտքը աչքին հետ իր կապը խզած էր:

Իրենց վերջին տեսակցութենէն դարձին՝ կէս մեռած էր: Սրունքները հապիւ կը բռնէին իր մարմինը: Լաւ որ վերելակ կար շէնքին մէջ, այլապէս պիտի չկարենար սանդուխները բարձրանալ: Մերացած էր, կեանքէն զոգուած: Էութեան մէջ զսպանակ մը փրթած էր եւ մարմինը ահռելիօրէն ծանրացած էր եւ կը դահլիճէր: Հողը կը քաշէր դիմքը:

Մեծ ճիգով բացաւ իրենց տան դուռը, լոյսը չվառեց, մտաւ իր սենեակը, դուռը փակեց ու ինկաւ անկողնի վրայ: Բարեբախտաբար ծնողները տունը չէին: Շաբաթ երեկոյ էր եւ այցելութեան վացած ըլլալու էին:

Հիմա չէր յիշեր որքան ատեն մնացած էր այդ դիմքին մէջ: Ձիւղեց, որ առաւօտեան ժամը մէկի սահնակը մայրը տուն վերադարձին, երբ ըստ իր սովորութեան մտաւ աղջկան սենեակը, զարմանքով տեսաւ աղջկան վիճակը. զգեստով պառկած, տփույն, կոպերը ուռած: Ձիւղեց, թէ ինչպէս մայրը ջանաց զինք արթնցնել, չկրցաւ եւ մեծ դժուարութեամբ հանեց զգեստը, կոշիկները եւ գուլպաները եւ, առանց գիշերանոցն իսկ կարենալ հալցնելու, լաւ մը ծածկեց վրան եւ մտահոգ դուրս ելաւ:

Այժմ պառկած էր անշարժ, կէս մեռած: Մէկ դադափար կը տիրէր էութեան. Ձի սիրեր զիս, Մտածումն իսկ դաշոյնի նման կը ճեղքէր սիրտը: Անկենդան պառկած էր, միայն Թարթիչներն են, որ երբեմն կը թաք-

թէին որպէս նշան կենդանութեան: Ձէր զգար, որ թոքերը կը շնչէին, որ սիրտը կը տրտնդէր:

Ձի սիրտը զիս:

Եկեղեցիի զանգերը հնչեցին երկնային շունչ մը տարածելով: Մորթին ընդմէջէն սարսուռ մը անցաւ, աչքերը լեցուեցան: Ձանգին ձայնը զինք գերազանցօրէն յուզեց: Երանելի աշխարհէ մը կու գար, ոչ այս զրդուսի երկրէն, զոր կ'ատէր հիմա:

Ինչքան աճապարեք էր: Ինչ որ միշտ հպարտ էր եղեր: Ինչպէս աւանօթ կերպով նուիրուեր էր այս տղուն: Ո՞վ էր, ուրիշ՞ կու գար: Գիտէր, ի՛ր մէջն էր երազը: Տարիներ շոյեր, սնուցաններ, մեծցուցեր էր: Կերտեր էր շեշտ տարազը, որուն մէջ եկեր մահը էր այս անձանօթը այնքան դիւրին կերպով: Ձայն սնուցաններ էր իր կուռական հոգիին, մտքին, միսերուն ու սակորներուն ու մորթին մէջ: Գաղտնի, երկիւղած, նուիրական: Ու այս բարբարոս վանտալը եկեր ու զաժանօրէն ու պիղծ կերպով խորտակեր էր ոտքին տակ: Պիղծօրէն:

Հայրն ու մայրը վերադարձան եկեղեցիէն: Լսեց դրան բացուիլը եւ աննշ քայլերուն մոնելը:

Հայրը ուղղակի աղջկան սենեակը ուղղուեցաւ, Տիկ. Մարտինելի աղաչեց.

— Քիտտ մի ըլլար:

Սինեօր Մարտինելի զարկաւ աղջկան դուռը:

— Եկուր, բարա, — ըսաւ աղջիկը ներսէն:

Սինեօր Մարտինելի կիրակնօրեայ կոկիկ հով մը զգեցած, — որուն եկեղեցին քսած էր նաեւ երկիւղած քան մը, — մտաւ սենեակ, աղջկան շնայեցաւ իսկ, քայեց զէպի բազկաթոռը, շնորհեցաւ, դիմեց պատուհան: Զարմացաւ՝ թէ փեղկը ինչո՞ւ փակ էր: Մէկէն շրջեցաւ, զինուորական դիրք մը առաւ եւ նայելով աղջկան, լատ մեղմօրէն ըսաւ.

— Ի՞նչ է պատահեր:

Աղջիկը լկրցաւ պատասխան մը գտնել:

— Քեզի հարցում մը բրի:

— Ըսի, — ըսաւ աղջիկը, — լաւ չեմ զգար... Ատոր մէջ ի՞նչ տարօրինակ բան կայ... Իրաւունք չունի՞մ անհանգիստ ըլլալու...

— Ի հարկ է, ի հարկ է, աղջիկս:

Մէկէն զարմացաւ, թէ ինչ ինչո՞ւ հոգ էր եւ ի՞նչ է, որ կը պահանջէր աղջիկէն:

— Ի հարկ է, ի հարկ է, աղջիկս... Բժիշկ կանչե՞մ...

— Պէտք չկայ, բարա:

— Հը՛մ, — ըսաւ Սինեօր Մարտինելի եւ դուրս ելաւ սենեակէն: Անհաճոյ դպացում մը վարակեց զինք: Մուրը չէր սիրեր, մշուշը զինք հիւսնող կը դարձնէր: Կը սիրէր յստակութիւնը, ճշգրտութիւնը: Մարմնամթերք իր կրօնն էր: Ձէր ուղեր, կը մերժէր մտնել մարդկային զգացական աշխարհը:

Թեթեւութիւն մը զգաց, որ դուրս ելաւ յոռի շրջանակէն: Մտաւ սենեակ, բաճկոնը հանեց: Կիրակնօրեայ թերթը առաւ, թաղուեցաւ բազկաթուռին մէջ ու սկսաւ կարդալ:

Մայրը մտաւ աղջկան սենեակը եւ դուռը փակեց: Մարիա ահաճութիւն արտայայտեց: Հազիւ մէկը մեկնած, միւսը կու գար զինք հարցա-

քրննելու: Խօսելու տրամադրութիւն չունէր: Կ'ուզէր հանդիսա մնալ, պարզապէս անտնտէր չլինել: Միտածանակ, բարկացաւ իր տնտէրին, որ իր պաշտած ժողովն անգամ կը ջանար խառնափել եւ տնտէր ներկայութիւնը տհաճութիւն անաջ բերած էր իր մէջ:

Մայրը նստաւ անկողնի եզերքը, ձեռքովը շոյեց իր ճակատն ու մտաւորաբար Վստահեցաւ, որ տաքութիւն չունէր:

— Այստեղ մուտ է: Սա փեղկը բանամ:

Աղջիկը գրեթէ պոռաց:

— Ո՛չ, մի բանար այդ փեղկը:

Մայրը խորհրդաւոր նայուածք մը նետեց աղջկան, ըսաւ:

— Աքարդութիւնը այնպէս գեղեցիկ էր այսօր... Հայր ծնողներն ալ ինչպէս ջարդ մը խօսեցաւ... Ալիսան հոն էր, քեզ հարցուց... Ի՞նչ պէտք եղար, աղջիկս... Աւելի լա՛ւ ես... Յաւ մը ունի՞ր... Կ'ուզե՞ս խօսիլ մամայիդ... Հէ՛...

Խօսելիք բան չկայ, մամա՛... Բան չունիմ... Հաւատա... Քիչ մը հանգստանալ կ'ուզեմ...

Մայրը մէկէն որոշում մը տուաւ: Ուրիշ ելաւ:

— Հանգստացիր, աղջիկս... Հոգ մի բնէր, ամէն ինչ բաւ կ'ըլլայ...

Գոտը դոցուեցաւ ետեւէն: Մարիան թեթեւութիւն մը զգաց, զըւարթացաւ ինչպէս իսկ: Մէկէն մտքին պայծառութիւն մը տիրեց: Ի՞նչ էր պատահեր, ինչո՞ւ էր ինք այդքան դժբախտացեր:

Չարմանքով հաստատեց, որ որեւէ ողորդական բան պատահած չէր: Լեւոն երբեք ըսած չէր, թէ զինք չէր տիրեր: Կապահած է, որ զինք մոլորեցուցեր էր:

Սեզճ սիրելիս, ըսաւ, թերեւ խորունկ ցաւ մը ունի: Ի՞նչ յիմարտէն վարուեցայ, թերեւս փոփոխեցի եւ դուրսդուրեցի պէտք ունի: Ա՛խ, ա՛խ, ճիշդ այն ժամանակ երբ ամէնէն շատ պէտք ունէր ինծի...

Ճանաչեց անկողնէն, ուղեց փեղկը խոնաւ: Թերեւս Լեւոնը տանիքն էր: Ձեռքը առաջ չզնոց սակայն, մէկէն կեցաւ, միտքը փոխեց: Մտածում մը կեցուց զինք:

Վհատ, յուսահեղ, քաշկուտուեցաւ անկողին եւ գէժքը թաղեց բարձին մէջ, ուսերը ցնցուեցան...

Լեւոն վարութանէն բաժնուելէ ետք, Մարիային չզնոց, ինչպէս կասկածած էր վարութան: Գալից փողոցներէն, նախ դանդաղ, աննպատակ, ապա՝ առանց գիտակցելու, ածաղարելով, համարողներու ընդհանրելով: Կը փախչէր ինքզինքէն: Աղմուկը, մարդիկ, փայլուն լոյսերը՝ առաւել եւս կը ջլադրուէին զինք: Ակամայ մտած էր մթին ու ամայի փողոցներ: Գոնեւորաւ առջեւ հոս հոն նստած էին եզրպատուհաններ եւ երեխաներ: Խառնարին մաս կը կազմէին ասոնք, կարծես երբեք չոյսը տեսած չէին: Հոգէ տնակներ եւ նիւսար արմաւենիներ: Տարբեր աշխարհ մը: Հոգէն դէպի քարը դաստիարակութիւն մեծ ցոտում մը կար: Ինքզինքը այս միջավայրին հարապատ զգաց: Մոռցուած, ընկերութենէն անկախ, սովորական դոյուութիւն մը, որ աւելի մօտ է հողին, աւելի քակահ: Օր մը, երբ հանդարտ է մտքով, պէտք է վերելուէ քաղաքակրթութեան իմաստը:

Բանի մը սանդուխ բարձրանալով՝ ինքզինք դառաւ գաղտնիքի մը վերաբեր: Անցաւ փոքր քարանձան մզկիթի մը քովէն: Իրձը ունեցաւ ներս մտնելու: Երբեք մտած չէր: Կ'ուզէր հասկնալ՝ թէ մզկիթի մը ներքին մէջա-

վայրը տարբեր էր քրիստոնեական եկեղեցիէ։ Նոյն Աստուածը չէ՞, որ կը բնակէր տմէն տեղ։ Աղօթելու բառերն ու կերպերը տարբեր էին հաւանօրէն։ Բայց ներքին բովանդակութիւնը։

Դարձաւ նեղ ճամբուն հետ։ քանի մը տանգուլ իջաւ։ Դրան մը վըրայ կանթեղ մը կը պլպլար։ Երկաթապատ ցանցի ետեւէն մթին կերպարանքները յառած էին հազիւ լուսաւորուած ներքնամասին դէմ։ Կարծես լսեց։

— Փը՛ստ, փը՛ստ... Ես խալկա... Թաալէ...

Քալեց։ Յիշեց առաջին անգամ նման տուն երթալը։ Անհաճոյ ըզչացում մը վարակեց զինք։ Ուշեց դառնալ եւ մտնել դռնէն։ Սէքն ի՞նչ էր։ Կուզէր աղարտիլ, նուաստանալ, հազին խառնուիլ։ Հոս էր վայրը։ Մախել իր հոգին, որ բզկտուած էր։ Անտեսանելի կապանքներ կաշկանդած էին զինք։ Աղատ էր, բայց չէր կրնար շարժիլ։ Կը սեղմուէին կապանքները, սիրտը կը ճմուռէր։ Աղարտիլ, ցեխին հաւասար քլլալ, սողալ փոքի վրայ։ Մախել հոգէն։

Անցաւ իզովէքէէն, մտաւ Աթապա Խատրայի հրապարակը։ Յատկեց թիւ 7 ինքնաշարժի մը մէջ, որ արդէն ճամբայ էլած էր։ Հազիւ կրցաւ հրմշտկելով ոտքի տեղ մը ապահովել։ Օդը տաք եւ անշնչի էր։ Ինքնաշարժը կը ցնցուէր շարունակ եւ ամէն ցնցումին՝ դէր կին մը կ'իյնար իր վրայ, բովանդակ դանդաղածովը։ Կացութիւնը բաշտովին անհանդուրժելի դարձնելու համար, անխնայօրէն քսուած էր աման բոյր մը, որ քրտինքի հոտին միախառնուելով, զղուանք կ'առնէր։

Քիչ ետք, տեղ մը պարպուեցաւ եւ ինքզինք նետեց բազմոցին։ Անցան Զամալէքի կամուրջը, դարձան ձախ ու մտան Իւկալիպտոսի ծառուղին, զոր շտա կը սիրէր։ Մառերը այնքան ուռճացեր էին, որ անոնց կառարները իրար կը գրկէին ճամբու վերեւ։ Սպիտակ բուններու մէջէն, ալիքն կը տարածուէին բերրի դաշտերը, իսկ ձախին՝ Նեղոսը կը հոսէր։ Թարմ, թաց ծառերու բոյրը լեցուցած էր օդը։ Ամէն անգամ երբ ինքնաշարժը կանգ կ'առնէր կայարան մը, ծղրիթներու միալար երգը կը յուզէր անհունը։ Նեղոսը անյատակ կը թուէր, երբեմն կը բռնէր լոյս մը, կը թըրթըռացնէր զայն պահ մը, ապա կը կլլէր։

Ինքնաշարժը հեռանալէ կը պարպուէր ճամբորդներէ եւ աւելի աւել կը սուրբար։ Տուները սկսան աւելի ցանցառ դառնալ, քիչ ետք կը նաւէին անհուն արտերու եւ աստղերու մէջէն։ Բռներ էին Բուրգերու ճամբան։

Քաղաքակրթութեան եւ մարդկային ընկերութեան հետ՝ ետին թողած էր խռովքը։ Վայրենի էր քիչ մը, այդպէս ալ մնաց։ Այն խմաստով, որ չէր սիրեր ինչ որ արուեստական էր։ Նախնական կեանքը միշտ կ'առնէր զինք։ Թերեւս բնութիւնապաշտ էր։ Գուցէ նախնական կեանքը այնքան ալ չհրապուրէր եթէ ապրէր զայն։ Իր զգացումը այդ էր սակայն։ Ամէն անգամ, որ քաղաքակրթութենէ հեռանար, իր անձը կը վերադառնէր։ Դատողութիւնը կը պայծառանար եւ վճռական կը դառնար։

— Վերջին կայարան, — պոռաց մեքենավարը։

Հասեր էին Բուրգերու ստորոտը։ Իրմէ դատ ճամբորդ չէր մնացեր։ Իջաւ ու սկսաւ բարձրանալ բլուրը։ Նարնջենի կը բուրէր օդը հիմա։ Մեծաւ հաւաք չեղ պանդուկի ջահերը կը պոպոզային ծառերու հովին։ Քանի բարձրանար, աշխարհ կը նահանջէր ոտքերուն տակ, կ'իջնէր, կը փոքրանար։ Իսկ իր անձը կը մեծնար դէմը։ Կ'ընդլայնէր։ Մէկէն, խաւարի պայծառ

ռութեան մէջ՝ Մեծ Բուրգը իր հսկայ զանգուածով ինկաւ իր վրայ եւ դըրաւեց տիեզերքը։ Քանի բարձրանար, կը թուէր, որ ետ ետ կ'իյնաք ու Բուրգը կը թաւալէր իր վրայ։ Մանրութեան եւ ծաւալի զգացում մը վարակեց զինք։ Նիւթը անխորտակելի էր։ Իրական, ահռելիօրէն իրական։

Նստաւ կրանիթի մը վրայ։ Ոչ մէկ ձայն։ Ոչ մէկ շարժում, անտեսանելի հովը միայն։ Եւ սակայն, այս մեծ լուսթիւնը հնչուն էր։ Անապատէն, տպառածներէն եւ հողէն հնչիւններ կը բարձրանային ու կը դաշէին զգայնութեան, բայց զխտակցութեան չէին հասներ, խօսքի չէին վերածուեր։

Աչքերը փակեց ու լսեց։ Խորունկ շարժումներու ձայնը եւ անհունօրէն փոքրէն հծծիւնը նոյնքան յոտակ, նոյնքան նշանակալից։

Հիմա, ըսաւ, հիմա ի՞նչ է պատահեր։ Ինչո՞ւ է, որ ինք այդքան դժբախտ էր նորէն ժամ մը առաջ։ Ի՞նչն էր, որ մաշող կրակի պէտք կը խողկէր զինք։

Ժպտաց։ Դժուար էր ճշդել։— ուրախութեան, հեղնանքի, թէ արեւը ռութեան։

Յիմար էակ, ինչո՞ւ չեա կրնար պարզ ըլլալ ուրիշներու նման, կեանքը առնել ինչպէս որ է, ուրիշներու նման...

Ամէն էակ փակ փեղկի մը կը նմանի, ինք կրնայ գիտել ուրիշը, դուն չես տեսներ ներսը սրովհետեւ լոյսի մէջ ես։

Օ, այո՛, այո՛, Վարուժանը սկսաւ ամբողջ խնդիրը։ Այդ օտար աղջիկը— իմբապիրը, ուսուցիչը, իր մայրը, ցեղը ամբողջ ընդմիջեր էին։

Ձէր հասկնար, իտալացի աղջկայ մը հետ սիրաբանութիւն կ'ընէր եւ ահա բովանդակ Հայ ազգը օտքի էր ելեր։ Ոչ միայն ողջերը, այլ նաեւ մեռածները։ Ձէր հասկնար։

Ինչո՞ւ իրենք այսքան զգայուն էին, հիւանդագին ըլլալու աստիճան։ Ի՞նչ հարկ կար ամէն զէպքի մէջ հայկականութիւն փնտռելու։ Մանաւանդ սիրոյ մէջ, ազգութիւնն ի՞նչ գործ ունէր։ Ձէր կրնար անխառն կերպով վայելիլ կեանքը։ Ամէն գինիի բաժակ դառն մրուրով կը վերջանար։

Անպայման մեր անցեալն է, մտածեց, զժբախտ ճակատագիրը, որ խոր կնիքը դրած էր ամէն ինչի վրայ։

Երեւոյթաբար էր, կեանքը կը յորդէր իր մէջ, կ'ուզէր սիրել։ Գտած էր փնտռածը։ Կ'ուզէր երջանիկ ըլլալ, մոռնալ իր խելութիւնը, թօթունը զժբախտ ճակատագիրը։ Պարզապէս մարդ էակ ըլլալ։

Մարդ էակը հասարակական կենդանի է, կ'ըսէր Ադամեան։

Օ՛, ան ալ, կարծես վարժապետութիւնը արեան մէջ մտած էր։ Վարուժանն ալ նոյն աստղձէն է։ Խմբագիրն ալ։ Արդէն այս վերջինին մոլեռանգութիւնը սկսած էր ջիղերուն գպիլ։ Միտքը միշտ բաց ըլլալու է նոր եւ տարբեր դադափարներու։ Քարացումը, ահա թէ ինչ, քարացումն է մեր իրականութեան տրամը։ Յիսուն, երբեմն հինգ հարիւր տարի, ետ ենք։ Մեր հայրենասիրութիւնը տոկմայի մը վերածուած է։ Ձուլումէ, կորուստէ խուսափելու համար, բնաշրջումը մեղի պաշտպանութեան միջոցներ ապահոված է։ Լացի պատ մը, ուր դարեր լացեր ենք, ու կուլանք, որովհետեւ մեր խելութիւնը չկորսնցնենք։ Մինչեւ ե՛րբ։ Մինչեւ ե՛րբ պիտի կրենք կրակէ շտափել։

Մէկ հարց գեռ յստակ չէ իրեն համար։ Իր ցեղային այս հզօր դիտակցութիւնը արտաքին, արուեստական տարա՞ղ մըն է, թէ հոսեան մէկ ներհակ բնոյթը։

Իր կոխած հողը ինչո՞վ տարբեր է Հայաստանի հողէն: Հայրենիքը միթէ պայմանագրական դադարի մը չէ՞: Իր նախահայրերը պատահօրէն հաստատուելու են հայկական բարձրաւանդակ, փոխանակ Նեղոսի հովիտ: Արդեօք եթէ հաստատուէին հոս, եզրպետական հողի վրայ, տարբե՞ր պիտի ըլլային անկէ ինչ որ եղեր են: Արդեօք: Օրինակ, պիտի կառուցանէին Բուրգերը: Անշուշտ թէ՛ կլիման, աշխարհագրական պայմանները կ'ազդեն, բայց ցեղային տարբը, մտրդը:

Ալֆան:

Այս Բուրգն իսկ անհատականութիւն մը ունի, ցեղային նկարագիր մը, Եգիպտական մասնումի եւ զգացումի արտայայտութիւն է: Կեանքի փելիսոփայութիւն մը եւ ձգտում: Կեանքը որքան սիրած ըլլալու են եզրպետացիները: Մահուան վախը չէ, որ ծնած է զայն, այլ կեանքի հղօր սէրը: Անական ասեղծագործութեան թափը, որ ուրիշ բան չէ այլ տեւականութեան սենյը: Ամէն բեղմնաւորում ուսում մըն է զէպի տեւականութիւն:

Մէկէն տարբերակ մտածում մը ունեցաւ: Իրեն թուեցաւ, որ Մարիան պիտի չըմբռնէր այս բոլորը, պիտի չզգար իրեն պէս: Անանցանելի պտտումը մը կար իր եւ իտայուհիին միջեւ: Լեզուի տարբերութիւնը, Հետը Փրանսերէն կը խօսէր եւ հարազատ չէր զգար: Իր սեփական լեզուով չէր կրնար յայտնել իր սէրը: Իրեն համար տիեզերքը արտայայտելու մէկ լեզու կար: Հայոց լեզուն: Երբեմն տարածօրէն կը զգար, որ Մարիայի հակազդեցութիւններն ու զգայնութիւնները տարբեր էին, բայց այդ աւելի գրաւիչ կը դարձնէր կացութիւնը:

Ի վերջոյ, ինք աճապարած էր գուցէ, Վարդաժան բոլորովին ալ անորաբար չէր: Օրինակ Թագուհիին հետ այդպէս չէր:

Թագուհին:

Աչքերը սեւեռեց խաւարին, ուպեց տեսնել անդին: Ո՛ւր էր արդեօք հիմա, այս պահուս: Ի՞նչ կ'ընէր: Ինչո՞ւ չէր պատասխանած իր նամակ-նորոն: Այսպէս էր կը մտածէր, չէր գիտեր անշուշտ, որ իր նամակները Թագուհիին չէին հասած, որովհետեւ տունէն փոխադրուած էր եւ հասցէն ծանօթ չէր: Յիմար նամակաբերը հաւանաբար նամակները նեղոսի մէջ նետած էր:

Հիմա որ հանգարտ էր, իր դատողութիւնը պայծառ, զարմանքով կը տեսնէր, որ յատկապէս արթուն կանչ մը եղած էր միշտ Թագուհիին հանդէպ: Ձէր կրնար խուսափել անկէ, կ'անյայտանար աւելի կը վերադառնար: Միշտ ներկայ էր եւ կարծես կը տիրապետէր իր գոյութեան: Անխուսափելի ճակատագրի մը բնոյթը կը ստանար:

Մարիան խարտեաչ էր, հիւթեղ էր: Անվերապահ նուիրում ունէր իրեն հանդէպ: Հեշտանքը զինք առած էր կրակէ օղակներու մէջ: Եթէ Մարիան աւելի հպարտ ըլլար, Լեւոն պիտի կարենար գիմադրել: Քնքշութիւնը, անձի զոհադրծումը զինք միշտ գիտաթափ կ'ընէին:

Նարնջները կը բուրդէին: Մեծ քաղաքը կը քնանար:

Մարիայի պատուհանը բաց էր: Օրեր փակ մնալէ ետք, կրկին բացուած էր կեանքին: Հաւանաբար կը քնանար Մարիան, իր պատուհանը խորունկ հրաւէր մըն էր:

Մեղք որ մոգական գորգերու դարաշրջանը անցած էր: Կարենար ռոզալ պատուհանն ի վեր եւ յուշիկ մը գողունի սահէր ներս: Միտերը, տակոյնները, մորթն ու ջիղերը թրթուացին: Ծանկութեան քոցերը գրկեցին

զինք։ Ապրիլ, ապրիլ կ'ուզէր։ Լայննալ, աստածուիլ, կեանքը սեղմել թեւերուն մէջ։ Սողալ պատուհանն ի վեր ու Մարիայի կողքին երկարել։

Հիմա աւելի կ'ըմբռնէր Եզրիկայացիները։ Այս կրքոտ, հզօր եւ առողջ ժողովուրդը։ Կրանիթեայ ցեղ, որ ըմբռնած էր նիւթին ուժը։ Նիւթը գեղեցիկ էր եւ տեւական։ Երազը, սէրը, ցանկութիւնը միայն նիւթով է, որ կարելի էր արտայայտել։ Խօսքը, ձայները, ոգին պիտի անցնէին, եթէ չզգենային նիւթին տարազը։ Նիւթն ու գաղափարը անբաժանելի էին։ Բաժանումը վերացական էր եւ արեւեստական։ Փարը, գոյնը, գիրը նիւթէն էին պեղուած եւ կ'ապրէին երբ ցոնկութիւնը թափանցէր անոնց մէջ։ Այնուհետեւ պայքարը ժամանակին եւ նիւթին միջեւ է։ Ժամանակն ալ մէկ այլ սահմանումն է մահուան։

Փարի կտոր մը փնտռեց չզտաւ։ Տանիքի տեփէն կտոր մը փրցուց, նետեց Մարիայի պատուհանին, բիւրն զգաւ եւ ինկաւ փողոց։ Երկրորդ եւ աւելի խոշոր կտոր մը փրցուց, ուժգին նետեց։ Ինկաւ աննկատին մէջ։

Մարիան արթուն էր արդէն։ Քանի անգամ եկեր էր պատուհան, փնտռեւ Լեւոնի պատկերը։ Հայրն ու մայրը տունէն բացակայ էին, շատ ուշ պիտի վերադառնային։ Պահեր երկար պառկեր էր անկողնի մէջ եւ սպասէր հրաշքին։ Կանչեր էր, թախանձեր էր, արտասուք էր։ Հծծեր էր մոլիգնօրէն։

— Եկու՛ր, եկու՛ր սէրս։

Հիմա, հրաշքը կատարուած էր։ Սենեակին յատակը ինկած խիճը սպտաւած պատգամն էր։ Թուաւ անկողնէն եւ դիմեց պատուհան։

Գիշերը, առանձնութիւնը եւ երկու սիրող սրտեր իրարու դիմաց եւ յաւիտենական անջրպետը, որ կը բաժնէ սիրահարները։

— Մարիա, — կանչեց Լեւոն, — եկու՛ր ինծի... Մոզական զորդին վրայ... եկու՛ր... Թեւ հազիւ, ցատկէ՛լ...

Մարիա զգաց, որ կրնար թռիլ փողոցի մէկ ասփէն միւտը։ Զգաց որ պիտի չզահաւիթէր, սէրը այնքան հզօր էր։ Շարժում մը ըրաւ. դէպի պատուհանէն դուրս...

Պիտի կարենային հասնիլ իրարու։ Միջոցը պիտի գրկէր գիւրնեք, պիտի քայլէին անոր վրայէն։ Ոչ մէկ երկրային ուժ պիտի արգելէ հանդիմանալու իրենց։

Սէրը ամենակարող էր։

Սատանան մտած էր Մարիայի արեան մէջ։

— Եկու՛ր, — շնչաց, գուն եկու՛ր... տունը մարդ չկայ... Մոռնիկը երկու ժամէն հազիւ կու գան...

Լեւոն ոտնդուխներէն թռաւ վար, ստուերի մը պէս անցաւ փողոցը եւ դռի մը նման սկսաւ բարձրանալ Մարիայի տունը։ Դռնապանը կը խրոկար։ Քանի բարձրանար, շունչը կը կտրուէր, սիրտը կը ծեղնէր գուրս պիտի ցատկէր։

Մարիա գուրը կէտ մը բացած կը ապաստէր։ Գողթի մը նման ներս սաղսկեցաւ, գուրը ետին փակուեցաւ։ Այլիկը մուրի մէջ ձեռքէն բռնած, մասնորոն վրայ կոխելով, զինք տաշնորդեց իր սենեակը։ Երկրորդ դուռը իրենց ետին կղզուեցաւ։ Աշխարհէ կտրուած էին։

Խենթեցան։ Բաղեղներու նման իրարու պլլուած։ Պահերն անցան, կեանքը տնալ հազաւ, մոլիգնեցաւ, քաղցրացաւ։

Լեւոնի ջղային ձեռքերը գտան, որ աղջիկը շղարչէ թափանցիկ գի-

չերանոց մը հազած էր: Երեւակայութիւնը կրակ առաւ: Ձեռքերը մոռթին մէջ փնտռեցին ու գտան զաղտուկ հմայքները անծանօթ փթթումներու: Փորձութիւնը գինովցած էր եւ գիտակցութիւնը կորսնցուցած: Մօտալուտ վտանգի դէմ, պաշտպանութիւնները ինկեր էին:

Մարիան կորած էր: Իր անձը անդունդը ինկաւ, քիչ առաջ, կ'ըր եւ ինչպէս, չէր յիշեր: Իր մարդրիտները ձգեց խորունկ ջուրերու մէջ: Ձէր ջանար պաշտպանուիլ, ամօթի զգացում չուէր, ինչպէս այն օրերուն, երբ զեռ մեղքը ծնած չէր: Մաքուր էր մարմնով, մաքուր էր հոգիով: Իր անձին տարաշխարհիկ բոյր մը կը ծաւալէր: Տաք էր զոհին նման, որ պիտի մորթուէր: Կը բաւէր, որ Լեւոն ձեռքը երկարէր, պիտի իյնար կամովին, հեշտապէս: Առանց զղումի:

Լեւոն կ'այրէր ինչպէս մորենին Սինայի վրայ: Կեանքը եւ յաւերժութիւնը, առած էր իր թեւերուն մէջ, յաղթական: Մեծութիւն մը կը հրահրէր գինը: Մեծութեան մէջ միշտ վայելչութիւն մը կայ: Յաղթականն կը վայելէ պաշտպանել իր ընկճածը եւ բարձրացնել զայն: Կնոջ հանդէպ վեհ ըլլալը՝ առնականութեան առաքինութիւնն է: Կինը, ըստ Լեւոնի, տկար էակ մըն է, որուն հանդէպ ասպետական պէտք է ըլլալ:

Գաղտնի հանդիպումները կրկնուեցան: Մէկ խիզախութիւն կը գիւրացնէ յաջորդը: Խիզախելն ալ սովորութիւն կրնայ դառնալ: Հետզհետէ նուազ չըջանայեաց ու խոհեմ եղան եւ աւելի անձնատու՝ ցանկութեան յորձանքին: Փամեր կը յամենային համբոյրներու եւ զրկախառնումներու մէջ: Ձէին կշտանար: Յաղթումը կրկին փորձելու, կրկին լիանալու մէջ էր:

Լեւոն միշտ կը պահէր իր ասպետական վայելչութիւնը: Մարիայի յարգանքը անոր հանդէպ շարունակ կը մեծնար: Սխալած չէր իր վստահութեան եւ ընտրութեան մէջ: Լեւոն ամէն կերպով արժանի էր իր սիրոյն: Բացի իմացական փայլէն ու գեղարուեստական խառնուածքէն, տըղան օժտուած էր նաեւ հաղուադիւտ առաքինութիւններով: Ուժեղ նկարագիր մը, որ բովանդակ անձէն եւ այդ նոյն անձի արտայայտութիւններէն կը հոսէր: Մարիան շատ կարգացող էր եւ հոգեբանութեան ասանող մը: Մարդն էր իր փնտառութիւն առարկան: Յրէօյտը, Եունկը, Ատլէրը ամբողջ կարգացած էր: Յրէօյտը իր աստուածն էր: Ըստ իրեն, առաջին մարդ էակն էր, որ կրցեր էր թափանցել այնքան խորունկը:

Այս կէտին մէջ իրարու շատ համաձայն էին: Լեւոնի համար եւս մեծ անծանօթը, մարդն էր: Կենդանական տշխարհը, բնական գիտութիւնները զինք կը հետաքրքրէին այնքանով, որքանով կը նպաստէին մարդու մեկնաբանութեան: Յրէօյտը նոյնքան կը սիրէր, բայց ունէր իր վերապահութիւնները: Օրինակ, Էօտիպոսի բարդոյթին կապուած եղբակացութիւնները չափապանցութիւն կը նկատէր: Ձէր սիրեր հոգեվերլուծումը այն առարկութեամբ, որ հիւանդագին, ձեւազեղծուած ու հունէն դուրս եկած հոգեկան ու մտային վիճակները չէին կրնար չափանիշ նկատուիլ լուծելու մարդկային բնականոն հոգեֆիզիքական աշխարհը: Անշուշտ կը գիտակցէր, որ քննակննդ բառն ալ յարաբերական սահմանում մըն էր: Ըստ իրեն, Յրէօյտ շատ կը կռթնէր հիւանդագին եւ անբնականոն վիճակներու վրայ՝ մեկնաբանելու համար հոգին եւ հիմնաւորելու իր տեսութիւնները:

— Մարդ էակը հետաքրքրական եւ կախարդական է իր բնականոն, առողջ վիճակին մէջ: Խնայարուած միտքը մեղեկական, անմարդկային: Դժբախտաբար բան մը ունի, որմէ կը խորշիմ:

Կարծես կենսիցի հրաշքը իմաստութեան եւ կարգի հետ առնչութիւն մը ունէր: Լեւոն աւելի ճշգրիտ բառ մը գտած էր:— Գիտակցութիւնը: Ասոր համար էր, որ մարդ էակի մօտ գիտակցութիւնը Արարչութեան պատկերումն էր: Ինչ որ Ֆրէժոյտի մօտ կը հմայէր Լեւոնը, անոր սեռային տեսութիւնն էր: Մարդու հոգեկան եւ զգացական տունցքը իր սեռային կառոյցն էր: Այս մէկը հոյակապ գիտ էր:

— Տեսա՞ր, կ'ուրախանար Մարիա, — քեզի չըսի՞, դժուարութեամբ համոզեցի, որ կարգաւ: Քեզի չըսի՞, որ փիլիսոփաները չեն բուեր:

Ծիշդ էր: Բայց Լեւոն չէր սիրեր միակողմանի մարդկիւն: Այս մեք մեծ դարու մեծ մեղքերէն է՝ մտանգիտացումը: Ձէր հասկնար, թէ ի՞նչպէս կարելի էր մարմնի մէկ օրկանը մեկուսացնել եւ զայն նկատել անկախ միւսերէն, ինչպէս՝ սիրտը, լեւրդը, թոքը, եւայլն: Ի հարկ է, բոլորը կ'ընէին, որ մասնագիտացումը չէր անտեսեր այս իրողութիւնը եւ նկատել ունէր տուեալ օրկանին առնչութիւնը ընդհանուրի հետ: Ատիկա խաբկանք մըն էր: Մարդկային միտքը կեդրոնանալու հակումը ունի: Լուծքի եզնեւրու նման, միայն իր ընթացքը կը տեսնէ: Մեր զգայարաններն ու անոնց ետին՝ ուղեղը, նոյն սահմանափակումներն ունին: Մեր աչքը չի կրնար տեսնել ինչ որ իր տեսողութեան ծիրէն դուրս կը մնայ, եւայլն:

Հոգեբաններն ալ, աւելի քան ուրիշներ, նոյն հիւանդութենէ կը տառապէին: Կը կարծէին, որ միայն իրենք կը տեսնէին ճշմարտութիւնը եւ միայն իրենց դիտած ուղղութեամբ կ'ընթանային: Կենսիցի երեւոյթները աւելի բարդ ու տխրահրական են: Անհունօրէն աննշան երեւոյթը տխրահրական հայրօրթիւն հետ նոյն առնչութեան մէջ է, որքան անհունօրէն մեծը:

Ֆրէժոյտի նման հսկայ մը անզամ, չէր կրցած խուսափիլ մարդկային այս տկարութենէն: Իր գինով Հոգեբանութիւնը՝ ուսումնասիրութեան մէջ, խօսելէ քաջ կ'ընէր սեռային կենսիցի մասին, կ'եղբարեակէ. «Բայց պէտք է յիշել, որ կինը ասկէ զատ կրնայ նաեւ մարդկային էակ մը ըլլալ: Ի՞նչպէս կարելի էր մարդկային էակը եւ անոր սեռային կեանքը իրարմէ զատել: Ահա այս է, որ Լեւոն կը քննադատէր:

Եւ ասկայն, Լեւոն կը հիանար Ֆրէժոյտի վրայ: Մենք երբեմն համաձայն չէինք իրեն, որովհետեւ իր ըսածները անհաճոյ են մեզի: Ծշմարտութիւնը իր մերկութեան մէջ հաճելի չէ միշտ: Այնուամենայնիւ Ֆրէժոյտ բացած էր նոր աշխարհ մը, որ անծանօթ էր մեզի:

Մարիան վերջին խօսքերը չլսեց, ականջները լսեցին ձայները, բայց գիտակցութեան չհասան: Նայուածքը հիացումով յառած էր Լեւոնին: Հիացումը ուղղուած չէր ազուն պրաւիչ արտաքինին: Երբ Լեւոն կը խօսէր ուղեկան բաներու մասին, աչքերը կը լուսաւորուէին ճառագայթով մը եւ արտակարգօրէն կը գեղեցկանային: Խորութիւն մը կը ստանար նայուածքը եւ կը թացնար: Զգացումը միշտ կը տիրապետէր, մինչեւ իսկ տեսական բաներու մասին խօսած ժամանակ:

— Գտա՛յ, գտա՛յ վերջապէս... Ամբողջ ժամանակը, քեզ ճանչնալէս ի վեր, կը փնտռէի... Քու հմայքը, անդիմադրելի կախարդանքը... Զգացումն է... Ամէնէն աննշան բաներու մէջ իսկ, զգացումդ ներկայ է... Միշտ խոսով ու վարակող... Ուրկէ՞ կը ստանաս այդ ուժը... Քու ազգականիցները բոլորը կը նմանին քեզի... Ըսել կ'ուզեմ, ցեղային յատկանիշ մըն է, թէ գուրացաւութիւն ես... Ձեռ կարծեր, հաւանական չէ, որ ցեղային ըլլայ... Հաւանական չէ...

Ինչ որ հայկական է, իր մտքին մէջ կը կապուէր Լեւոնի: Ինչ որ գի-

տէր այդ ժողովուրդի մասին, Լեւոնէն լսած էր: Ուզած էր, որ վարդար Հայոց ժողովուրդի մասին: Բայց Լեւոն չէր կրցած ոչ-հայերէն լեզուով գրգռել հայթայթել իրեն: Շատ հաղուստիւտ են, ըսած էր, եւ այդ քիչն ալ պիտի զոռնեն:

Մարիա կ'ուզէր ճանչնալ այս ժողովուրդը: Տարօրինակ ժողովուրդ մըն էր, ոչ անոր համար միայն, որ իր սիրածը հայ էր, այլ առ հասարակ, հետաքրքրութեան եւ որոնումի համար: Արեւելքը միշտ կը կախարդէր զինք: Թերեւս, պատասխանը չատ մը անծանօթներու, — որոնք զինք կը մատանլէին, — Արեւելքէն պիտի գար: Լեւոնը պիտի կրնար աւելի լաւ ըմբռնել:

— Իմ տեղը, զիտեմ հիմա, Արեւելք է: Վճռականօրէն Արեւելք է:

Ձէր քաւեր կրկնել՝ Լոյսը Արեւելքէն կու գայ: Դասագրքերու մէջ դրուածը անբովանդակայից եւ անկենդան էր: Կ'ուզէր իր ալեբերով տեսնել, զգալ եւ ըմբռնել:

Հելլադան զմայլելի էր: Աթէնքը, մեր քաղաքակրթութեան մայրը, Աթէնքը ինքն ալ Լոյսը պողցած էր Արեւելքէն: Եզրիպտոսէն, մանաւանդ: Որքան կը բաղձար, Վերին Եգիպտոսը տեսնել: Հոն է, կ'ըսէին, բո՛ւն Թ-գիպտոսը: Փարաւոններու Հովիտը, Լուքսորի ու Քարնակի տաճարները եւ Նուբիական Լեւոն: Եւ Լոյսի կախարդանքը:

Հօրմէն կը խնդրէր միշտ, բայց հայրը կը ձգձգէր երազուած ճամբորդութիւնը: Օր մը, երբ բաւականաչափ դրամ հաւաքէր, պիտի մեկնէր: Լեւոնի հետ, անշուշտ:

— Ի՞նչ հիանալի պիտի ըլլայ:

Լեւոն չհասկցաւ:

— Այն՝ որ միասին Վերին Եգիպտոս այցելենք:

— Իմ ալ երազս է այդ, — ըսաւ Լեւոն:

Բ. Կ.

(Շար.)



ԻՄ ԿՈՐՍՈՒԱԾ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ես ո՞ր թամբէն քեզի հո գամ, ուրիշ՝ դառնամ որ գտնեմ քեզ,
 Ո՞ր երկինքին տակ կը մընառ կամ ո՞ր լեռան լանջին քառում,
 Փառարկեցում մէջ ես մըքին քէ գաշտեցում մէջ ծաղկազէն,
 Դարձան օր մը ինձմէ անդաքս դո՛ւմ կոբաւած պատանաքիւն:

Առտու մը երբ զիմացս ելար քա ճամբորդի մայրազն ուսիդ,
 Այժմբաւ մէջ հեռունեբում լուս կարօ՛տը կար ճըփամուտ...
 Դէմքիդ վըքան ուր քա լացի փոխան համակ խնդ ու ժըպիտ,
 Եւ քայլերուդ լոյս հետքերէն վառ ծաղիկներ բուսան ճամբուդ:

Ինչպէս եղաւ որ չըզգացի, չըհասկըցայ ես քեզ յաւէտ...
 Ինչպէս քեքե՛ւ, լուս տանցաւ քաժամուրի ժամն այդ վերջին,
 Ի՞նչ մէջս ինձի՞ հետ կը մընառ, քէ ես կու գամ քա հետեւդ,
 Իբր կամշուտ ճակատագիր երկուսդեակներ մենք միասին:

Ոչ մէկ վերջին ողբագութում, ոչ մէկ արցումն ու հառաչումք,
 Գացի՛ք, գացի՛ք ինձմէ յաւէտ հեռունեբում կախարդումին...
 Քա կորուստիդ փոխան բերաւ կեանքն ինձի սօն ու խթանումք,
 Կինքումն հետ՝ գնաւորումին մէջ ես մոռցայ վիշաք վերջին:

Հիմա զարճեք կը կանչեմ քեզ, կ'ըսեմ քեզի՝ Գո հեղուր, Է՛տ,
 Եկուք աժպշոյ քեզինքումն տընալոյս ուղիներէն,
 Վերադարձիւ առաւօտեան արշալոյսի շողերումն հետ,
 Բե՛ք հասնում ծաղիկներում ու վարդերում բոյրերն ամէն:

Դարձիւ միայն, վերադարձիւ, պատանաքիւն իմ կոբաւած,
 Բեր քեզի հետ կին օքերուս անգիտութիւնն երանական,
 Բեր միամիտ, ազատ տըզու իմ երազներըս ռսկեմած,
 Եւ զօրացու՛ր զիս կին գիւնոյդ քաղցրութեամբ անապական:

Եկուր հիմա, եկուր միայն, ինչ փոյք ըլլաւ մերկ ու միմեկ,
 Եւ սովաւանջ քշուառութեան պատած վերջերս վախարառ,
 Ես քեզ համար վար կը բերեմ զիբդ ամպերէն քաքս ու բամպակ,
 Խոնջած մարմնիդ մտինն կու տամ շուշաններում փռնդէն շաղառ:

Արդ կը փրչեն պաղ քամիներ, աշուն է տես, ցուրտ է հիմա,
 Կեանքի զաշտին մէջ մընացեք քա անժառանգ, հեռքեր զատարկ,
 Հիմա ճեզի կը պալատիմ իմ կին տըքերս, օրեր ազկեայ,
 Վերադարձէ՛ք եւ յեցուցէ՛ք պարապութիւնն այս անյատուկ:

Գ. ՍԻՂՈՒՆ

ԱԼՊԵՐԹ ԶԱՐԱՃԵԱՆ

ԱՐԵՒ ԲՈՅՐԻԿԸ ԹՈՂ ՔՆԱՆԱՅ

— «Երթանք եւ պահուրտութիւն խաղանք» կ'ըսէր Վաղարշակ: «Ո՛ր, կը պատասխանէր Սերգօն, մեր ձայնէն Արեւ թորիկը կրնայ արթննալ...»

❖

1916-ի սարսափի տարիներուն էր՝ Մուսուլ:

Տէր-Զօրի եղեռնէն շատ փոքր թիւով բախտաւորներ փախած եւ պահուրտած էին Մուսուլի մէջ:

Զարդէն չբաշքով աղատած՝ ծառայող մըն էր Տիկ. Անժէլ, արաբ եկեղեցիի մը մէջ: Այդ սեւ օրերուն ապաստան մը գտնել մեծ բախտաւորութիւն էր: Եկեղեցւոյ մէկ անկիւնակը կը բնակէր ինք, իր հետ երկու մանչուկները, Վաղարշակը եւ Սերգօն, եօթը եւ ինը տարեկան, եւ իր աղջնակը Արեւ՝ երկու տարեկան: Գետնայարկ այդ խուցը, եկեղեցիի մը մէջ, դրախտ մը կ'երեւար իրենց, ապահով, թշնամիներու սուրէն հեռու:

Աստուծոյ տան մէջ աշխատիլ հոգեկան մեծ մխիթարութիւն էր նոյն ժամանակ: Ամէն օր կ'աւելէր Տիկ. Անժէլ եկեղեցւոյ սրահը, անցքերը, եւ հսկայ բակը: Ամէն աւել շարժելուն, աղօթք մը կ'ընէր մտաքի: Իր աղօթքներուն մէջ յուզմունքով կ'աղերսէր Աստուծոյ, որ

զիտ խաչուող իր ազգին: Երբ խորան կ'եւլէր առարկաները սրբելու, ծնկաչօք կուլար ու կ'աղաչէր Աստուծոյ, որ ինք ալ մաքրէ մարդոց խիղճերը եւ վերջ տայ այս սեւ օրերուն: Հաւատքի իր ներքնաբերդին կոթնած, երկու տարի շարունակ աւելց, աղօթեց ու լացաւ: Յոյսը երբեք չլքեց զինք:

Եկեղեցիին շատ մօտիկ քանդուած բաղնիք մը կար, որուն աւերակներուն մէջ պահուրտութիւն կը խաղային Վաղարշակն ու Սերգօն: Անմեղ այս մանուկները ասանեակ մը տարիներու փորձառութիւն իւրացուցած էին արդէն եղեռնի մէկ տարուան մէջ: Բաղնիքին ամէն մէկ քարը, խոռոչը, եւ գետնայարկ ներկուղները գիտէին: Հոն կը պահուրտէին երբ զիրենք հալածող մը ըլլար, կամ անցնող զինուոր մը երբ տեսնէին: Իրենց աշխարհն էր եկեղեցւոյ գետնայարկ սենեակը, բակը, եւ բաղնիքին աւերակները:

Օր մը, անակնկալօրէն, Անժէլն ալ փլած բաղնիքը դնաց: Տղաքը զարմացած իրարմէ նայեցան: Գիտէին թէ մամաները պահուրտութիւն չեն խաղար, բայց ինչո՞ւ եկած էր, եւ տխուր՝ ամէն կողմ կը դիտէր: Պատեցուցին զինք աւերակներուն մէջ, հոն՝ ուր իրենք օրն իրուն խաղալու դատապարտուած էին: Անժէլ յիշեց իր մանկութիւնը, դպրոցը, մանաւանդ իրենց անասնման այգիներն ու պտղատու ծառերը, ուր ինք ըն-

կերներով ազատություն կը վազէր, կը խաղար:

Ձմռան տը ինք իր անցեալի յուշերով զրադի շատ, շուտեց կորսուիլ իր խորհրդածութիւններուն մէջ: Անցեալը կարեւոր չէր, ներկայիս մահուան ճիւղին տղապետը հրատապ հարցը կար մէջտեղ: Լաւ մը քննեց աւերակները, եւ շուտով դարձաւ եկեղեցի, իր թաքստոցը, ուր շաքարներէ ի վեր աղջնակը քաղցած, հիւժած, անկիւն մը նետուած էր՝ դատապարտուած սովամահ ըլլալու:

Իր աղօթքներուն մէջ միշտ կը խոնարհէր Տիկ. Անտէլ Աստուծոյ, որ ազատէ Արեւը: Այդ օրերուն մահ՝ չեղանկիւրէն ազատութիւն կը նշանակէր: Ամբաներէ ի վեր կաթիլ մը կաթ չէր խմած Արեւը, լաթի մը մէջ փաթթուած շաքարի կտոր մը, իր ստինք, բերին մէջ, կը ծծէր շարունակ: Երկու ամիս է, միակ կերակուրը այդ էր: Այդ գիշեր շատ հանդարտ էր Արեւը:

«Ելէ՛ք աղաքս, շուտ ելէ՛ք, Աստուած մեր տունը այցելեց»: Հաւատացեալ Անտէլ այս խօսքերով արթնցուց իր մանչուկները, ատուան մօտ ժամը երկուքին: Աչքերին չփնտր արթնցան Վաղարշակ ու Սերգո, հետաքրքիր՝ տեսնելու թէ ո՞վ է սա ամենահզօր Աստուածը, որուն մասին շարունակ մաման խօսած է իրենց: Մտքներին երբեք չէր քնացած, քաջութեամբ Արեւին մահուան սնարին մօտ նստած, սպասած էր անխուսափելիին: Կէս գիշերին, անձայն, Արեւին հոգին խոյս տուած էր իր սակոր ու մորթ մնացած մարմնէն: Երբ աղաքը արթնցան, մոմի մը պլպլացող լոյսին մէջէն տեսան թէ մայրիկը անհետաց

լաթի մը մէջ փաթթած էր իրենց քոյրիկը:

«Մայրիկ ո՞ւր է Աստուած» հարցուց անմեղօրէն Վաղարշակ: Վշտահար մայրը, լռիկ, անկարող, նայուածք մը նետեց Արեւին անուշ մարմինն:

«Ասկէ հաջ, ձագուկներս, Արեւ քոյրիկը ուրիշ տեղ պիտի պառկէ, մեզմէ քիչ մը հեռու, բայց Աստուծոյ մօտ. Սերգո՛, դուն այս փորիչը վերցուր, դուն ալ այս փոքր բահը: Ես ալ Արեւը դրրկած, պիտի երթանք եւ բազմեք աւերակներուն մէջ պիտի պառկեցնենք Արեւը. երբեք ձայն պիտի չհանէք. մա՛րդ պէտք է իմանալ»:

Անտէլ գիտէր արդէն թէ փրատակներուն ո՛ր մասին մէջ պիտի թաղէր իր ձագուկը: Վաղարշակ պահակ կեցած էր, երբ որեւէ շուռկ կամ պահակի ձայն լըսէր լուր կու տար որ կեցնեն փորելը: Գիշերուան խոր լռութեան մէջ, շտապով փորեցին փոքր գերեզման մը, տեղաւորեցին Արեւը փոսին մէջ, անղաղաղ: Անտէլ ծոցէն խաչ մը հանեց եւ տեղաւորեց աղջկան կուրծքին վրայ: Վաղարշակ ու Սերգո իրենց թաթիկներով, եւ քաջ Անտէլ բահով, շուտով թաղեցին Արեւը: Հողակոյտին վրայ կարճ աղօթք մը ըրաւ Անտէլ: Եւ հեռացան շուտով: Իրենց արցունքները մնացին Արեւին մօտ, որպէս ծաղկեպսակ:

Իրենց քոյրիկը թաղելէ հաջ մէյ մըն ալ պահուրտուք խաղալու չզայցին:

«Երթանք», կ'ըսէր Վաղարշակ:

«Ոչ», կ'ըսէր Սերգո՝ «Մեր ձայնէն Արեւ քոյրիկը կ'ընայ արթնալը»:

Ա. Թ.

Լոս-Անճելոս



ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Քեզի կ'ազդեմ խօսքերն այս, քեզի՛, ո՛վ իմ սրբազան հայրենի տուն, դո՛ւն որ պիտի գաս Պէգառովը պառնասէդ անհաս, մտնելու խորհուրդներով յուսի՛ տառարն իմ հոգւոյն, արքեցնելու համար զիս խօլահամ պարտովը անգիմազրելի սիրոյդ։

Քեզի՛, անսոցիւտ հայրենի տուն, քեզի՛ կ'ազդեմ խօսքերն այս, որ զը պատրաստուիս գալ ծագերէն անհաս, ու անտեղիտալի ջրվէժի մը պէս պիտի թափես երբեք ուսկի գունին մէջ ու գորովիդ գրգռմանը խռովոյժ հոգիս լուսնաւ...։

Դո՛ւն երկնակարկառ ակունքներէն թոռոյ յուսատու աստղն ես յաւէտ ու կենսէին յաւերժութիւնն հովանաւորդ ուժն անխորտակելի։ Յայտնուս յաւերժական հովովոյթին հրեղէն յառաքէ՛ր՝ չնաշխարհիկ սիրոյդ ակունքէն կը յարդի ու հոգէն ծծուող հեղեղին պէս մարմնիս բջիջներուն մէջ կը խաժէ։

Դո՛ւն անպարագիծ ու բեղմնաւոր ըսյնն ես իմ անկորնչելի մանկութեան, բաղձանքի երկնալաց բարձունքներով եզերուած տարածութիւնն ես ջրաբքի։ Փշրէ բազուկներդ պարաւանդող ամբիւստ անուրներն օրինազանց օտարներուն ու հրատաշտ պապակդ մի՛ յագեցնէր պղտոր ակերէն բթող հեղուկովը կոսկածելի ազբիրներուն։

Թռի՛ր լուսաթրթիս գաւակին վրայ անբոցական երիվարիդ սանձակոծ, ծո՛ւփ տուր շիկակարմիր վարսերդ չու, ու լիակազմ երգերովդ տկոսէ՛ փրփրակուտակ տաքածութիւնը մեր սիրտերուն։ Հո՛ւն թագ բազրոջի սէրդ շուշանագէզ ծաղիկներուն պէս գործուն ու զմեզ արքեցնէ այսօր եւ յաւիտեան...։


Թո՛ղ բռն քէ կեանքը կարն է ու աշխարհն ունայն, ալ ինչո՞ւ օրորուի ու տառապիլ յիշատակովը հայրենի տան։ Թո՛ղ որ բռն քէ կորսուած հայրենի տան սէրն ապարդիւն է ու անոր զգլխիչ հաճոյքները սնուի...։ Թո՛ղ որ մարդիկ միսթարտին անգնական կեանքին անըմբռնելի առեղծուածովն ու բազմապիսի պատրանքներովը շողշողուն, ինծի համար, հայրենի՛ տուն, յաւերժութիւնը դո՛ւն ես, դո՛ւն։

Արեւին ու աստղերուն խտացած ցոլքը չի՛ հաւասարիր չու էութենէդ ճառագայթող շողերուն...։ Լուսինը կը շիկմի էրբ դուն բախտերիկդ գամգրագէզ ծախսդ իր լոյսովն կ'աստատես...։ Դո՛ւն որ կաս, հայրենի՛ տուն, ու էութիւնս անպարփակ սիրովդ հ'ազդես, ալ ինչո՞ւ միտքս պատրանքներուն կարկառած ստիգներովը սնուցանեմ...։

Քեզի՛, ուրեմն, քեզի՛ կը կառչիմ ես, հայրենի՛ տուն, այնպէս՝ ինչպէս բարձրաբեր շննքերը շանթարգիւններուն, ինչպէս ծառի մը մատաղ բարունակները իրենց մայր բունին...։ Մեր հայ լինելութեան փականքին փրկարար բանալին դո՛ւն ես ու չու բարձրաթռիչ սիրով մեր համակ էութիւնը կ'իմաստաւորես, հայրենի՛ տուն...։

Հովիվուտ, Քալիֆ.

ԳԵՂԱՄ-ԳԵՂԱԿ



ՎԷՊԻՆ ԱՐՈՒԵՍՏԸ

(ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑԻ ՄԷՋ ԿԱՐԴԱՑՈՒԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ)

ՎԷՊԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ՍԹԵՆՏԱԼ.— Վեպը հայելի մըն է, որ կը պատկերէ մեր ժամանակների հայտնիքները:

ՊՈՒՐԺԵ.— Վեպը վեպի մը պատմություն է, կամ կեանքի մը ընթացքը:

ՖՈՐՄԱԿԸ.— Վեպիմ հիմնական յատկանիշը, որ միանգամայն ընդունուած է առկայից ստեղծագործողի ինչպէս ձախ աշխատանքի մը, որ վեպի մը պատմություն է:

ՊՐԻՆԻՍԻՊԻ.— Վեպը նկարագրութիւնն է այն պայմանին որ տեղ ունի մարդկային գոյնը:

ՇԱՐՏՈՆ.— Վեպը երեւակայանքիմ հերկ մըն է որ ունի գործողութիւն, տնային տնային:

ՀԻՓՈԼԵ.— Վեպը արտագրութիւն մըն է երեւակայանքիմ: Ան փորձ մըն է ըստեղծելու տեղեկութ մը որ ըլլայ մարդկային չափի վրայ, տարբեր իրական աշխարհին, բայց ամբար պարզակից, Տիեզերք մը որ կը լսուի ըլլալ առկայի գոյնը:

ՊՈՒՐԺԵ.— Վեպը երբ մըն է մեր զգացական տնային:

ԲԻՐՏԵ.— Վեպը գրական սեռերուն ամենէն կերպով ըլլալ է: Ամենէն յարաշարժ, հմարագիտութիւն պահանջողը:

ԼԵՈՆ ՏՕՏԷ.— Վեպը իրականութիւնը երազով շարունակելու փորձ մըն է:

ԺՕՐԺ ՍԱՆՏ.— Վեպիմ նիւթը իրական մարդը պէտք չէ ըլլայ, այլ իտեալ մարդը:

ԿՈՆՖՈՒՐ ԵՂԱՅԱՐՆԻ.— Արդի վեպը կը կառուցուի փաստագրութիւն վրայ, կամ իրականութեան վրայ հիմնուած գեղարուեստի գեղարուեստ վրայ: Պատմարանները ազգային պատմութեան են, իսկ վիպասանները՝ մերկան պատմութեան:

Ա. ՅԱՅՈՒՄ

տեղեկութիւններուն.

Իմացականութիւն, գեղարուեստ,

երեւակայութիւն:

Կատարեալ վիպասան մը պէտք է հաւատարմութիւն տէր ըլլայ մարդին հե-

տեղեկութիւն մը՝ առանց որուն կարելի

չէ ստեղծագործել, որ յաճախ կը կոչուի տաղանդ եւ երբեմն հոնճար:

Վիպասանը մայր մըն է, որ կը փափաքի ծնունդ տալ զաւակի մը որ վէպ կը կոչուի:

Մեր երեւակայութեան գաղտնիքը բաճակներէն մէկուն մէջ, յանկարծ երեւան կու գայ շարժում մը: Մեր ենթագիտակցութեան հողին վրայ ինկած հունտ մը սկսած է աճիլ: Այդ հունտը կընայ ըլլալ գաղափար մը, տեսնուած գէմք մը, լսուած դէպք մը: Շատեր կ'ունենան նոյն գաղափարը, կը տեսնեն նոյն գէմքը, կը լսեն նոյն դէպքը եւ այդքան, միայն վիպասանը ունի ենթահողը, այդ հունտը անճեղհելու համար: Ան աւելի լաւ կը մտածէ, աւելի լաւ կը տեսնէ, աւելի լաւ կը լսէ: Կրնայ որոշ երեւոյթներու միայն անդրադառնալ, բայց կը տեսնէ բաներ, կը լսէ ձայներ, կը պատկերացնէ գէպքեր, որ ուրիշներու համար աննկատ կ'անցնին:

Միայն տեսողութեան եւ լսողութեան զգայարանները սուր չեն վիպասանին մօտ, այլ միւս երեքն ալ, եւ մանաւանդ ան ունի կարծէք վեցերորդ ըզգայարանք մը:

Ուրեմն այդ հունտը օրերով, ամիսներով երբեմն՝ կ'ապրի հեղինակին երեւակայութեան մէջ: Դէմքերը երթալով կը յատականան, գաղափարը կ'աճի ու կը ճիւղաւորուի, դէպքը ծնունդ կու տայ ուրիշ գէպքերու: Հեղինակին ուղեղը յիշէ աշխարհով մը: Կը տառապի ան անոշ տառապանքով մը, կ'ուզէ ծլնունդ տալ այդ ենթագիտակցութեան մէջ ապրող էակներուն, տեսնել անոնց աճիլը իրմէ դուրս:

Վիպասանին մեծագոյն հաճոյքն է ի լոյս ընծայել այդ աշխարհը որ իրմէ ծնած ըլլալով հանդերձ իրմէ անջատ է. այդ էականը որ իրմէ անկախ կեանք մը պիտի ապրին, պիտի ըլլան երջանիկ կամ դժբախտ: Պիտի ապրին իրենց ուրոյն կեանքը զարբերու ընթացքին, միմեկին իսկ մոռցնել տալով իրենց հարազատ հայրը, վիպասանը. ինչպէս ըրին՝

Տոն Քիշոթ, Ռոպէնսոն եւ Մանոն Լէսքօ:

Վիպասան մը իր գործը կառուցանելու համար պէտք է ըլլայ հողերան, փիլիսոփայ, բնկերարան, կենսաբան, գիտուն եւ բանաստեղծ:

Կիանքը յաճախ իրեն չի տար պէտք եղած նիւթը: Կարելի է իրական կեանքի մէջ գտնել կատարեալ վէպի տուեալները, մանրամասնութիւնները. յաճախ դէպքին կը պակօին դէմքերը եւ տեքստները. դէմքին կը պակօին գէպքեր եւ վայրեր: Պէտք է այդ պակասները ինք ստեղծէ, գործածելով կեանքէն ունեցած իր փորձառութիւնը, իր ամբարած մըտային պաշարը, իր տեսած վայրերը եւ գէպքերը: Իրական կեանքէ վէպ գոյութիւն չի կրնար ունենալ, եթէ վէպը կը նկատենք արուեստի գործ մը:

Որովհետեւ արուեստի գործ մը չի կրնար իրականութեան ընդօրինակութիւնը ըլլալ, այլ իրականութեան այլափոխումը:

Վիպասանը պիտի գիտնայ ստեղծել յարմար վայր մը գործողութեան իրը տեքստը. պիտի հնարէ երկիր մը, քաղաք մը երբեմն՝ որ գոյութիւն չունի քարտէսներու վրայ. պիտի կառուցանէ տուն մը որ պատշաճ իր հերոսներուն կենացողին եւ խառնուածքին, եւ դէպքէն գէպքերուն ընթացքը: Երբեմն պիտի ստիպուի նկարագրել քաղաք մը, վայր մը որ երբեք չէ տեսած: Ծլուկէր կը նըկարագրէ դարեր առաջ ոչնչացած Կարկեղոնը. Զոլա, որ այդքան կապուած է իրականութեան, յաճախ կը գործածէ քաղաքի անուններ որ գոյութիւն չունին քարտէսի վրայ: Ժիւլիէն Կրին ամբողջութեամբ կը ստեղծէ չըջան մը, իր գիւղերով, քաղաքներով, գետերով եւ ճամբաներով:

Վիպասանը պիտի գիտնայ նաեւ մըկրտել իր հերոսները յարմար անուններով. գործ մը որ յաճախ տառապանք մըն է հայ հեղինակին համար: Պալգաք կ'ուզէր որ անունը յարմարի անձին: Իրեն համար անունի մը վանկերը ունէին խորհրդաւոր ուժ մը, որ աւելի կենդանի

կը դարձնէր հերոսին գիմապիծը, ան ըլլաւ բարի, նենգ կամ ծիծաղելի: Անոնք, կ'ըսէր, կ'որոշէ անձին հակառակը: Կը փնտռէր, կը շարժէր վանկերուն արժէքը որոնք պիտի անձնացընէին իր հերոսները եւ հերոսուհիները, ըլլան անոնք Իւրսիւլ Միւրուէ, Էօփէնի Կրանտէ, կամ Փէր Կորթօ: Իսկ Յլոպէր, որ ամիսներով անուն մը փնտռած էր իր հերոսուհիին, զայն զտաւ յանկարծ Նեղոսի ջրվէժներէն մէկուն որոտումին մէջ: Էմմա Պովարի, Պարոնեանին Արիօտիները, Բարթոլոմէոսը եւ Պոլոտասարները քիչ բան չեն աւելցներ իր անձնանալի հերոսներուն գիմապիծին վըրայ:

Ընդհանուր առմամբ, վէպը պէտք է ըլլայ առարկայական: Ինքնակենսագրական լաւ վէպերը հազուապէս են, եւ հեղինակ մը իր կեանքի ընթացքին կրնայ մէկ հատ արտադրել անոնցմէ: Թրեյք մը, Վերթեր մը, Տոմիմի մը:

«Արուեստագէտը, կ'ըսէր Յլոպէր, պէտք է այնպիսի ձեւով մը մօտենայ իր գործին, որ հաւատացնել տայ գալիք սերունդներուն որ ինքը երբեք չէ ապրած»:

Իսկ Պալաք կ'ըսէ.

«Առարկայական վիպասանի մը համար խոշալ յատկութիւնն է Պրոգէստ մը ըլլալը: Կարգ, փոփոխական եւ բազմաձեւ, նոյն ատեն զոհ եւ դահլիճ, դատուոր եւ ամբաստանաւ, եւ որ գիտէ ի պահանջել հարկին կատարել դերը քահանային, պաշտօնեային, զինուորականին, հողագործին, կարենայ արտայայտուիլ ժողովուրդին պարզամտութեամբ եւ մանր քաղցրեման տիմարութեամբ...»

Վիպասանը իր անձը եւ կեանքը արդարացնելու համար չէ որ կը ստեղծագործէ, բացի ինքնակենսագրական սեռերու մէջ, եւ սակայն իր ստեղծած աշխարհին եւ իր մէջ կայ յատակ յարաբերութիւն մը, որ չի դադրիր նոյնիսկ պորտային կապին հատանումէն յետոյ:

Որքան ալ հեղինակը ուզէ շէշոք մընալ իր անձերուն հոգեբանութեան, վար-

ուելակերպին եւ ճակատագրին հանդէպ, որքան ալ դէպքերու թաւալումը ձգէ քնակութեան դառիթափին վրայ, վերջ ի վերջոյ անկարելի է որ ինք ըլլայ այս բոլորին անտեսանելի շարժակը: Եւ այն նոյն Յլոպէրը որ հեղինակը կը հրաւիրէր անհետանալու, տարիներ վերջ կ'ընէր սա խոստովանութիւնը. «Մտաւտ Պովարին, ես եմ»:

Եւ եթէ պրպտենք Պալաքի մը, Տոմիմիներէի մը, Տիքընի մը, Սթէնտալի մը եւ Փրուսթի մը վէպերը, ինչե՛ր պիտի չգտնենք հոն, հեղինակին կեանքը, գիմապիծը եւ հոգին լուսաւորող:

Որովհետեւ ինչո՞ք գրած են ու կը գրեն վէպեր: Բացի ստեղծագործական հաճոյքէն, արուեստի պարզեւած երանութենէն, բուն գրելու գրգռապատճառը կը գտնենք Ռընէ Պուալէվի հետեւեւ խօսքերուն մէջ.

«Վէպերս՝ իմ ատելութիւններս են, իմ արհամարհանքներս, իմ ըղձաճնկերս, եւ իմ զայրոյթներս»:

Բ. ՎԵՊԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Վէպը չի բնար կառուցուիլ ճշգրիտ կերպով, ինչպէս թատերգութիւն մը, կամ պատմական մը. սակայն.

«Իւրաքանչիւր վէպ, կ'ըսէ Ալպէր Թիպոտէ, կը պահանջէ նուագադոյն կառոյց մը, եւ սակայն ոչ մէկ վէպի մէջ կարելի չէ եղած իրադրութիւն կառոյցի առաւելագոյնը»:

Այս նուագադոյն կառոյցը իրադրութիւն համար, վիպասանը պէտք է իր երկին մէջ նկատի ունենայ դրօնողութեան, աւելի ճիշդը շահագրգռութեան միութիւն մը: Այսինքն բոլոր դէպքերը, նկարագրութիւնները, խօսակցութիւնները պէտք է ենթարկուին կարեւոր դէպքի մը, կեդրոնական անձի մը, եւ ընդհանուր դադափարի մը, որպէսզի ընթացողին շահագրգռութիւնը աճի աւել-

լի եւ աւելի: Կառայցին երկրորդ յատկութիւնը պէտք է ըլլայ ընդհանուր յատակագրացք մը, դէպքերու աստիճանական զորդացում մը:

ԻՆՉՊԵՍ ԳԱՍԱԻՈՐԵԼ ՎԷՊ ՄԸ

1. ԿԱՌՈՅՑԸ

Վէպեր կան որ կը սկսին ու կը վերջանան մէկ անգամէն, առանց որեւէ բաժանումի. ուրիշներ բաժնուտած են պարզ գլուխներու, վերնագիրներով կամ առանց վերնագրի, մեծամասնութիւնն է այս ձեւը: Երբ վէպը երկարի, զայն կը բաժնեն մասերու եւ գլուխներու, երբ աւելի երկարի, կ'ունենան Հատոր, մաս, գլուխ, ինչպէս ճիշտապէս:

Այս բաժանումները երբեմն էակտն են, իսկ երբեմն ալ զօրծածուած են ընթերցողին եւ հեղինակին դործը գիւրացրնելու:

Ինչ որ ալ ըլլայ, վէպը զարգանալու համար պէտք ունի տարածութեան եւ տեսողութեան կամ ժամանակի, ինչպէս կ'ըսէ Սարգի:

Վէպի մէջ կարելի է դործածել ժամանակակից ծրագիր, յետադարձ ծրագիր, կամ կազմական ծրագիր:

Ժամանակակից ծրագիրը ամէնէն զործածուածն է լուրջ վէպերու մէջ, ուր կարեւորութիւն տրուած է պատմութիւն:

Նոյնն է պարզապէս յետադարձ ծրագրին, որ գրեթէ միշտ զօրծածուած է աստիճանական կամ արեւմտախնդրական վէպերու մէջ: Կարելի էր դէպք մը պատմելէ ետք, հեղինակը կը վերադառնայ անցնային:

Իսկ ամէնէն արուեստագիտականն է կազմական ծրագիրը, ուր ամէն նկարագրութիւն, ամէն գէպք, ամէն խօսք կ'ընթանայ գէպի անտեսանելի կեդրոն մը, եւ այսպէսով կը ստեղծուի մթնոլորտ մը եւ քան մը:

Շատ մը հեղինակներ վէպը կը սկսին վայրը մանրամասնօրէն նկարագրե-

լով, ուրիշներ ալ չնկարագրութիւնը կը սկսին հաս ու հոն, զայն պատշաճեցնելով դէպքերու թաւալման:

Ուրիշներ նախ կը պատմեն դէպք մը, յետոյ կու գայ նկարագրութիւնը եւ խօսակցութիւնը: Իսկ վէպեր կան որ կը սկսին տիպիկով մը:

Իւրաքանչիւր հեղինակ անի իր թեքիքը: Շատերուն քով համաշարժութիւն կայ տիպիկի, պատմութիւն, եւ նրկարագրութեան մէջ: Ուրիշներ նկարագրութիւնը իջեցուցած են նուազագոյնի. պատմութիւնը կը կատարեն հերոսները ապրեցնելով եւ խօսեցնելով: Խառնուածքի եւ ազդեցութեան հարց է ասիկա: Կարեւորը լաւ գործ մը տալն է դործածելով այս կամ այն թեքիքը, եւ այդ թեքիքը յարմարեցնել մշակուած դործին:

2. ԳՐԵԼՈՒ ՏԱԴԱՊԱՆՔԸ

Շատ մը հեղինակներ իրենց նիւթերը ամիսներով կ'որոնան իրենց մաքին մէջ եւ յետոյ գիւրութեամբ կ'անցընեն թուղթին վրայ: Այս է պարզապէս Ռասինին, որ դործը աւարտած կը նկատէր երբ գրիչը կ'առնէր ձեռքը: Նոյնն է պարզապէս Հիւկոյին որ մէկ ամիսէն դրած է «Հերնան»-ին: Պալլաք ունէր ստեղծագործական զերբնական յատկութիւններ. վէպեր ունի որ շարաթէ մը դրած է. զըլուխ-գործոցներ՝ երկու ամիսէն:

Անդին ռակայն Թլուպէր մը վեց տարիէն աւարտած է Վատամ Պոլարիին:

Գործին իրականացման տարբեր եղանակները տարբեր խառնուածքի եւ ըմբռնումի արդիւնքներն են:

Մենք ալ հասանք այն վայրկեանին երբ տրցակ մը թուղթի առջեւ նստած, եւ գրիչը պատրաստ կը սկսինք գրելու ասուպանքը:

Նախ կայ վերնագիրը. շատեր նիւթէն առաջ կը գտնեն վերնագիրը, ուրիշներ վերնագիրը կը գտնեն, վերջը բառէն յետոյ:

Բոլոր հեղինակները սաքսափով խ-

սած են այդ պահի մասին, երբ հեղինակը կը ջանայ գրել առաջին նախագաղաթը՝ թիւնը միայն ճշգրտելով թուղթը կը նշմանցնէ անտիկ բերդի մը, պաշտպանուած իր սպիտակ կուտութիւնով: Ուրիշներ յուսահատելով գրելը մէկ կողմ նետած են բացազանչելով: Ես գրել չեմ գիտեր:

Բայց համբերութեամբ եւ աշխատանքով ամէն բան կարելի է իրագործել: Եւ էջերը կը սկսին սեւնալ, թերթերը իրարու վրայ դիզուել՝ եւ կը ծնի վէպին առաջին կերպարանքը, սեւագործութիւն մը, որ յաճախ պէտք է սրբադիւր, ճոխացնել, մաքուրի քաշել, կըրկի սրբադիւր սրբադիւր... կատարելագործել, եւ առանձնաւ երկ մը եզակի իր մթնոլորտով եւ տեմեկին իր ոճով:

3. ՄԹՆՈՂՈՐՏ ԵՒ ԹՈՆ

Մթնոլորտը վէպին կու տայ արուեստական արժէք մը, կը զօրացնէ աւուր կեանքի երազները: Վէպին մթնոլորտը պէտք է ծնի հեղինակին աշխարհ բերած վայրերէն, դէմքերէն, դէպքերէն, եւ խօսակցութիւններէն: Տոսթոյեւսքի մը մթնոլորտը կը ծնի իր հերոսներուն հոգեբանութենէն եւ կենցաղէն: Պալլաքի մը եւ Տիբլիսի մը մըթնոլորտը կը ծնի վայրերէն, դէպքերէն եւ անձերէն: Մթնոլորտներ կան որ կը ծնին ժամանակական շրջանէն:

Հեղինակը որքան որ ալ անկողմնակալ ըլլայ, ունի իր նախասիրութիւնները, այն ատեն մթնոլորտը կը ծնի առաջ իր միջամտութեան եւ առանց իր կամքին: Յաճախ սակայն, վիպասանը որ բանաստեղծական խառնուածք ունի, գիտակցաբար կը ստեղծէ մթնոլորտը, ըլլայ կատակերգական, ողբերգական, հրաշագոյն: Ինչպէս օրինակ Ալան Փոյի փանթաւրիք մթնոլորտը, ոտտիկանական կամ սեւ վէպերու մթնոլորտը, եւն.:

Թոնը հեղինակին ձայնին չեղան է

կարծես, որ կը լսուի իր նախադասութիւններուն ընդմէջէն: Նոյնիսկ տուարկայական եւ անտարբեր կարծուած գրողները ունին իրենց թոնը, ըլլայ Մերիմէն, Ջէյն Օքլը, Մոփսսանը:

Յաճախ հերոսները կը խօսին, եւ կը բանք հեղինակին ձայնին թոնը, չեղան մը ակամայ: Երբ վիպասանը արուեստագէտ է, երբ կ'ընտրէ իր բառերը, կըտոյթ կը դնէ նախադասութիւններուն մէջ, այն ատեն թոնը կը բնորոշուի եւ վէպը կը դառնայ բանաստեղծական, Հարկաւ նիւթը պէտք է թոյլատու ըլլայ այսպիսի աշխատանքի մը, որպէսզի համաչափութիւն դոյնայ ձեւին եւ խորքին մէջ:

4. ԿԵԱՆՔԸ ՎԵՊԻՆ ՄԵՋ

Վէպը պէտք է վերստեղծէ կեանքը, այսինքն այնպէս մը նկարագրէ որ այդ շինծու աշխարհը եւ անձերը իրական թուին:

Սակայն կայ կեանքի իրականութիւնը եւ արուեստի իրականութիւնը: Կեանքի հում իրականութիւնը յաճախ փոքր, թթու կամ լեղի է, անտառի մէջ բուսնող վայրի պտուղի մը պէս. իսկ արուեստը կը կայանայ այդ չոր իրականութեան տալ դոյն, համ ու հոտ, այսինքն պատուաստել ու մշակել իրականութեան վայրի պտուղը:

Արուեստը կը սրբադիւր բնութեան գեղեցկութիւնները:

Եթէ հեղինակը կ'ուզէ իրական կեանքէն անձ մը կամ դէպք մը վերցնել, այդ անձը եւ այդ դէպքը չի կրնար գետեղել վէպին մէջ, եթէ զայն խորունկ փոփոխութիւններու շնորհիւ:

Անձերը պէտք է ապրին վէպին մէջ, վէպին կեանքով: Վիպասանը պէտք է գիտնայ քանի մը տողով, քանի մը խօսքով տալ անձին կերպարանքը եւ կոմայ կամայ վէպին ընթացքին թափանցէ աւուր հոգեբանութեան մէջ. բառի մը գործածութեամբ մեղի հասկցնէ անոր ներ-

քին կեանքը, մտածումները. մէկ խօսքով, պէտք է ապրի անոր մորթին մէջ։

Ուրեմն կեանքը կը ծնի եւ կը զարգանայ մանրամասնութիւններով, ինչպէս կ'ըսէ Մոփասան. «Վէպին արուեստը կը կայանայ, պզտիկ մանրամասնութիւններ գետեղելով յարմար տեղերու մէջ...»

Իսկ Պալլադը. «Վիպասանին արուեստը կը կայանայ իրական ըլլալ մանրամասնութիւններուն մէջ երբ անձը եւ դէպքը երեւակայածին են... Վէպը յաւիտենական կը դառնայ իր մանրամասնութիւններով...»

Ծ. ՈՃԸ ՆԻ ԼԵՋՈՒՆ

Բառամթերքը անհրաժեշտ է լաւ վիպասանի մը համար եթէ կ'ուզէ ալլազան նիւթեր մշակել։ Պէտք է գիտնայ բառերուն ճշգրիտ իմաստը... Պէտք է տէր ըլլայ նաեւ թեքնիք բառամթերքի մը. գիտական, պատմական կրօնական, փիլիսոփայական, արհեստներու յատուկ, որոշ դասակարգերու լեզուին. առանց որ փորձուի գործը կ'ընեն իր գիտութեան բեռին տակ։

Մեծագոյն վիպասաններուն մօտ կարելի է առատ հունձք մը քաղել քերականական, շարահիւսական սխալներու եւ ծանր ու անճշակ նախադասութիւններու, սակայն իրենց հանճարին առջեւ կը խոնարհինք, որովհետեւ այդ մանր թերութիւնները չեն նսեմացներ իրենց մեծութիւնը. կը հիանանք անոնց վրայ, կը հիանանք, Պալլադներու, Ռաֆֆիներու, Տոսթոյեւսքիներու վրայ. եւ նոյն հիացումը կ'ունենանք լեզուի եւ ոճի վարպետներուն, կոշուի անոնք Զլոպէր, Թուրկէնիէվ կամ Զօհրապ։

Դժուար է վէպին ոճը բնորոշել։

Շատեր կը ֆոնան որդեգրել անանձնական ոճ մը, խուտափելու համար զեղումներէ, ուրիշներ ազատորէն կը հետեւին իրենց ներշնչումին։ Կը գործածեն նմանութիւններ, պատկերներ, դարձըւածներ, կը դնեն բանաստեղծական երանգ մը։ Վէպին կը ֆոնան հազցնել համանունազի մը կշռոյթը, ներդաշնակութիւն մը որ իրենց գործին կու տայ ուղիւնորի մը համաչափ տեղատուութիւնը եւ մակընթացութիւնը։

Քառնուածքի հարց. հանճարի, արդիւնք։

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ԱՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- 1.- Ներածութիւն
- 2.- Յետ-Մտայիննամ տասնամեակի բնութագրութիւն
- 3.- Սուգ տերմէի մերկայացուցիչներ
- 4.- 20-ական թուականների տերմէի մնացորդներ
- 5.- Ահաբից վերադարձածներ
- 6.- 30-ական թուականների տերմէի: Արձակ
- 7.- 30-ական թուականների տերմէի: Զափածոյ
- 8.- Գրական եիմնական կարիգ: Զափածոյ
- 9.- Գրական եիմնական կարիգ: Արձակ
- 10.- Ներգաղթած գրողներ
- 11.- Կիմ գրողներ
- 12.- Լրագրագրողներ եւ գրականամերձ-գրողներ
- 13.- Բանասիրական գրականութիւն
- 14.- Նրիտանորդական գրականութիւն
- 15.- Մանկա-պատանեկան, արկածային, գիտա-երեւակայական գրականութիւն
- 16.- Թատերագրութիւն
- 17.- Նրգիծամբ
- 18.- Խորհրդային Սփիւռք, - Բաբու, Ղարաբաղ, Թրիլիսի, Արիտայիւ
- 19.- Ռուսագիր եւ յ գրողներ
- 20.- Գրականագիտութիւն
- 21.- Ամփոփում եւ բնդիւմար դրայքներ:

Ա.

Այս ուսումնասիրութեան նպատակն է ըստ հետաւորին սեղմ ու մատչելի միջոցներով տալ այսօրուայ խորհրդահայ գրականութեան ընդհանուր համայնապատկերը, նրա բաղկացուցիչ տարրերի միասնութեան մէջ: Վերջերջայն հատկացողութիւնը այստեղ դործածւում է բացառապէս ներկայացուող որոշակի գրական իրականութեան աշխարհագրական եւ ժամանակային տեղը որոշելու նկատառումով, ուշադրութեան կողմնորոշման համար, այլ ոչ թէ այդ բառին սովորաբար վերադրուող պաշտօնական

պիտակը իւրացնելու անհիմն դիտաւորութեամբ: Մեր հայրենիքում գոյութիւն ունեցող հասարակական, մշակութային, իսկ տուեալ դէպքում յատկապէս գրական իրականութեան շրջանակները ճշդելու եւ այն բնութագրելու համար առաջնահերթ պայման է բոլորովին անտեսել սմէն կարգի պարտագրուող արհեստական ու ապակողմնորոշիչ պիտակները եւ միայն նկատի առնել երեւոյթների իրական գրանցումը, նրանց բնական բնթագքն ու փոխադարձ կապակցութիւնը իւրայատուկ հանգամանքների մէջ, որպէսզի բուն ճամարութիւնը ինքնաբերաբար չզոհուի պանազան

բառային թիւրիմացութիւնների շարիւրինթոսում:

Ուրհրդային Հայաստանի դրակա-նութեան ասպարէզում գործող գրչի մը-չակները միաւորուած են «Հայաստանի Ուրհրդային Գրողների Միութեան» մէջ, որը օրէնքով ճանաչուած միակ դրական կազմակերպութիւնն է 30-ական թուա-կաններից ի վեր եւ հանդիսանում է Հա-մախոսութեան նոյնանուն կազմակեր-պութեան ձեւականօրէն ինքնավար մի մասնաճիւղը: 1959 թուի Յունուարին՝ Հայաստանի Գրողների Միութեան Կ-րդ համագումարի ժամանակ, կազմակեր-պութեան օնդամ էին համարուած 227 մարդ: Համագումարին ներկայ 210 պատուիրակներից 68 մարդ արձակագիր-ներ էին, 57-ը բանաստեղծներ, 21-ը թատերագիրներ, 53-ը քննադատ-գրա-կանազէտներ եւ 11-ը թարգմանիչներ: 1954 թուին՝ գրողների 3-րդ համագու-մարի ժամանակ, Միութեան մէջ կային 183 մարդ: Այժմ, 5-րդ համագումարի նախօրեակին, քնական է, որ այդ թիւը աւելի բարձր կարող է լինել:

Գրողների Միութեան անդամները, ճիշդ է, բոլորն էլ հայեր չեն: Կան նաեւ այլ լեզուներով ստեղծագործողներ: Ուս-տի այդ կարգի գրողների համար գոյու-թիւն ունեն Միութեան կազմի մէջ մըա-նող «սեկցիաներ» (հասուածներ), որ-պիսիք երեքն են՝ աղբիւրնական, զըը-դական եւ ռուսական: Բայց եւ այնպէս, Հայաստանի դրական կազմակերպութեա-նը գոյն սուղները եւ նրա բնոյթը ու-րողները հայ գրողներն են, որոնք զե-րազանցապէս կենտրոնացած են նրեւա-նում: Նախապատերազմեան տարիներից ի վեր Լենինականում գոյութիւն ունի Գրողների Միութեան բաժանմունք, որի շուրջն են համախմբուած այժմ 60-ի չափ տարեց, երիտասարդ եւ օկանակ գրողներ: Ընդհանրապէս պէտք է նկա-տի ունենալ, որ դրականութեան հետ ի-րենք-իրենց կապուած համարող ստեղ-ծագործական ուժերը սովորաբար առ-նուառն մի քանի անգամ աւելի թիւ են կազմում, քան որոշ կանոնադրական

պայմաններ լրացրած եւ պաշտօնապէս Գրողների Միութեան անդամ դարձած գրողները: 1957 թուի Յուլիսի վերջից գործում է նաեւ Կիրովականի երիտա-սարդ գրողների միաւորումը: Երիտա-սարդ գրողների ստեղծագործական խմբ-բաններ (ստուդիաներ)՝ կան նաեւ երկ-րի այլ մասերում, որոնցից առայժմ աչ-քի են ընկնում Ղափանի եւ Իջևանի խմբ-բանները: Երեւանից դուրս գտնուող այդ դրական միաւորումները 1959 թուին յայտ ընծայեցին սեփական ստեղծագոր-ծութիւնների ժողովածու-ալմանախներ՝ «Արազած», «Լուր», «Ղափան»: Այս-պիսով, Հայաստանի գրական անձնա-կազմը անընդհատ համալրւում եւ փո-փոխութեան է ենթարկւում, ըստ այնմ էլ պայմանաւորելով դրականութեան կենդանի ընթացքն ու նոր տարրերի ե-րեւանի դասը: Հայ գրողների բազմամարդ ջոկատներ կան, ինչպէս յայտնի է, նաեւ Ուրհրդային Հայաստանից դուրս՝ ան-ղբիւրկական քանազան հայաւառ վայ-րերում: Ուրհրդային պայմաններում ստեղծագործող այդ թուր հայ գրողնե-րի ամբողջական վաստակն էլ հէնց այն է, ինչ որ մենք կոչում ենք խորհրդա-հայ դրականութիւն:

Միեւնոյն խորհրդահայ դրականու-թիւնը ներկայացնելու համար կարող են լինել բազմաոտեսակ մօտեցումներ: Այն կարելի է ներկայացնել որպէս ժամանա-կադրական պատմութիւն, ստեղծագոր-ծական ձգտումների ու հոսանքների կեն-դանի ընթացք, դրական առանձին երեւ-ւոյթների փաստական դուրս, գաղա-փարական բախումների թաւերաբեւ-եւայլն: Հարցի այդ զանազան կողմերը միանդամից ընդգրկելու գործը վեր է որեւէ անհատի ուժերից ու հնարաւորու-թիւններից: Հայաստանում խորհրդա-հայ դրականութեան ուսումնասիրու-թեամբ զբաղւում են ամբողջ հիմնար-կութիւններ: Բաղմաթիւ մասնազէտներ կենտրոնանում են դրականադիտակա-ն միայն այս կամ այն բնագաւառում: Եւ նոյնիսկ այդպիսի բազմամարդ անձնա-կազմի առկայութեան դէպքում՝ առկա-

ւին չկայ խորհրդահայ գրականութեան համադրական պատկերը առաջ մի բազմակողմանի աշխատութիւն։ 1961 թվին, առաջին անգամ լինելով, լոյս տեսաւ «Սովետահայ գրականութեան պատմութիւն» գրքի առաջին հատորը (1917-1941 թ. թ.), իսկ յաջորդ հատորը պատմութեան մէջ է։ Այդ գրքի հրատարակութեանը թէեւ ինքնին ուշադրաւ եւ ուղեկցող իրաւունք էր ու թէեւ այն գրուած եւ խմբագրուած է մեծ մասամբ տաղանդաւոր գրականագէտների ձեռքով, այնուամենայնիւ ուղղակի անյաշուոյ գործ է մեթոդաբանական ու կառուցուածքային առումով։ Նկատելի է հասկանալիութեան գործը, գիրքն ամէն գնով շուտ լոյս բնծայելու շտապողականութեան քաղաքական հետեւանքը։ Այդ գիրքն իր սրբալով շատ է դիմում նոյնիսկ «Հայ նոր գրականութեան պատմութիւն» հինգ հատորանոց աշխատութեան արդէն լոյս տեսած հատորներին։ Եւ դա հասկանալի է։ Հայաստանում այսօր շատ բան կարելի է անել խորհրդահայ գրականութեան ուսումնասիրութեան գծով (նիւթերի հաւաքում, դասաւորում, առանձին հարցերի հանգամանակից քննութիւն եւ այլն)։ Բայց ինչքան էլ շատ ուսումնասիրութիւններ գրուեն, վերջի վերջոյ նրանք չեն կարող հասնել լուրջ ընդհանրացումների, դուրս դալ ի վերջուտ սահմանուած կարելիութեան շրջանակներից։ Այդ ուսումնասիրութիւնները լաւագոյն զէպքում կարող են ծաւալուել միայն մինչեւ որոշ աստիճան, որից վեր ձգտելն անգամ արգելուած է։ Սրանից բխում է այն եզրակացութիւնը, որ Հայաստանում տիրող իշխանութեան սահմանած կաշկանդումների հետեւանքով այնտեղ փոստօրէն ոչ միայն անհրաժեշտ է տալ խորհրդահայ գրականութեան համակողմանի իսկական պատկերը, այլեւ նրա քիչ թէ շատ վաւերական ուրուագիծը։ Դադարաւարախօսական միակողմանիութիւնը, անշուշտ, հիմնական խոչընդոտն է։

Եթէ այդպէս է իրերի վիճակը հայրենի երկրում, ապա աւելին անելու յա-

ւակնութիւնը, նոյնիսկ նկատի չառնելով պերճանք լինելու հանգամանքը, կարծես թէ աւելորդ է դառնում երկրից դուրս։ Եւ իսկապէս, խորհրդահայ գրականութեանը նուիրուած այս ուսումնասիրութիւնը բնաւ մտադիր չէ տալու եւ չի էլ կարող տալ այդ գրականութեանը վերաբերող բոլոր հարցերի սպառելի պատասխանը։ Բայց օգտուելով ազատութեան ընձեռնած որոշ կարգի հնարաւորութիւններից՝ կարելի է գէթ այդ գրական իրականութիւնը քննութեան առնել ազատ մտքի դիրքերից, - որի համար հեռավորութիւնը երբեմն կարող է բարձրութեան փոխարինել, - այն ներկայացնել թէեւ համառօտ, բայց ըստ մենայնի վաւերական կերպարանքով։ Ուրեմն, այս ուսումնասիրութիւնը չի կարող լինել խորհրդահայ գրականութեան պատմութիւն, նրա փաստական տարբերքի քիչ թէ շատ հանգամանակից վերլուծութիւն, ներուժ կարելիութիւնների բացայայտում եւ հիմնաւորում։ Դրա փոխարէն տրուելու է գրականութեան այսօրուայ վիճակի խտացում պատկերը, որպէս միասնական երեւոյթի, մանաւանդ տրուելու է այդ գրականութիւնը կենդանի պոստը ու վարդապետը գրական անձնակազմի բնութագրութիւնը՝ ըստ տարիքային, ստեղծագործական եւ այլ կարգի խմբավորումների։ Համապատկան նպատակներ հետապնդող այս ամփոփ ուսումնասիրութիւնը, այսպիսով, կարող է շատ-շատ առձեռն ուղեցոյց ծառայել խորհրդահայ գրականութեանը ծանօթ ու անծանօթ բոլոր հետաքրքրուողների համար։

խորհրդահայ գրականութեանը ծանօթանալու առաջին հերթ աղբիւր է հանդիսանում գրական մամուլը։ Երեւանում 1932 թուի Փետրուարի 23-ից ի վեր լոյս է տեսնում «Գրական թերթ» շաբաթաթերթը, որի էջերում արտացոլում է գրական հասարակայնութեան ստեղծագործական ու կազմակերպական ընթացիկ գործունէութիւնը։ Դրանից առաջ յատուկ գրական թերթ գոյութիւն չի ունեցել։ 1934 թուի Յուլիոյից ի վեր լոյս

է տեսնում «նորհրդային գրականութիւն» (անունի հետագայ պարագայական փոփոխութիւններով) հանդէսն ու ապա ամսագիրը: Գրանից առաջ Հայաստանում եւ այլուրեք լոյս էին տեսնում զուտ գրական կամ գրականախոս պարբերականներ («Նոր աշխարհ», «Նոր», «Դարբնոց», «Մարտ», «Նոր ակօս», «Գրական դիրքերում», «Նոր ուղի», «Վերելք», «Նոյններ», «Հոսանք» ևն.): Գրական կեանքը պարբերաբար արտացոլում է նաեւ ոչ-գրական մամուլի էջերում (օրաթերթերի, երեւոյթաբանների, պարբերականների, կոնանց եւ ուրիշների համար սահմանված պարբերականների մէջ): Բայց խորհրդային գրականութեան հետ հիմնովին շփուելու գործում վճռական դերը պատկանում է գեղարուեստական եւ գրականագիտական առօրեայ հրատարակութիւններին: Հայաստանում ու Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւնը կոչուած են ապահովելու ինչպէս առանձին երկերի, այնպէս էլ զանազան ժողովածուների լոյս ընծայման գործը:

Ահա եւ յիշեալ կարգի աղբիւրներից ունեցած տրամագրելի նիւթի հիման վրայ էլ հիւսւում է այս ուսումնասիրութիւնը, մեթոդաբանական եւ այլ բնութի որոշակի սկզբունքներով: Այդ սկզբունքները ի յայտ կը գան շարադրանքի ընթացքում եւ հարկ չկայ դրանք կանխելու եւ գրադուել յաւելեալ բացատրութիւններով: Բայց կան մի քանի կէտեր, որոնք սկզբից եւեթ ընդգծելը աւելորդ չէ:

Նախ, այս ուսումնասիրութիւնը գրւում է ազատ պայմաններում եւ ազատ դիրքերից՝ մի իրականութեան մասին, որը ընթանում է անազատ պայմանների շրջանակում եւ գտնւում բռնակալ ուժերի տիրապետութեան ներքոյ: Այդ իրականութեանը օտարի ու անծանօթի աչքով նայելու դէպքում կարելի է լարել երեւակայութեան մեքենան ու մտքով անցածը թղթին յանձնել՝ առանց հնարաւոր հետեւանքներով մտահոգուելու: Բայց երբ մարդ ձեռնամուխ է լինում,

ներկայացնել իր իսկ հայրենիքի ծանօթ իրականութիւնը, շոշափել կենդանի մարդկանց գրական ու քաղաքացիական հակատարին վերաբերող բազմապիսի հարցեր, կացութիւնը փոխւում է, առաջ են գալիս կաշկանդիչ հանգամանքներ: Յայտնի է, որ մեր երկրում տիրող, բայց ժողովրդի կողմից չսիրուած իշխանութիւնը շատ եւ հիւանդազին աստիճանի խանդոտ է ու աշխուրջ իր հակառակներին՝ հանդէպ, որովհետեւ նրանց մասին հրապարակայնօրէն բոլորէին դրական արտայայտութիւններ չբխեն պաշտօնապէս «թշնամի» հռչակուած ճամբաներից: Ուստի ամենամեծ, սեփական պատասխանատուութեամբ ասուած եւ հարեւանցի բնութագրումներն անգամ տեսականօրէն կարող են մակարայծ ճշմարեաների կողմից պատրուակ ծառայեցուել գրողի ձեւակերպումների ու վերագրումների համար: Հետեւապէս, ակամայից զարթի ծառայութիւն մատուցելու մտաւայնութիւնը յաճախ իր «վիտոն» պիտի գնի որոշ ընդլայնումների վրայ: Եւ փաստական բնութագրումները պիտի գերակշռեն հեղինակային ինքնակամ գնահատականներին, նուազագոյնի պիտի հասցուեն գաղափարական բընորոշումները:

Երկրորդ, գրական ընդհանուր երեւոյթները խմբադրելու եւ առանձին գրողների ստեղծագործութիւնը բնութագրելիս՝ հիմնական ելակէտը ստեղծագործող անհատն է: Ինչպէս որ ոչ ոք պատասխանատու չէ այս կամ այն ժամանակ այս կամ այն վայրում ծնուած լինելու համար, այնպէս էլ չի կարող անձամբ պատասխանատու համարուել ամենագործ միջավայրի պարտադրած խորթ ու անցողիկ բարքերի փոխարէն: Իւրաքանչիւր գրող այն է, ինչ որ ունի իր մէջ եւ ինչ որ կարողանում է արտայայտել՝ որպէս սեփական ձայն: Իսկ նրան դրսից փաթաթուածը պէտք է ընդունել որպէս փաստ, բայց ոչ առեւալ հեղինակի գրական յատկանիշ:

Երրորդ, գրողների ստեղծագործութիւնը լաւագոյնս հասկանալու համար

կարեւոր են գրական ուղղակի մէջբերումները, ինչպէս եւ կենսագրական տուեալները: Բայց տուեալ դէպքում, որպէս կանոն, դրանցից ոչ մէկն էլ բաւարար չտրուի յի տրուելու: Մէջբերումներ կը լինեն շատ բացառիկ եւ անշան դէպքերում միայն: Իսկ կենսագրական տուեալները կը սահմանափակուեն ժողովրդական թուի ու վայրի յիշատակումով, քանզի տեղի պակասութիւնը, դրանք համապատասխան տուեալների թերի լինելն ու երբեմն էլ հակասականութիւնը՝ հազիւ այդքանը կարող են հնարաւոր դարձնել: Սակայն, հակառակ այդ տէ՛նին, ամփոփ պատկերացում կազմելու համար անոնցմէ շատ բան չկայ:

•

Արդի խորհրդահայ գրականութիւն տոնլով՝ հասկանում ենք վերլին տասնամեակի գրական կեանքը: Իսկ այդ կեանքն էլ իր հերթին պայմանաւորուած է խորհրդահայ հասարակական տեղաշարժերով, որպէս արդիւնք կամ դուշանէն արտայայտութիւն համախորհրդային նշանաբանի տեղաշարժերի: Աւելի պարզ ասած՝ Ստալինի մահով սկսուեց մի նոր դարադուր խորհրդային հասարակութեան պատմութեան մէջ, համարապատասխան հետեւանքներով: Այդ երեւոյթին կարող են տրուել դանազան բացատրութիւններ, բայց փառք այն է, որ յետ-Ստալինեան տասնամեակում մի աննախընթաց աշխուժութիւն ծաւալուեց ներխորհրդային կեանքի գրեթէ բոլոր ասպարէզներում: Այդ շրջանակում էլ պէտք է գիտել գրական անվիճելի դարթծնքը:

Դրա համար էլ ուրուագծենք վերլին տասնամեակի մի շարք հանդուցային երեւոյթներ: Ինչպէս յայտնի է, կոմունիստական կայսերապաշտութեան կոկորդում մնացած խորհրդոտներէց մէկն է իր կողմից ճնշուած ազգերի ազգայնա-

կանութիւնը: Կոմունիստական գաղափարութիւնները երբեք ջանք չեն խնայել ամէն տեսակ անհրապոյր գոյներով ներկելու ազգութեան ու ազգայնականութեան գաղափարը, խեղաթիւրելու եւ վարկաբեկելու դրա կենսական էութիւնը: Բայց կեանքը յամառօրէն նրանց դէմ է դործել: Ձնայած դրան, կոմունիստական իշխանաւորները տեւական պայքար են շղթայազերծել ազգային ազատութեան դրե՛ղ դրսեւորման դէմ, պարբերաբար ցուցաբերելով կատաղութեան նշաններ: Այդ կատաղութիւնը վըտանդաւոր ձեւեր ստացաւ նաեւ Ստալինի մահուան նախօրեակին, պատժադատութեան եւ գրականադատութեան մէջ կիրառուող «միասնական հոսանքի» տեսութեան դէմ պայքարելու անուան տակ: 1952 թուի աշնան ու 53 թուի գարնանը այդ արշաւը համաճարակի բնոյթ ստացաւ: Խորհրդային Միութիւնում եւ, պարզ է, նաեւ Հայաստանում՝ «Միասնական հոսանքի» տեսութիւնը ներկայացւում էր որպէս ազգային կեանքում «հասակարդային հակասութիւնները» անտեսելու կամ մեղմացնելու յանցաւոր միտում:

Մոսկովեան եւ Երեւանեան պարբերականներում, զանազան ժողովներում՝ այն ժամանակ մի տեսակ «անարգանքի սիւնին էին դամում» բազմաթիւ պատմաբաններ ու գրականագէտներ, յաճախ նոյնիսկ այս կամ այն անշան արտայայտութեան համար: Հայաստանում կիրառելով մոսկովեան պատգամները՝ կծու «քննադատութեան» ենթարկուեցին, որպէս այսպէս ասած «քաղցրի ազգայնականութեանը» տուրք տուողներ, պատմաբաններ Աշոտ Յովհաննիսեանը, Վահան Ռշտունին, Մկրտիչ Ներսիսեանը, Վարդան Պարսամեանը ու գրականագէտներ Արսէն Տէրտէրեանը, Խորէն Սարգսեանը, Արամ Ինճիկեանը եւ ուրիշները: Պարզ է, որ այդ արշաւի մթնոլորտում անչափ տուժաւ էր նաեւ ընթացիկ գրաքննադատութիւնն ու հէնց գեղարուեստական ստեղծագործութիւնը:

Այդ վիճակը շարունակուեց մինչև մօտաւորապէս 1958 թուի նոյեմբերը, երբ պաշտօնադրկուեց տիրող կուսակցութեան տեղական ղեկավար Գրիգոր Յարութիւնեանը իւր գործակիցներով: Կուսակցական վերահսկման ցուցական մաքրագործման հետեւանքներէջ մէկն էլ այն եղաւ, որ հակադարձ արշաւ ըսկըսուեց մինչ այդ յարձակողական դիրքերում գտնուողներէ՝ «ազգային-նիւհիլիստիկ» գէմ: Այդ նոր ուղեգիծը օրինականացուեց Հայկումկուի 17-րդ համագումարում (1954 թուի Փետրուարին), որտեղ պաշտօնապէս խոստովանուեց, որ Վիտլըր ռիալներ ու ազատագրումներ են թոյլ տրուել յատկապէս հայ ժողովրդի անցեալի մշակութային ժառանգութեան դնահատման հարցերում: Զնաւանաւորով, երբեմն էլ աղաւաղելով անցեալի ժառանգութեան դնահատման լինիլեան սկզբունքները, ուսմէ վատարանում էին անցեալի մշակութ. արժէքները, կոչ անում համարեա՝ թէ լիովին հրաժարուել անցեալի մշակութից, առաջարկում էին հայ դրականութեան պատմութիւնից «վարարել» 19-րդ դարի երկրորդ կէսի եւ 20-րդ դարի սկզբի մի շարք գործերի, դրանով իսկ արհեստական պատեղ ստեղծելով խորհրդային դրականութեան եւ նրան նախորդող հայ ժողովրդի դեմոկրատական դրականութեան միջեւ: Անաստաս Միկոյիանը Մարտի 11-ի երեւանեան իր նախընտրական ճառում նոյնպէս անդրադարձաւ հայ դրական կեանքին վերաբերող հարցերի, «վարկափրկման» խօսք ասելով Բաֆթու, Պատկանեանի, Չարենցի մասին: Իսկ Հայաստանի գրողների 3-րդ համագումարը (Յուլիոսին) մի տեսակ ըրկադարձային դեր խաղաց խորհրդահայ դրականութեան հետադայ ընթացքը ճշգրտւաւ դործում:

Այդ համագումարից յետոյ դրական կեանքի աշխուժացումը շօշափելի փաստ դարձաւ, Հայաստանում: Այդ ժամանակից մինչև հիմա մակընթացութիւններն ու տեղատուութիւնները փոխնիփոխ իրար են յաջորդում, բայց այս տասնամ-

եակի մշակութային յառաջընթաց տեղաշարժերը հերքել անկարելի է: Շարժումն անկայտ է եւ ըստ երեւութի անկասելի:

Ինչո՞ւ են արտայայտուած այդ տեղաշարժերը խորհրդահայ դրական իրականութեան մէջ: 1954 թուից սկսած աննախընթաց թուի ստացաւ հրատարակչական գործը: Բաֆթու, Պատկանեանի, Չարենցի «վարկափրկման» յաջորդեցին ուրիշ բազմաթիւ «վարկափրկումներ» եւ հին ու նոր հեղինակների երկերի երեւան գալը մի նոր որակի մթնոլորտ ստեղծեց՝ նորանոր նախաձեռնութիւններ խթանելով: Գրական կեանքի ու լորտի մէջ մտան մի ժամանակ ճնշւած ջոցների ենթարկուած գրողները: Այս ամէնը նպաստեց, որպէսզի մարդկանց մէջ հոգեկան ժենակութեան եւ ամալութեան սրտամաշ գոացումներին փոխարինեն կորցրած արժէքներ վերագտնելու, հարուստ ու լիցքաւորուած կեանքի խոստումներով յղի թարմ զգացումները: ԽՍՀՄ-ումների ծաւալը օր ըստ օրէ ուսճացաւ:

1954 թուից է, որ սկսեցին դրական նոր պարբերականներ հրատարակելու գործադրել ծրագրեր երեւան գալ: Երգիծական, արուեստի, գիտական եւ զանազանային պարբերականներ ծընուեցին: Այդ շարժումը զնալով նորանոր արտայայտութիւններ է ունենում: Ծիլը է, մոսկովեան ճնշումը եւ իր հերթին չի նուազում, որպէսզի ինչքան հնարաւոր է քիչ եւ անշան պարբերականներ հրատարակուեն «տեղեկութեան», մշակութային ու միւլ արի մանուրէք՝ Մոսկուա-լից բաշխուող թոյնը աւելի ախորժայտայն դարձնելու համար, Բայց հայաստանեան անընդհատ աւելացող պարբերական հրատարակութիւնները համապատասխանում են ժամանակի ոգուն եւ իրենց դոյութեամբ իսկ անպայման ամբացնում են ժողովրդի գիտակցական կորովն ու նպաստում ստեղծագործական եւանդին: Պարբերականների թաղմալանութիւնը այս տասնամեակի վատտակնեւընց է:

1961 թուին, աւելի քան ջրան տար-
ուայ ընդհատումից յետոյ, վերստին
Հրատարակուել սկսեց «Գրական ժառան-
դութիւն» մատենաշարը: Առաջին գիրքը
նուիրուեց Ալեքսանդր Մատուրեանի եւ
Նար-Դոսի նամակներին, իսկ երկրորդ
գիրքը՝ Ալեքսանդր Սպենդիարեանի նա-
մակներին: Մշակութային ժառանգու-
թեան թելը միշտ ձեռքում ունենալու
այդ Հնարաւորութիւնը զօրութեամբ է գերա-
զընհատուել: Կայսերապաշտական ուժե-
րը գիրքից հպատակ ժողովուրդներին
անձուռնէ Հնազանդութեան մէջ պահե-
լու համար սովորաբար առաջին հերթին
հարուած են Հասցնում նրանց ինքնու-
թոյն աւանդութիւնները գոյութեանը,
Հաւաքական ինքնագիտակցութեան կրո-
նաններին: Տիրողին այդ հանդիման զբո-
ղեւու համար՝ անցեալից ոչ մի գնով ե-
րես լքեցելու հետեւողական ճիգերը
լաւագոյն պատասխանը կարող են լինել:

Վերջին տասնամեակում գրական
աշխուհիքմանը նպաստող նախաձեռնու-
թիւններից էին տուն-թանգարանների
ցանցի ընդլայնումը, արխիւային նիւթե-
րի հաւաքումն ու դիտական ժշակումը,
զանազան ակնասուր զէմքերի յորելան-
ները կատարումն ու պատմական իրա-
դարձութիւնների նշումը: Մենք պիտի
տոյն ծննդեան 1600-ամեակի եւ Սայաթ-
Նովայի ծննդեան 250-ամեակի տօնա-
կատարութիւնները ցոյց տուն, թէ Հայ-
քենանպաստ յորելանական տարեթուե-
րի նշումը որքան է քարերսը ազդեցու-
թիւն գործում՝ մտաւորականութեան,
մանաւանդ գեղարուեստական մտաւո-
րականութեան եւ ժողովրդի լայն զանգ-
ուածները հոգեկան կապը ամրացնելու
գործում:

Սրանք այն աշէր ընկնող երեւոյթ-
ներն են, որոնք ցայտուն գրանւորում
ունեցան յիշեալ տասնամեակում: Ան-
շուշտ, դրանից առաջ էլ այդ կարգի խ-
րադարձութիւններ կային, բայց նրանք
ձեւով ու բովանդակութեամբ գրեթէ բո-
լորովին այլ տարողութիւն եւ բնոյթ ու-
նէին: Այս թաւցիկ յիշատակումները
ցոյց են տալիս, որ ամէն անգամ էր

Հայաստանում պետական արշաւ է ծա-
ւալում ազգային զապախարների դէմ,
անմիջապէս եւ առաջին հերթին խոս-
քում է Հէնց գեղարուեստական գրադա-
նութիւնը, եւ ընդհակառակն, Հէնց որ
որեւէ նկատառումով իշխանութիւնը ժա-
մանկաւորապէս մի կողմ է կանգնում,
այդ քարերսը բացակայութիւնից օգտը-
ւում է գրականութիւնը եւ ծագկման
ճանապարհը քննում:

Ինչպէս վերեւում ասուեց, յետ-Ստա-
լինեան տասնամեակի զնաւատման ու
հեռանկարների վերաբերեալ կարող են
բոլորովին տարբեր, նոյնիսկ հակառակ
բացատրութիւններ լինել: Բայց կեանքի
գրեթէ բոլոր տապալէզներում նկատ-
ուող ծանրակշիռ իրադարձութիւնների
փաստը հերքել անկարելի է: Արդի խոր-
հրդահայ գրականութեան ծննդաբանու-
թիւնն էլ զգալի չափով կապուած է հա-
տարակական ու ժշակութային ընդհա-
նուր տեղաշարժերի հետ: Այս սւտում-
նախորութեան նպատակից դուրս է ընդ-
հանուր կարգի երեւոյթների վրայ ծան-
րանալը: Այսքանն էլ ասուեց ընդգծելու
համար, որ խորհրդահայ գրականու-
թեան այսօրը ռկուել է տալու տարի ա-
ռաջ, մօտաւորապէս այն պահից, երբ
բազմաճիւղային բռնակալի մահով նոր գա-
րադիւնի բացուեց խորհրդային հաստ-
րակութեան կեանքում: Այդ դարադիւն-
իւր առայտ լատ հեռու է մարդկային
պատմութեան պատգամներ հռչակելուց,
մարդու բնական իրաւունքները յարգե-
լուց, բայց եւ այնպէս մի յառաջադի-
ւէ նախորդ տասնամեակների համեմա-
տութեամբ: Վաղուան սպասելով լենք
կարող ենտեսել այսօրը, իր սահմանա-
փակ Հնարաւորութիւններով եւ դալքի
խոստումներով:

Գ.

Խորհրդահայ գրականութեան այ-
սօրուայ ստեղծագործական պատասխա-
նատուութիւնը հիմնականում ծանրացած
է թաղատելուցեան գրական սերնդի

վրայ: Բայց այդ սերնդի հետ կողք-կողքի շարունակում են ապրել ու գործել նաեւ այն գրողները, որոնք գրական առաջնիկ են մտել 20-ական կամ 30-ական թուականներին, եւ նոյնիսկ նախախորհրդային ժամանակաշրջանում: Վերջիններս վաստակն ըստ էութեան պատկանում է գրականութեան պատմութեանը՝ անցնալին: Սակայն քանի որ նրանք ներկայումս ոչ միայն ողջ են, այլեւ շարունակում են երբեմն երիտասարդական հաւանդով ստեղծագործել, ընդամին նոր տարրեր աւելացնելով իրենց հիմնական վաստակին, չենք կարող անտեսել ներանց: Անտեսելու հիմքեր չկան, այլ ընդհակառակն, շատ րան ընդգծելու պատճառներ ունենք: Սկսենք աւելարդ նահապետներից:

Որհնդահայ այժմեան գրական ընտանիքի աւագագոյն անդամն է ԱՄԱՋԻՆ (Մովսէս Յարութիւնեան, ծնւած 1878 թ. Շուշուերում): Ընդհանրապէս Արապին պաշտօնապէս համարւում է հայ պրոֆեսորական գրականութեան հիմնադիրներից մէկը, բայց «պրոֆեսորական գրականութիւն» ասուածը շատ անձգական հասկացողութիւն է, յաճախ էլ խորուսիկ եւ ապակողմնորոշիչ: Փաստն այն է, որ Արապին գրական առաջնիկ է մտել մեր դարակազմին, արձագանգել ընկերային խմորումների շարժմանը, գրել է փոքրածաւալ երկեր եւ արձակ բանաստեղծութիւններ: Որհնդը յայնացումից յետոյ գրել է բաւական թուով միջին ծաւալի երկեր, իսկ 1963 թուին լոյս տեսաւ նրա «Խորայէլ Օրի» երեք մասից բաղկացած պատմավէպը: Այդ վէպը միւս հեղինակների պատմավէպերի նման շատ լայն արձագանգ չունեցաւ, որովհետեւ գրուել է երկար ժամանակում, պատերազմի աւարտից ի վեր՝ որոշ ընդհատումներով, եւ անակնկալ չէր: Բայց ուշագրաւ է, որ «պրոֆեսորական գրող» Արապին իր գրական գործունէութիւնը պսակեց հայ ազգային-ազատագրական շարժմանը ներհորում այդ վէպով: Վէպն սկսում է այսպէս. «Որ կարօտով եւ հեղհեմի

անող անհամբերութեամբ Խորայէլ Օրին վերադառնում էր հայրենի երկիրը: Քրսան տարի էր, ինչ նա ընկել էր հեռաւոր եւրոպական քաղաքներ, ապրել էր օտար մարդկանց մէջ եւ այժմ, որպէս մի նոր Ողիւսեա, վերադառնում էր հարազատ երկիրը՝ հազար վեց հարիւր իննսուներեթուականին: Այդ ժամանակից մինչեւ Օրու մահը անդի ունեցած իրադարձութիւնները կապում են վէպի անմիջական բովանդակութիւնը: Արապու ստեղծագործութիւններն առհասարակ աչքի չեն ընկնում շուայ գոյներով, բայց մեծ մասամբ պարունակում են կենսական հաւատարմ վկայութիւններ եւ կեանքի գեղարուեստական տարեգրութեան պիտանի էջերից են: Այս ասելով՝ չի կարելի անտեսել նրա քաղաքական շրջանակի նեղ աշխարհահայեացքը, որը երբեմն խանգարել է իրականութիւնը յլատակ տեսնելուն եւ մղել է ուժեք վատնելուն: Ստ. Զօրեանի վկայութեամբ, Արապին հայ գրողների շարքում ամէնից շատ կարդացած, ընդհանուր պատրաստութիւն եւ լայն հորիզոն ունեցողներից մէկն է: Նա համակրանք է վայելում նաեւ իր գրչակիցների մօտ:

ՄՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆԸ (ծնւած 1890 թ. այժմեան Կիրովականում) իրաւամբ համարւում է հայ գեղարուեստական խօսքի առաջնակարգ վարպետներից մէկը: Տակաւին երկրի խորհրդայնացումից առաջ նա արդէն կադմատրոնաւ գրող էր, բայց հետագայում կանգ չառաւ նրա ստեղծագործական վարկացումը: Զօրեանը հեղինակ է փոքր ու միջին ծաւալի բաղմամբիւ երկերի: Այժմ Երեւանում հրատարակւում է նրա Երկերի 10-հատորեակը, որոնցից եօթն արդէն հրապարակի վրայ են: Զօրեանը հայ գրականութեան ինքնատիպ եւ ինքնուրոյն որակ հանդիսացող դէմքերից է, որը բաւական շատ ուսումնասիրուել եւ հաւանաբար դեռ երկար պիտի շարունակէ ուսումնասիրուել: Զօրեանի ստեղծած գրականութիւնը գրական դպրոցի արժէք ունի: Հայկական Սփիւռքում լայնօրէն ծախօթ են նրա «Պապ Բաղաւոր» եւ «Հաւ

յոց բերդը՝ նշանաւոր պատմալէզերը ու ընթերցողներն իրենք կարող են դատել այդ վէպերի տրտէքի ու նշանակութեան մասին: Միայն թէ տեղին է նշել, որ Զօրեանը այն զրոգներէն է, որոնք իրենց գրական գործունէութեան սկզբից մինչեւ վերջը հաստատարւում են միտման սեփական ստեղծագործական ըսկզբունքներին եւ հեշտութեամբ տեղի չեն տալիս պատահական հովերի առջեւ: Զօրեանը գրական այնպիսի մեծութիւն է, որի մասին սրանից աւելին ասելու ոչ կարելիք, ոչ էլ հնարաւորութիւն կայ: Նա յայտնի է բազմաթիւ թարգմանութիւններով, մանաւանդ Տոլստոյի մեծածաւալ երկերից: Զօրեանը գերազանցապէս զբաղուել է գեղարուեստական ստեղծագործութեամբ, գրելով միայն արձակ, վերջապէս՝ նաեւ յուշագրութեամբ: Ներքա ելոյթներն ու լրագրական պատահական յօդուածները ընդհանրապէս կարճ են լինում, ըստ էութեան եւ գեղունակ: Թէեւ Հայաստանում մինչեւ հիմա ոչ ոք Զօրեանին Վարպետ չի կոչել, բայց նա այն սակաւութիւններից է, որոնք լինում արժանի կարող են լինել Վարպետ համարունը՝ իրենց գրական ու քաղաքացիական օրինակելիութեան համար:

Գրական հին սերնդի ներկայացուցիչներից է նաեւ բանաստեղծ ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ (ծնունդ 1891 թ. այժմեան Լենինականում): Նա եւս «յեղափոխական զրոգների» փաղանգին է դառնում: Երկար ժամանակ վարել է խմբագրական աշխատանք՝ Թբիլիսում, Բաքում: 1927 թուին գրութեան նրա «Արշակունի» ծաւալուն պոէմը (նուիրում Ստեփան Շահումեանի եւ նրա ընկերների անդրկասպեան եղբրական վախճանին) բաւական անուն հանեց եւ դարձաւ գրական առօրեայի միայուն յիշատակումներից մէկը: Անյուստ պատճառներով՝ Վարդանեանի անունը երկար

ժամանակ շատ չէր լսւում: 1961 թուին յանկարծ լոյս տեսաւ նրա նոր՝ «Մահունամրոցում» վերնագրով չափածոյ գիրքը, որտեղ ներկայացւում են զրբուսագներ ցարական Պետերբուրգի տրիւրահայկ Պետրոպաւլովիտի բերդի գներգին կեանքից: Աշխարհում շատ քան է փոխուել, բայց Վարդանեանը շարունակում է հին օրերի նման իր երիտասարդական տարիների աչքով նայել իրականութեանը: Նրա ստեղծագործութեան մէջ աւելորդ է խոհ ու ապրում, մտքեր բնաշրջում փնտռել: Առատ են յայտարարութիւնները, կոչերը, նկարագրութիւնները: Այգուհանգերձ, Աղասի Վարդանեանը հասարակական ու գրական որոշ սերնդի կենդանի վկաներից է՝ իր մտածելակերպով, կեանքը ընկալելու հաստարազ ու մակերեսային, բայց անկեղծ եղանակով:

Այս հատուածը վերջացնելուց առաջ կարելի է յիշատակել նաեւ երկու այլ գրական գործիչների, որոնց տեսակարար կշիռը այսօր շատ անշուշտ է, բայց Չճական թուականներին նրանք որոշ տնուն ունէին: ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆԻՆ (ծնունդ 1889 թ. Ալաշկերտում) գործել է երկար ժամանակ Մոսկուայում՝ զանազան ասպարէզներում: Վերջին տարիներս նրա անունը խօսակցութեան նիւթ դարձաւ Հայկումկուսի պատմութեան մի շարք հարցեր արծարծելու կապակցութեամբ: Բայց Հայկումու երբեմնի ստանաւորները տյլեւ ոչ մի տեղ գրեթէ չեն յիշում: ԱՐՇԱՒԱՅԱՄ ԱՐՇԱՐԱՆԻՆ (ծնունդ 1896 թ. Կաղզուանում) իր ժամանակ եռանդուն գրականապետ էր, հայ գրականութիւնը առաներին ծանօթացրնելու մշակ եւ ապրում էր Մոսկուայում: Այժմ գլխաւորապէս զբաղւում է թատերական պատմութեան եւ հետազոտական բնոյթի այլ հարցերով:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

(Շար. 1)

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԼԵՄԱՆ - ՀԱՌՈՒՓԹԻ

«ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԲԵՄՆ ԵՒ ԱՅԺՄ» ԵՐԵՔ ՀԱՏՈՐՆԵՐԸ

Պիտի փորձեմ նոյն հեղինակին միև երկերուն վրայ եւս անհարկ մը նետել եւ ներկայացնել մասնաւորաբար այն գործերը, որոնք հեռուէն թէ մօտէն Հայ ժողովուրդը, մեր Հայրենիքը, մեր մըշակոյթը, պատմական անցեալն ու ներկան կը շօշափեն:

Այլեքիս առջեւ ունիմ, ընդարձակ եւ համառօտ տասնեակ մը աշխատանքներ, մեծ մասով ճամբորդական տպաւորութիւններու երեւոյթին տակ, քաղաքական թովանդակութիւն մը ունին:

Փառել Ռօրպախի հեղինակութեամբ լոյս տեսած գիրքերէն առաջինն է «Թուրանի եւ Հայաստանի մէջ» խորագիրը կրող հատորը, 1898-ին Պերլին, ենթախորագիրը ունենալով՝ «Ռուսական քաղաքականութեան արահետներու վրայ»: Այս գրքին երկրորդ մասը միայն «Դէպի Հայաստան» խորագրով, թարգմանուած է Հայերէնի Վ. Ժանիկեանի կողմէ, եւ գրքոյկով մը լոյս տեսած է Պոլիս 1911-ին, եւ ժողովրդական Գրադարանի մատենաշարին թիւ 3-ն է:

Այս հատորը նկարագրականներ կը պարունակէ, ինչպէս նաեւ քաղաքական, պատմական եւ տնտեսական խորհրդածութիւններ, ոռոսական տիրապետութեան տակ դանդաղ Միջին Ասիոյ եւ Հայաստանի մասին, Հայ ժողովուրդին վրայ ճիշդ դատողութիւններ արձանագրելով:

Հատորին վերջին չորս գլուխները նուիրուած են Հայաստանի եւ Հայերուն, այցելած ըլլալով Էջմիածին, ինչպէս նաեւ Բաքարատներու մայրաքա-

ղաք Անիի աւերակները: Ինչպէս եւրոպայի բոլոր ուղեւորները, Ռօրպախ եւս հիացումով ու երկիւղածութեամբ կը յիշէ զոյգ Արարատները, որոնք իրենց յաւերժական շուքը կը տարածեն Արարատեան դաշտի ու Երեւանի վրայ: Երեւանն կը մեկնի դէպի Էջմիածին, ողջունելու համար Ամենայն Հայոց Հայրապետը, Որիմեան Հայրիկը: Այս էջերուն մէջ է որ հեղինակը կու տայ Որիմեան Հայրիկի դէպի Երուսաղէմ աքսորին եւ Էջմիածնի Կաթողիկոս ընտրուելուն մահաւորապէս նկարագրութիւնը:

Ութերորդ գլուխը կը խօսի Հայ ժողովուրդին եւ Հայ եկեղեցիին մասին: Հայերու եւ Կովկասի միև ազգութիւններուն մասին խօսելով, եւ շեշտելով Հայերուն Հայրենասիրութիւնը, մէջ կը բերէ Մկրտիչ Պէշկէթաշեանի «Գարուն» քերթուածը, որուն առաջին տողերն են, «Ո՛հ, ի՛նչ անուշ եւ ի՛նչպէս զով...»:

Իններորդ գլուխը նուիրուած է Հայկական հարցին, զոր կը քաջատրէ հանդամանօրէն, մասնաւորաբար՝ Անգլիոյ, Ռուսիոյ եւ Գերմանիոյ վերաբերումը: առաջին պետութեան չահազդուութիւնը, բազմաթիւ էջերու նիւթը կը կազմէ: Հատորը կը վերջանայ Դեպի Անիի աւերակները: Ռօրպախի Շիրակի դաշտադէտին այդ աւերակները Հայութեան անցեալին մէկ թանկագին Հայրատութիւնը կը նկատէ:

Ռօրպախի երկրորդ կարեւոր աշխատութիւնը հինգ տարի ետքը լոյս կը տեսնէ 1903-ին, Պերլին, «Կովկասէն դէպի Միջերկրական» խորագրով: Այս աշ-

խառնութիւնը ութը զլուիններէ կը բաղկանայ, հետեւեալ վերնագիրներով:— Կովկասի միւլ կողմը՝ «Արարատեան պաշտօն Երրակ», Լեւոն Մասիս եւ Վահայ Ծովը, Ենյի ձէլայէտտին (1877-ի պատերազմի դրուագներէն), Տարսն, Եփրատի եւ Ալիս գետին միջեւ, Տաւրոսի վրայէն, Հարաւային Հայաստան, Ռաքիս եւ Տիգրանակերտ:

Ամէն մէկ զլուին նկարագրութիւնն է ուղեւորական յուշերու, որոնց մէջ Փոքր Ասիական բազմաթիւ քաղաքներ կ'ողկեր շուրջ:

Թուականի կարգով «Պաղտատի երկաթուղին» խորագրով զբոյժը ունինք, Պերլին լոյս տեսած 1911-ին, փոքրիկ քարտէսով: Երեք զլուիններէ կը բաղկանայ, ուր կը խօսուին երկաթուղիին հետ կապուած քաղաքական տեսակէտներուն, զծին երկու կողմը գտնուած Հողերուն, ինչպէս նաեւ անտեսական շահերուն մասին: Զանազան պետութիւններու, մասնաւորաբար անգլիական, գերմանական եւ ռուսական շահերուն բախման շրջանակ մը կը նկատէ Պաղտատի երկաթուղիին շինութիւնն ու շահագործումը: Միջազգային մէջ դաշմանակներ տեղաւորելու խնդիրը ամենամեծ ուշադրութեամբ նկատի կ'առնէ:

1914 Յուլիս-Օգոստոս ամիսներուն, Ա. Ընդհ. պատերազմի նախօրեակին, Պերլինի մէջ կը կազմուի «Բանքը» Հայագետական ընկերութեան երկամսեայ պարբերական «Մեսրոպ» անունով մշակութային նպատակներով կազմուած այս ընկերութիւնը երեք նպատակներ պիտի հետապնդէր:—

1. Տարածել Հայ ժողովուրդի մասին արդար եւ անաչառ դնահատում մը Գերմանիոյ մէջ եւ գերման ժողովուրդին մասին՝ Հայոց մէջ:

2. Միջնորդել հիմնական ծանօթութեան Համար՝ Հայ ժողովուրդի ստեղծագործութեանց մասին Համաշխարհային մշակոյթին մէջ, եւ գերման ժողովուրդի ձգտումները Հայ մշակոյթի վարչացման Համար:

3. Մշակել անձնական յարաբերու-

թիւններ Գերմաներու եւ Հայերու միջեւ, մասնաւոր անոնց՝ որոնք Գերմանիա կ'առնեն իրենց ուսումը:

Կազմուած կոմիտէին մէջ, որուն կը մասնակցէին Տօքթ. Լեփսիուս, Փրոֆ. Մարկուարտ, Փրոֆ. Ռադէ, Փրոֆ. Եթեր եւ Տօքթ. Փ. Ռօրպախ: Հայերուն կողմէ կային Տօքթ. Կրէնֆիլտ, Ռ. Դարբինեան, Աւ. Իսահակեան, Բժ. Ա. Հայրանեան, Բժ. Մ. Մուրատեան եւ Բժ. Ա. Դահլապեան: Իր ատենին Հրատարակուած կոչին իրենց ստորագրութիւնը սուած են պետական անձեր, ծանօթ Հոգեւորականներ, ուսուցչականներ, զբաղեցնողներ, արուեստագէտներ, գիտնականներ, վաճառականական մեծ Հաստատութիւններու վարիչներ եւ ուրիշ նշանաւոր անձեր:

Դժբախտաբար մէկ թիւ միայն լոյս կը տեսնէ «Մեսրոպ»-ն, որուն մէջ Կրէնֆիլտ կը ներկայացնէ իրենց պորձը: Գերմաներէն բաժնին մէջ յօդուածներ ունին Տօքթ. Լեփսիուս (Հայկական քրօնականը), Լ. Նազարեանց (Թրքական թիւր 19-րդ դարում), Ռ. Դարբինեան (Ակնարկներ ժամանակակից Գերմանիոյ վրայ), Տօքթ. Փ. Ռօրպախ (Հայերը որպէս բազմալեզու եւ մշակութային ազգայն Արեւելի մէջ): Հայկական բաժնին մէջ, Լեփսիուսի եւ Ռօրպախի յօդուածներուն ամփոփումը կայ: Ասոնցմէ զատ Յ. Անն Մանհայն թարգմանութիւն մը ունի Ռաբինտրանդ Թալկորէն, Աւ. Իսահակեան երկու գրքերու, ինչպէս նաեւ Ռ. Զարդարեանի «Նօթը երգիչներուն» գերմաներէն թարգմանութիւնը:

Քանի մը խօսք սակայն Տօքթ. Փ. Ռօրպախի յօդուածին մասին: Հաստատութիւն նախապէս յայտնած իր մտածումներուն, յօդուածադիրը՝ Հայերուն իրենք քաղաքական եւ մշակութային ազգակ, Արեւելի մէջ ունեցած դերը կը շեշտէ: Հայերը, կը գրէ ան, իրենց թիւէն աւելի կարեւորութիւն ունին: Անկախած բարոյական, մտաւորական եւ նիւթական տեսակէտով ամենազորօն տարրը կը կազմեն բոլոր արեւելեան ժո-

դոմուրդներուն մէջ: Նոյնիսկ կարելի է ըսել թէ իրենց ազգային բնատուր ընդունակութիւններով, գրեթէ միակն են այդ միջավայրին մէջ: Հայերուն մէջ թաքնուած է այնպիսի եռանդ եւ տոկունութիւն, որ կը հակասէ արեւելքի մասին ունեցած մեր բոլոր հասկացողութիւններուն...: Հայերը ցոյց կու տան անհամեմատ աւելի զօրեղ հոգեկան եռանդ ու դիմադրական կարողութիւն, պահպանելու իրենց ձեռք բերած կրօնական եւ լեզուական արժէքները, աւելի քան արեւելքի միւս բոլոր ժողովուրդները: Հայերը զարեւրէ ի վեր եղած են երկրագործ եւ քաղաքաշէն, մշակութային ժողովուրդ, որոնց բնակավայրերն եղած են աւելի հարթավայրերը, քան լեռները, այնտեղ է որ այսօր ալ կ'ապրի ժողովուրդին արմատը: ...Հին Ժամանակներէն ի վեր Հայերը մարտական ժողովուրդ եղած են, աւելի քան միւս արեւելքիները: Հայկական վարձու զինւորներն ու զինուորականները մենք կը գտնենք այն քանակներուն մէջ, որոնց մով Յուստինիանոսի զօրավարները ընկնեցին Օսթրոգներու տիրապետութիւնը Իստախոյ մէջ: Բիւզանդական կայսերական զօրքերուն մէջ բաւական պատկանելի տարր մը եղած է Հայութիւնը, եւ իրենց այդ ռազմական ընդունակութիւններուն շնորհիւ, անոնք ամբողջ հայկական տինաթի մը բարձրացուցին բիւզանդական դահուն:

Այս յօդուածին մէջ Տօքթ. Փ. Ռօրպաի վկայութիւն մը կու տայ նաեւ Տօքթ. Ֆօն Ռովէնէն, ուր ի միջի այլոց կ'ըսուի. «Բայց ով որ, ինչպէս ես, չորս տարի ապրեր է Հայերուն մէջ, գիտէ որ Հայերը աշխատասէր, զգաստ եւ ուշիմ ժողովուրդ մըն են, եւ անկասկած կարելի է զայն ընդունիլ իբրեւ ամէնէն ընդունակ, առաջադէմ ցեղը: Ծնորհիւ իրենց ունեցած ունակութիւններուն եւ մասուր բարձր յատկութիւններուն է որ Թուրքիոյ մէջ Հայերը ամենաբարձր աստիճաններուն կը հասնին: ...Հայութեան ժրջանութիւնը ամենացայտուն կերպով հրապարակ կու գայ զարոյցներ

ու կազմակերպման գործին մէջ: Հայկական զարոյցները աւելի բազմաթիւ են եւ աւելի բարեկարգ, քան Թուրքիոյ որեւէ ազգի զարոյցները:

Իբրեւ եզրակացութիւն, Ռօրպաի կը խորհրդածէ. «Այս բոլորը ի նկատի ունենալով, կրնանք ըսել թէ Գերմանիա, իբրեւ պետութիւն մը որ արեւելքի մէջ առաջնակարգ կերպով շահագրգռուած է, պէտք է ձգտի գրեւել Հայերը: Մենք պարտաւոր ենք նոյնքան մեծ կարեւորութիւն տալ մշակութային-բարոյական յարաբերութիւններու մշակմանը, Թուրքիոյ մէջ բնակող բոլոր ազգութիւններուն հետ, եւ ոչ մէկ ազգ այս ասպարէշին մէջ մեզի կրնայ այնքան օգտակար ըլլալ, որքան Հայ ազգը»:

Տօքթ. Փ. Ռօրպաի 1914-ի պատերազմին հետ կապուած հատոր մըն ալ ունի. իսկ 1916-ին հրապարակ կը հանէ «Համաշխարհային քաղաքականութիւնը» անուամբ ընդարձակ հատոր մը:

Մեծ պատերազմի նախօրեակին կազմուած «Հայազերման Ընկերութիւնը», երբ առիթը կը ներկայանայ իր գոյութիւնը զգալի կ'ընէ: Այսպէս 1927-ին (Սեպտ.) լոյս կ'ընծայէ զբեօյկ մը, «Հայաստան» ընդհանուր խորագրով եւ որ կը պարունակէ ընկերութեան մէկ տեղեկագիրը, ուղղուած իր անդամներուն եւ բարեկամներուն, Ալլաքու Պաշտակութեան առթիւ: Այդ զբեօյկին նըպատակն էր յիշեցնել հայ ժողովուրդին եղած խոստումները Համաձայնականներուն կողմէ, իր ազգային իրաւունքներու իրականացման համար: Մասնաւոր եւ շահեկան յօդուածներ ունին ողբ. Աբտալէս Աբելեան (Արդի Հայաստանը), Տօքթ. Կրէնֆելտ (Հայերը արտասահմանի մէջ), որուն մէջ կը խօսուի մըշակութային բոլոր այն ձեռնարկներուն մասին, որոնք գոյութիւն ունին զանազան երկրներու մէջ, ինչպէս նաեւ Հայերու վիճակագրութիւնը, Նանսէնի մէկ ծրագիրը փախստականներու հարցին մասին: Ասոնցմէ զատ զբեօյկը կը պարունակէ նաեւ հետեւեալ նիւթերը. Թըրքական 5 միլիոն ռուկիի ճակատագիրը,

կոտարուող ջարդերուն, առեւանգումներուն, կողոպուտներուն եւ աներեւակայելի տանջանքներուն վրայ: Կառավարութիւնը Դեկտեմբեր 22-ին միայն կը պատասխանէ այս չորս յիշատակագիրներուն, պատասխան մը, յանդիմանութեան, անքաղաքավարութեան եւ մեծխօսիկութեան իրրեւ գլուխ գործոց, ուր կ'ըսուի թէ «ս'չ մէկ օտար պետութիւն, նոյնիսկ զինակից Գերմանիան, իրաւունք չունի միջամտելու իր ներքին գործերուն, թէ անվիճելի իրաւունքն է ամէն մէկ պետութեան, միջոցներ ձեռք առնել հոն ուր խռովութիւնները կրնան տարածուիլ, թէ իր արդար իրաւունքն է, պատերազմի պահուն, իրրեւ պետական ինքնապաշտպանութիւն, ազգաբնակչութիւնները տեղափոխել»:

Գնապանները իրենց յիշատակագիրներուն մէջ կը յիշեն, որ գերման ճորտատնէական շրջանակներու մէջ անոց անհանգստութիւնը, չէզոք երկիրներու դերազդողութիւնը, թշնամի պետութիւններու բողոքները, Թուրքիոյ կրած տնտեսական վնասները եւ հաշտութեան համար ստեղծուած անպատասխանները պէտք է որ նկատողութեան առնուին օսմանեան կառավարութեան կողմէ, սակայն եւ ոչ մէկ կերպով կ'ազդուին արեւելքի գիւնազէտներն ու ոճրագործները:

Լուծ ժամուրը, լուծ հանրային կարծիքը, որովհետեւ զինուորական խիստ դրաճնութիւն մը արգիլած էր գրելու եւ խօսելու հայկական տարազրութեան եւ սարսափներուն մասին: Գերմանական մամուլը Թալատի սպաննութեան եւ Թէհլիրեանի գոտավարութեան ընթացքին միայն ազատ զգաց ինքզինքը՝ արտայայտուելու եւ գերման կառավարութիւնը պատասխանատու բռնելու կատարուած գազանութիւններուն մասին, որոնց նմանը ոչ մէկ պատմութիւն արձանագրած է:

Ընկերվարական օրկան Ֆորվերց կը գրէր՝

«Սարսափներուն մէջ Գերմաններու գործօն մասնակցութեան մենք ալ չենք

հաւատար, սակայն պէտք է քննուէր, թէ արդեօք գերման կառավարութիւնը իրօք ամէն ինչ ըրած է, որպէսզի իր զինակցին եղեռնագործութիւնները արգիլէ: Եւ մանաւանդ կատարելի է Լուտիստօրֆի այն մեթոտը, որ այս խնդիրներուն ծանօթացումին գերման ժողովուրդը մասնաւոր խանդով հետու պահած է, մինչ անոնց յայտնութիւնը դարձի իր ժողովուրդի մը կը չղթազերծէր: Թէհլիրեանի գառավարութիւնը պէտք է բանայ աշխարհի աչքերը եւ ցուցնէ պատերազմի բարբարոսութիւնը եւ մեծերու կոպիտ գործուած պատերազմական ռմբերը»:

Ազատական օրկան Պերլիմէր Թալատի վրայ կը գրէր՝

«Հին Բիշլէմ թէ՛ ոչ մէկ մարդկային երեւակայութիւն այս դէպքերուն մասին կրնայ իրեն համար հետաւոր պատկեր մը չի նկատ, իր ամբողջ նախնականութեամբ պէտք է մէջտեղ գայ, եթէ մարդ կ'ուզէ ժողովուրդի մը տառապանքի ճամբան նկարագրել, որ պատմութեան մէջ նմանը չկայ»:

Ֆրայհայց կը գրէր՝

«Թուրքիա գերման պատերազմի կառավարութեան օգնութիւնը վայելեց: Առանց այս օժանդակութեան, հայկական սարսափները անհնարին կ'ըլլային: Գրաքննիչը պարտադրեց Գերմանիոյ մէջ հայկական սարսափներուն մասին խիստ լուրջ պահել: Գերման պատերազմի կառավարութիւնը մեղաւորից է Հայաստանի մէջ գործուած սարսափելի աճիրներուն»:

Վերջացնելէ առաջ պիտի փափաքէինք որ այս պատկանելի գործը, վրկայութիւններով ու պաշտօնական վկայութիւններով հաստատուած, մեր կարծիք ու ահաւոր պատմութիւնը, Թարգմանուի հայերէնի, ինչպէս նաեւ բոլոր այն հաստիները, որոնք հայ ժողովուրդին անցելու ու ներկայ մշակոյթի պատմութեան նուիրուած են:

ՄԿՐՏԻՁ ՊԱՐՍՄԱՐԵԱՆ

(Շաբ 2 եւ վերջ)

սուհանդերձ դիւթում է մեզ, մնում է կատարել այդ քերթուածների թարգմանութիւնը արեւմտեան լեզուներէն, որոնց մէջ մեր հանդիպած ամենայնպէս թարգմանութիւններն են Ռ. Ա. Նիկոլոսոնի եւ Հէնրի Բէրլէյնի կատարած անգլերէն փոխադրութիւնները, ինչպէս եւ Ամին Ռիհանիի «Լազաւիաթ»ի կատարած թարգմանութիւնը:

1.— ԱՐՈՒԼ 'ԱԼԱՅԻ ԿԵԱՆՔԸ

(973—1057 մ. թ.)

Արուլ 'Ալա ծնունդ է Հէջ. 363/973 թուին Հալէպի շրջակայքում գտնուող Մաւրրաթ ան-նո՛ման աստում: Մընուել է Ուրբաթ մի օր, Բաւրէյնից գաղթած մի ընտանիքում: Ձորս տարեկան հասակում ծաղկախոտի պատճառով երկու տղից կուրանում է, մի աղէտ՝ որը հաւանաբար խորը ազդեցութիւն է թողնում նրա ներաշխարհի վրայ: 15 տարեկան հասակում կուրցնում է հօրը եւ տեղափոխւում Հալէպ, ուր ուսանում է մինչեւ 21 տարեկանը (Հէջ. 384/994) եւ տիրապիտում է օրուայ բանասիրական, լեզուագիտական, փիլիսոփայական եւ աստուածաբանական գիտութիւններին: Արուլ 'Ալան դեռ 11 տարեկան հասակից սկսել էր բանաստեղծել: Հետեւաբար տարօրինակ չէ, որ վերադառնալով իր հայրենի ասանը, նա կազմում է իր քերթուածների առաջին ժողովածուն, որը անուանում է «ԿԱՅԾՔԱՐԻ ՀՐԱՑԱՅՏ»: Այս ժողովածուն պարունակում է ներբողականներ, եղերերգութիւններ, քնարերգական հատուածներ: Բայց այս առաջին հատորում դեռ բացակայում է նրա հասուն տարիքի փիլիսոփայական խորքը: Իր կեանքի այս րեզուն շրջանում, որը տեսնում է մինչեւ նրա 35 տարիների լրումը, Արուլ 'Ալան ստուար նամակադրութիւն է պահպանում իր ժամանակի յայտնի բանասէրների, իրաւաբանների, բանաստեղծների եւ քերականագէտների հետ: Այդ

նամակները, որոնք դրուած են երբեմն յանգաւորուած արձակով, ճարտարապետական եւ լեզուական յղուածութեան օրինակներ են, որոնց մէջ նա ցուցաբերում է արտակարգ վարպետութիւն (4):

Կատարելագործելու համար իր դրական եւ բանասիրական կրթութիւնը, Հէջ. 398 թուին (1007) Արուլ 'Ալան ճամբորդում է Բաղդադ, որը դեռեւս իսլամական աշխարհի մասաւորական եւ գեղարուեստական կենդրոնն էր, եւ ուր կարելի էր հանդիպել օրուայ մեծագոյն մտաւորականներին եւ, միաժամանակ, օգտուել այնտեղի հարուստ դրագարաններից: Արուլ 'Ալայի անունը արդէն ծանօթ էր մայրաքաղաքի իմաստասէրներին եւ գրականագէտներին, նրան դըրկարաց ընդունում են իրենց ժողովեւրում եւ հաւաքօյններում եւ նա պատեհութիւն է ունենում այնտեղ ծանօթանալ օրուայ տաղանդների մեծամասնութեան հետ: Նա մնում է Բաղդադ մէկ տարի եւ 7 ամիս եւ մեծ հռչակ է ստանում որպէս կատարելագործուած քերթող եւ հմուտ քննադատ:

Արուլ 'Ալան, որը պատանի հասակից հակուած էր ճշմարտ եւ մեկուսի կեանքի, շուտով յղնում է Արքայական Խալիֆաների մայրաքաղաքից եւ 401 թուին (1010) վերադառնում է իր ծընընդամայրը, ուր մնում է մինչեւ կեանքի վերջը եւ ուր վախճանւում է եւ թաղւում, Հէջ. 449, մ. թ. 1057 թուին:

Մեկուսացած եւ ճշմարտ կեանքը ամբողջ այդ 47 տարիների ընթացքում նրան դարձնում է առասպելական մի տիպար: Նա ինքն իրեն կոչում է «ԵՐԿՈՒԻ ԲԱՆՏԵՐԻ ԱԻՆԵՒԻՆ» որով նա ակնարկում է նախ իր կուրութեան եւ ապա իր ինքնակամ արգելափակմանը:

Այդ երկար տարիների ընթացքում նրա դրագմունքը կայանում էր միմիայն ստեղծագործութեան եւ գաստուաւորութեան մէջ: Այդ շրջանին են պատկանում նրա գեղարուեստական եւ փիլիսոփայա-

(4) Margoliouth, Letters Abu-l-'Ala, Oxford 1898.

կան մեծագոյն երկերը, որոնք տարածեցին նրա հռչակը ամբողջ մահմեդական աշխարհում, Պամիրից մինչև Անգալուցիա։ Արուսի 'Ալայի մասին թանկագին մի վկայութիւն է մեզ հասել Իրանի գլխաւորութիւնից։ Դա պարսիկ մեծ բանաստեղծ-փիլիսոփայ եւ իմաստասէր Կամշադի պարապլոխներից՝ ՆԱՄԻՆԻ ԽՈՍՐՈՎԻ (մ. թ. 1003-1088) յիշատակութիւնն է իր «ՄԱՅԱՐ ՆԱՄԻՆ»-ում (Գիրք ճանապարհի)։ Իրանի ծայրագոյն արեւելքից, ՄԱՐԻ քաղաքից ճամբորդելով դէպի Գահիրէ, 1047 թուի Յունուար 12-ից 15-ը Նամէր Խոսրովը կանգ է առել Մա'արրաթ ան-Նո'մանում։ Ձընայած նրան չի յաջողուել անձամբ հանդիպել Արուսի 'Ալային, այսուհանդերձ նա իր տեսածն ու լսածը հետեւեալ կերպով է աւանդել։

Այնտեղ ապրում էր մի մարդ, որ կոչւում էր Արուսի 'Ալա ալ-Մա'արբի, քաղաքի մեծագոյն անձնաւորութիւնը, որը կայր էր։ Նա շատ հարուստ էր եւ ունէր բազում ծառաներ եւ սպասարկուներ, իրականում՝ քաղաքի բոլոր բնակիչները կաթնա նրա սպասաւորները լինէին։ Բայց նա որդեգրել էր մենակեաց եւ քաղաքի կեանք, հագին ունէր կոպիտ մի պատմուճան եւ փակուած իր տան մէջ՝ օրուայ մէջ միայն կէս հաց էր ուտում եւ ուրիշ ոչինչ։ Եւ լսեցի, որ նրա տան դռները միշտ բաց էին եւ որ նրա ծառաները եւ սպասարկուները կառավարում էին քաղաքի ընթացիկ կեանքը։ միայն բացառիկ դէպքում էր, որ նրան խնդրում էին միջամտել։ Նա իր բարեգործութիւնը ոչ ոքի չէր խնայում, բայց ինքը մշտապէս ծոմապահութեան մէջ էր, դիւրեւերը արթուն էր մնում եւ որեւէ աշխարհիկ գործով չէր զբաղւում։ Եւ բանաստեղծութեան ու գրականութեան մէջ նա տիրացել էր այնպիսի բարձր մի դիրքի, որ Մուրիայի, Մաղրբի (Մաւրիտանական երկիրները եւ Իսպանիան) եւ Միջագետքի մեծագոյն գիտունները խոստովանում էին, որ դա՛րձ դեռ նրան հաւատար ոչ ոքի չի ստեղծել։ Նա գրել էր մի գիրք, որ կոչւում

է «Ալ-Ֆոսուլ վալ-Ղայիաթ» ուր նա ներկայացրել էր, պերճօրէն եւ հրաշալիօրէն, հանելուկներ եւ ալլաքանութիւններ, որոնց մարդիկ հասկանալ չէին կարող լիովին, նոյնիսկ նրանք՝ որ ուսումնասիրել էին գիրքը իր իսկ օգնութեամբ։ Եւ այդ գրքի շարագրութեան համար պահարկում էին նրան ոմանք, յայտարարելով, որ նա ցանկացել է երգիծօրէն ընդօրինակել Ղոր'անը (այս երգիծական Ղոր'անի օրինակները հասել են մեզ եւ թարգմանուել են գերմաներէնի եւ անգլերէնի ծ. թ.)։ Նրա ներկայութեան մշտապէս գտնւում էին շուրջ երկու հարիւր հոգի, եկած աշխարհի յոսանկիւններից եւ որոնք ցանկանում էին ուսանել նրա մօտ եւ սովորել քերթողական եւ գրական արուեստը։ Եւ լսեցի որ նա յօրինել է աւելի քան 100 հազար տուն բանաստեղծութիւն։ Մէկը հարցրել էր նրանից թէ ինչո՞ւ նա ինքը չի օգտուում Աստույ շնորհած բոլոր այդ բուրք ու բարիքից եւ ամէն ինչ բաժանում է աշուրց եւ նա պատասխանել էր. «Եւ լինի կարող ունենալ աւելին քան այն՝ ինչ կարող եմ ուտել»։ Եւ երբ եւ հաւաստայնտեղ, այդ մարդը դեռ կենդանի էր (Արուսի 'Ալան մեռնում է դրանից 10 տարի յետոյ միայն։ ծ. թ.)։

Արուսի 'Ալան մեռնում է 1057 թուին, 85 տարեկան հասակում, 3 օրուայ կարճ հիւանդութիւնից յետոյ եւ թաղւում է իր հայրենի աւանում։ Նրա գերեզմանաքարի վրայ հետեւեալ տողն է փորագրւում։

ԱՀԱ ԱՅՆ ՈՃԻՐԸ ՈՐ ԳՈՐԾԵԼ Ե ԼԱՅՐՈՒ
ԻՄ ԼԱՆԻԷՊ. ԵՍ ԱՅԴ ՈՃԻՐԸ ՈՋ ՈՔԻ
ԼԱՆԻԷՊ ԶԳՈՐԾԵՑԻ

✽

Արուսի 'Ալան իր երկար կեանքի ընթացքում բազմաթիւ երկեր է յօրինել, որոնց մեծ մասը այսօր չկան եւ կամ դեռ գտնւում են ձեռագիր վիճակում, զանազան գրադարաններում, նրանցից

մի քանիսն էլ հրատարակուել են աղ-
ճատուած վիճակում: Արուլ 'Ալային ալ-
սոր մենք ճանաչում ենք մի քանի հիմ-
նական աշխատանքներով:

Դրանցից առաջինը նրա երիտասար-
դական շրջանի բանաստեղծութիւնների
ժողովածուն է, «ԿԱՅՄԻՍԻ ՀՐԱՑԱՅ-
ՏԸ» անուամբ: Նրա քերթուածների երկ-
րորդ եւ ամենակարեւոր ժողովածուն
«ԼԱՉՈՒՄԻՍԻԱ» կամ լրիւ անուամբ՝
«ԼԱՉՈՒՄ-ՄԱ ԼԱ-ԵԱԼԱՉԱՄ» կամ «ՊԻ-
ՏԱՆԵԼԻՌԻՒԹԻՆՆ ԱՆՊԻՏԱՆԱՅ» որը
կտրելի է համարել նրա փիլիսոփայական
հասկացողութիւնների լրիւ պատկերա-
ցումը:

Նրա մի այլ գրութեան է «ԲԻՍՄԱԼԱԹ-
ԱԼ-ՂԱՖԻՆԱԸ» կամ «ԵՆԵՐՄԱՆ ՊԱՏԳԱ-
ՄԸ» որը կլուարտ արձակով գրութեան
«Աստուածային Կատակերգութիւն» է,
չառ մօտ Դանտէի մայրաղացման: Այս
երկում Արուլ 'Ալան նկարագրում է
իր երեւակայական ճամբարդութիւնը
Ստուեքների Ալիարհը, ուր նա հանդի-
պում է զանազան արար Հեթանոս եւ հա-
ւատացեալ բանաստեղծների: Այս երկը
մասնակի կերպով թարգմանուել է անգ-
լերէնի: Փրանսերէնի, գերմաներէնի եւ
իտալերէնի 5): Գրութեան արդեցութիւն-
նը Դանտէի «Աստուածային Կատակեր-
գութեան» վրայ նիւթ է ծառայել բազ-
մաթիւ ուսումնասիրութիւնների 6):

Արուլ 'Ալայի ամենայնազոյն երկը,
իսլամի տեսակէտից, դա «ՃՈՍՈՒՆ ԿԱ
ՂԱՆԱԹ»-ն է, որը երգեծական ընդօրե-
նակութիւնն է Ղոր'անի եւ որի մի մասն
է միայն փրկուել կորուստից:

2.- ԱՐՈՒԼ 'ԱԼԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՆԱՅԵԱՑԻՔԸ

Արուլ 'Ալայի կրօնական հասկացո-
ղութիւնները մեզ առանձնապէս չեն հե-

տաքերքում այստեղ, քանի որ դաւա-
նանքների արդեցութիւնը նրա զրակա-
նութեան մէջ անուշղակի կերպով է ար-
տացուել միայն: Բաւական է յիշել որ
Արուլ 'Ալան իր ժամանակակիցների եւ
հետագայ կենսագիրների մօտ ճանաչ-
ուած է որպէս ՁԻՆԴԻՂ, կամ «հերետի-
կոս»: Ուղղափառ մահմեդականները
այդպէս էին կոչում բոլոր նրանց, ու-
րոնց դիրքը հաւատքի վերաբերմամբ
պայմանաւորուած էր արամարանական
հետեւութիւններով, որը կասկածանքով
է մօտենում վերացական ըմբռնումնե-
րին, իրապաշտ է, արհամարհում է կը-
րօնական ծիսակատարութիւնները եւ ու-
նոթապաշտութիւնները:

Նոյն այս ժամանակաշրջանում էր,
որ Օմար Քայխամին հալածում էին պար-
սիկ կղերականները միեւնոյն պատճա-
ռով, նրան անուանելով «դժբախտ մի
փիլիսոփայ, անկրօն եւ նիւթապաշտ ու-
րի քառակնիքը ապացոյցն են նրա
«մտքերի չփոթութեան եւ ծայրայեղ սը-
խակականութեան»: Օմարին նոյնպէս մե-
ղադրում էին կրօնական պարտականու-
թիւնների թերացման մէջ, եւ նա ինքն
իրեն արդարացնելու համար ստիպուած
եղաւ նոյնիսկ պաշտօնական մի «չքմե-
ղական» գրել («Յադազա Գոյալ-Էթալ եւ
Կրօնական Պարտականութիւններ»):

Արեւմտեան արեւելագէտները նոյն-
պէս չառ են զրադուել Արուլ 'Ալայի փի-
լիսոփայութեան բացատրութեամբ: Ա-
ռալին անպատ Բարոն Ա. Ֆոն Կրէմէրն
էր որ ծանօթացրեց Արուլ 'Ալային ա-
րեւմտեան հետ: Բայց անգլիացի արա-
բագէտ Նիկոլայ Նիկոլսն էր որ խորապէս
ուսումնասիրեց նրա քերթուածները եւ
թարգմանեց նրա բանաստեղծութիւննե-
րը անգլերէնի: Նա իր մի յօդուածում
Արուլ 'Ալային անուանում է ազատամիտ
եւ անհաւատ մի մտաւորական, որը կա-
կածամասութիւնը մի աստիճանի էր հառ-
ցրել՝ որ նոյնիսկ կոտորածում էր իր
սեփական կասկածի վրայ 7): Հ. Մա-

5) G. Brackenbourg, Cairo 1943 - Nicholson, in
JRAS 1906 & 1912 MEISSA, «Le Message de Par-
don» Paris 1932.

6) Blochat - Les Sources orientales de la Divine
Comedie, Paris 1901 with bibliography on the sub-
ject.

7) Nicholson - Abu-l-'Ale al-Ma'arri, in El, vol.
I, page 77.

«Ինչինը որը արեւելեան փիլիսոփայութեան մեծագոյն մասնագէտներէն մէկն է, Արուլ 'Ալալի ալլա ծայրայեղ սկեպտիցիզմը հետեւանքն է համարում Իրանի ազատամիտ փիլիսոփաների եւ յատկապէս էՍՄԱԹԻԼԵԱՆ ԱՂԱՆԴԻ տղղեցաթեան: Նա իրաւամբ գտնում է, որ այդ դարաշրջանը եղել է արամքանական կապիտալիզմի եւ ազատամբերդի մի շրջան, որը վարակել էր օրուայ մեծագոյն իմաստասէրներին, փիլիսոփաներին եւ գրականագէտներին»⁸։

Հասկանալու եւ արժէքաւորելու համար Արուլ 'Ալալի գրական խոշոր աւանդը, զննարանները նրան մօտեցել են երկու տեսանկիւնից. փիլիսոփայական եւ բարոյական: Այդպէս են վարակել Նիկոլոնը, Ալի Ազհարը, Հանրի Լաուսարը, Ամին Ծ. Իրհանին, Մասսինիոնը, Էւայլը:

Արուլ 'Ալալի փիլիսոփայական աշխարհայեացքը կարելի է երեք ընդհանուր յատարարների տակ գնել. ՅՈՒՆԵՏԵՍՈՒԹԻՒՆ (սկեպտիցիզմ), ԿԱՍԿԱՆՍՈՒԹԻՒՆ (սկեպտիցիզմ) եւ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ապրիորիզմ)։

ՅՈՒՆԵՏԵՍՈՒԹԻՒՆ (Պէսիմիզմ)

Արուլ 'Ալալի փիլիսոփայութիւնը հիմնուած է դառն, անողորմ, անհաշտ մի յոռետեսութեան վրայ, որով թրծուած են նրա բոլոր մտքերը:

Մարդը, ընկճուած անողորմ մի ճակատագրի բեռնի տակ, հոգով ապականուած, անարդուած գժուճ կրքերով, իր մէջ կրում է ողբերգական մի հակասութիւն. նա ձգտում է յարատեւել եւ անմահանալ, մինչդեռ կարճատեւ մի գոյութիւնից յետոյ, որը լեցուն է սառապանքներով, յուսախաբութիւններով եւ փորձութիւններով՝ անփառունակ կերպով ջնջուում եւ քնչանում է: Քիչ զորք յուսահատութիւնը հնչում է նրա բոլոր քերթուածներում, մի չընդհատուող,

տանջալի, հոգեխարշ մեղեդու պէս:

Կեանքը լռութեամբ մի աշտարակ է: Պղնձէ մի գանգ զօղանքում է արդ: Եւ լռութեամբ մէջ ծնւում է մի մարդ: Եւ երբ զօղանքի հնչիւնն է լռում՝ Մի մարդ է մեռնում:

Կամ՝ երբ այդ դառնութիւնը նա ձուլում է թաքուն երգիծանքի, ասելով.

Զարմանք չէ՞ այս, որ հողիզէն մեր կազմը քայլ, Լինի անօթը երկնային բոցի անշէջ եւ ցանկութեամբ ու կրքերի մոլորեցման մայր, Աստուած գրնի այս հաղաշէն վանդակի մէջ:

Կամ՝

Ոչ մի տուր հատու փշրել չի կարող Պաղպատէ վախճան այս մղձաւանջի: Մե՞նք այլանդալուած տառերն ենք Աստծոյ, Նա մեզ կը կարդայ՝ յետոյ կը ջնջի:

Բայց այդ դառն յուսախաբութիւնը չի սահմանափակում հոգեկան եւ բնազանցական (մետաֆիզիկ) գաւառներով, այլ եւ տեղբարեացում է նրա ընկերային, քաղաքական եւ համայնական հակացողութիւնների վրայ: Նա անհանդուրժելի երգիծանքով եւ ծաղրով է խոսում իր օրուայ մարդկանց, հասարակական գործիչների եւ հոգեւորականների մասին: Ամէնին նա նայում է անգութ հեղնանքով: Նա չի խնայում ցրել է դասակարգի: Մտրակում է իշխանների գեղծութիւնները, էմիրների խարդաւանանքը եւ կաշառակերութիւնը, որոնց նա համեմատում է աւազակ Բեդլիւնների հետ: Նա չի վախենում հարուածել ամենակարող «ՕԼԱՄԱՆԵՐԻՆ» կղերականներին, որոնց նա պատասխանատու է համարում համայնքի նեխուածութեան համար: Իրաւաբանները, քարոզիչները, կրօնական մեկնաբանիչները, բոլորը նրա համար շահադէտ, կեղծաւոր եւ անուս ցուցամոլներ են: Նա չի խնայում

8) Massignon, Mutaunabbi devant le siècle ismaelica de l'islam (Mémoires de l'Institut Français de Damas, tome III, 1936.

Նոյնպէս զանգուածներին, որոնց պատկարակում է իրենց անկրթութեան, քատորաքարութեան, կոյր սնոտիապաշտութեան համար:

Մահաբի իր տանջալի զոռանքն է արտայայտում այն կեղծիքի դէմ, որը

գոյութիւն ունի մարդու եւ նրա հոգու մէջնէ կամ մարդու եւ իր դիմացինի միջեւ: Այդ կեղծիքը նա օկոքնադիւր է համարում մարդկային հոգու ներուժը:

Ի՞նչ ես դու սպասում մի քնակարանից, քրի տէրը չեմ:
Դու հիւր ես այստեղ, այիտ հեռանալիս ամէն ինչ քողմես:
Դու կը հեռանաս դժգոհ, ակամայ, օտարին հետ,
Մինչդեռ քո հոգում կը զգաս դու ազահ մի կիրք տարելու:

Հոգիդ հագուստ է. կեանքը կը մաշի հագուստը հագիդ,
Նայնիսկ քէ լինի պոպոտից կոփուած դա մի վերտ կոպիտ:
Մութ գիշերները մաշում են նրան ընթացքով դանդաղ
Եւ ստաքիւնը օրէնքն է կեանքի, քեզանից անկայ:

Տարբեր են մարդիկ: Անկեղծը՝ ատուած համայնքի կողմից,
Խաբեբաները պտուղն են քաղում փառքի կողմից:
Նա, որ աղքատ է ոսկով, քայլում է դէպի ստաքիւն,
Թայիլի համար սուտը ոսկի է եւ մեծ գորտքիւն:

Ուժեղ պետիւնիզմ է արտայայտուած նաեւ նրա հեռահալ քերթուածի մէջ.

Թող ինձ, եղբայր, խնդրեմ Աստուծոյ որ ինձ ների,
Մնում է ինձ կըծկումն վերջին հոգեկալքի.
Դեռ խօսում է ազնիւ մարդուց. խօսք է ունայն,
Մարդիկ այսօր քանաչաւ են դիրքով միայն:

Հեփաքներ են մեզ մնացել խելամուռ
Որ հիւսել են մեր նախնիքը արժանաւոր:
Մի քակարդ է երկնակամարն աստեղավառ,
Դա մի ցանց է, ճակատագրի քարը յամառ:

Դեռ ըսկզբից սուտն է իշխել այս աշխարհում,
Մինչ ազնիւր գրկահմերով է ծերանում:
Հակառակգիրն կայր գազան է մի վայրենի,
Անդարման է վէրքը նրա ճիրանների:

Այս աշխարհը մի շարան է (այս ոչ մութի,
Սա մի օձ է, խայտաբղետ, օտարտի:

Մեր անօգնական էութեան ոչնչութիւնը դերով է պատկերացրել.
այս դաժան կեանքում նա հեռահալ առ-

երէ քացես մագաղաքը այն յոյժ գաղտնի,
Որի վրայ հունն է գծուած մեր կարն կեանքի,
Մեզ կը տեսնես որպէս վտակ մի ոսկեցով
Որ կարել է աւազներում անպատի:

Երբեմն նա դառը հեղինակով է ներկա- լըքմամբ, ինչպէս հետեւեալ երկու հատ-
յացցնում կենքի ունայնութեան դաղա- ուածներում:

Փարբե հերբեմն փիլիսոփայական յուսա-

Մի կախարդում պարտեզում, ծաղկած տնսնէք թէ մի քաւի
Արքայական վարդենու, որը երբեք չի քօշնում:
Տուէք ինձ բահ ու բրիչ, որ ձեռքերով սրբապիզ
Գերեզմանը իմ փորեմ այդ կախարդում պարտեզում:

կամ՝

Յերեկն մերմակ պատան հագցրեց մեզ բաւարիս
Որ մեզ շարքով իրար կռքիմ մի օր քաղի:
Արեգակն է միայն անմահ այս աշխարհում,
Իսկ դարերը փշրանքներն են գիշերներին:

Նրա արհամարհանքը դէպի մարդկու- ղերի մէջ:
Թիւնը արտայայտում է հետեւեալ տո-

Աբու Ալա, որդիդ օրհնեալ Սուլէյմանի,
Կուրաւթիւնը քեզ տրուել է որպէս բարիք,
Քանզի եթէ մարդկութիւնը դու տեսնէիր՝
Այս աշխարհում չէիր տեսնի ՄԱՐԳ մի հատիկ:

Արուլ Ալան իր յոռետեսութեամբ պանքերից, բայց երբեք չի յանդում
ծառանում է այն Հին Գ ԲիւնԱՊեՏՆԵՐԻ յուսալքման, արտաութեան, թուլամորթ
գէմ, որոնք ճարտութեան են մատնել ինքնախարչութեան կամ մի անձնաւը-
մարդկային հողին. այդ հինգն են Սը- ւութեան՝ որի միւթարութիւնը լինէր
կիւմբը, Բնութիւնը, Օրէնքը, Պետութիւ- սուֆիական անէացումը: Նա իր հոգու
նը եւ կարիքը: Նա ընդգրկում է այդ հին- խորքում դեռ հաւատում է մարդկային
դի դէմ, դայրանում է, քարոզում է ուժին, սլացքին. ահա թէ ինչպէս է նա
պայքարել եւ ազատագրուել այդ կա- արտայայտում իր այդ հաւատքը:

Ակամայից ծնունդ ենք մենք: Շատ ուշ: Հիմա:
Գնում ենք մենք, քողած աշխարհը ակամայ:
Թայց մենք, սերունդ դժգոհների ըմբաստածին՝
Տեսնում ենք միշտ ու ձգտում ենք դէպի լուսին:

Նա մարդկութեանը տաժանքի է հրաւի- յաւերժական ճամբարութիւնը, եթէ նոյն
ւիրում, փնտռութի, գտնելու համար իսկ դա լոկ մի պատրանք լինի:

Վազիր, բշտապիւր, գտիր ու բռնիր ճշմարտութիւնը,
Այդ պատրանք-կոյսին, որի ծիծաղը ձայնն է քրվէթի:
Կանչիր, ազերսիր: Եւ երբ չբզանես՝ յիշիր դառնօրէն
Գոմէ տնկացել, գոմէ փնտռել եւ շուքը յաւերժի:

(Շար. 1)

Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏ



ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԹԾՆԱՄԻՆ

Համազգայինի թատերասերներու Գրասար ինքնական խումբը, զեկամարտութեամբ Պրն. Ժ. Սարգիսեանի, 1864 Ապրիլ 10, 11, եւ 12-ին. Պէյրուսի Գալուստ Կիւլպէնկեան թատերադահլի մէջ ներկայացուց Հենրիէ Իրսէնի «Ժողովուրդի Թշնամին» թատերակը:

Հեղինակը.— Նորվեգիացի մեծահռչակ թատերագիրը Իրսէն, մեռած է 1828 Մարտ 20-ին, մեռած է 1806-ին: Այս երկու թուականներուն միջև անցած կեսնքը եւ անոր ստեղծագործութիւնը տիրապետեց 10-ըզ դարու բեմերուն, թատերական կենսոյն: Իրսէնի անունը Համազգոր է յեզակըման մը թատերական գրականութեան մէջ, բարձրագոյն լիւրան մը ժայթքումին՝ բեմական արուեստի նահանջումէն վեր: Վերոնորդութեամբ մըն է Իրսէնի թատերը. թատերի ազատագրումն է, այսպէս ըսուած «Լուս Կառուցում» աստիճանի բիւններէն, ստատ, անհոգի թատերական գրականութենէն, որ իրմէ առաջ տէրն ու տիրական էր եւրոպական բեմերուն:

Անհատական երջանկութեան ախտանքն է Իրսէն:

Ընկերային սուտերուն, կեղծիքին, մեծական բարոյականին թշնամին է Իրսէն:

ԳՈՐԾԸ.— «Ժողովուրդի Թշնամին» գրուած է 1882-ին: Ծովագիւրջայ գաղաթի մը մէջ կ'ապրէ Տօքթ. Շթոկման, իր ընտանիքով: Քաղաքին Հարստութեան ազդիւրը կը կազմեն բազմիւրեքը, որոնց ջուրերէն օգտուելու կու գան մեծ թուով Հիւանդներ, ինչպէս նաեւ քուրխսանք: Պաշտօնագետը, ինչպէս նաեւ բազմիւրեքուն բաժնետէրերուն ներկայացուցիչն է Տօքթ. Շթոկմանի կողմը: Բազմիւրեքուն բոլիւն է Տօքթ. Շթոկման, որ խաղաղ, Հանգստաւէտ կեանք մը կը վարէ, լընպատուած բարեկամներով, որոնց մէջ գլխաւորաբար կասկածելի նկարագրի տէր խմբագրիւրը կան, պատարտաւ Հանգստեան—

լու ամէն ինչ է նպատաւ իրենց անձնական Հանգստեան, անշուշտ միշտ ծածկելով ամէն ինչ զենկերութեան լահերը՝ զարժուածքին տակ:

Հայտնիքաւ, բարի, ուղղամիտ մարդ մը, ամբողջովին նուիրուած մարդկութեան ծառայելու գործին, Տօքթ. Շթոկման՝ կասկածներ ունի իրենց բազմիւրեքուն ջուրի մաքրութեան վերայ. կը կարծէ թէ անոնք պատճառ դարձան են շատերու վարակումին եւ Հիւանդութեան. որով, երբ գիտական փաստը կ'ունենայ է մեռին, թէ ուղիղ են իր կասկածները, բազմիւրեք ջուրերը վարակուած են կաշեկործարաններէն եւ ջրապարհներէն իջող աղտոտ ջուրերէն, իր Համար պարզ կը դառնայ, թէ՛ իր եւ թէ բոլորի՝ պարտականութիւնը.— պէտք է յայտնել այս ճշմարտութիւնը բոլորին, գանդել բազմիւրեքուն ջուրի խողովակները, եւ նորերը Հոտոտանել, տարբեր ճամբաներէ բերելով ջուրը:

Այս բոլորը է Հարկէ գիտականօրէն եւ տնտղականականօրէն ուղիղ, սակայն կը վրասեն բազմիւրեքն զեկամար, Հարուստ դասակարգի Հանգստեան, քանի որ նման լուրի մը տարածումը պատճառ պիտի դառնայ քուրխսանքու փախուստին, Հարկ պիտի ըլլայ բազմիւրեքը փակել երկու երեք տարիով, եւ Հարեւր Հազարներ ծախսել արժատական փոփոխութիւններու Համար: Քաղաքագետը կ'առաջարկէ, որ Տօքթ. Շթոկման ճարը գտնէ Հիւանդութեանց առաջը առնելու Հանձնիրական միջոցներով, կամ դարձանէ գտնող խոտոտանալով, որ մասնակի նորագործիւրներ կը կատարուին: Տօքթ. Շթոկման, ամբողջական ճշմարտութեան պաշտպան, կը գտնէ թէ իր պարտականութիւնն է ճշմարտութիւնը յայտնել բոլորին, առաջը առնելու Համար այցելուներուն եւ նաեւ քաղաքացիներուն վարակման, բազմիւրեքուն ջուրերէն:

Քաղաքին եւ անձնական անտեսական լահերէ

մեկնելով, քաղաքի զինվածությանը, զանազան սաղարաններով, կաշառքներով, մեքենայաթիւններով, Տօթք. Շթովմանին կ'արգելէն իր գոտի մէջ մարտաթիւն հրապարակումը, կ'արգելէն հրապարակով խօսելը այդ մասին. գործէ կը հասնեն զանա, տունէն կը հանեն, իր զաւակները կը վնասեն զարգացնել, իր աղջիկը կ'արձակեն ուսուցանելու պաշտօնէն, մղելով զինք որ թողու քաղաքը եւ հեռանայ: Լքուած բոլորէն, իր հետ ունենալով միայն իր կիներն ու զազաքարապաշտ աղջիկը, ինչպէս նաեւ նաւագետ մը որ իր տունը կը արտադրէ իրեն, Տօթք. Շթովման, վերջին բողոքէն կ'որոշէ մնալ եւ պայքարել ընդհարային թունաւորութիւնն իր, զանեւելով որ ամէն նաւաւոր մարդը այն մարդն է, որ միմեկն է:

Ճշգրտութեամբ թշուառութիւնը թատերակէն տարի մը առաջ իրենց գրած էր իր գլխի գործողներէն մէկն, Վերալուկանները՝ որ նորմալիտական ընկերային քարայրի բարոյականը կը ձուլուէր անքան ուր կերպով, որ ոչ մէկ նորմալիտայի բնականութիւն յանձն առած էր բնականութիւնը:

Նորմալիտայի ծառայողներն որ թաքմանաբար, շուտապէս թատերակութիւնը իր խաղաղութեամբ, ու անպիսի հալածանք մը սկսաւ իրենց ղէմ, որ իրենց անպիտանութեամբ թողուլ նորմալիտան ու հեռանալ:

Ընկերութեան կողմէ իր ղէմ հնարաւոր այդ զոռարութիւններուն ու հալածանքին առաջացուցած դառնութեանց արդիւնքն է իր ճշգրտութեամբ թշուառութիւնը, ամէնէն սկսած իր թատերակներէն, եւ ամէնէն աւելի միտումնաւոր իր գործերէն. ինքը, իրենց իսկ անդադարձած է առողջ, եւ այս թատերակին համար է որ ըսած է իր հրատարակիչին. «Ես եւ Տօթքէօրը (Շթովման) քաղաքի կէտերու մէջ համակարծիք ենք, սակայն ան աւելի խառնակ եւ շփոթած գլուխ մը ունի քան ես»:

Նշենք, թէ իրական մասնաւոր միտումնաբերութեան ՄԵՄԻՆԻՍԻՆԸ, անքան կապուած է ընկերութեան հետ, որ ինք իսկ, իր ա'յս թատերակին մէջ իսկ, չէ կրցած միայն միտումնաբերութեամբ Տօթք. Շթովմանը, եւ անոր վերջին խօսքերը ըսած ժամանակ իր կողքին են կիներ, իր հետ են իր աղջիկը ու բարեկամ նաւագետը:

Իր մասնաւորութիւնն մէջ, ընկերութիւնը հարուածեալ, եւ զայրոյթը արտայայտելու թափին մէջ, իրենց կեդրոնացած է ամբողջութիւնը:

Տօթք. Շթովմանի տեղաբնակ Վրայ Գործը հազուադէպ այն թատերակներէն է, զորմէ միտել իրական դրականութեան մէջ, որ հոգեբանական խոր թափանցումներու փոխարէն, ապրումներու աստիճանական զարգացումներու, մասնաւորութեամբ խորացման փոխարէն, սկզբէն միշտ վերջ կը գտնուէր զայրոյթի մը նեղութիւն, հազմաւորութեան, առաջին հետ զէմ յանդիման. իսկ կողմնակի անմասնութիւններն ու ղէպքերը, փոխանակ ինքիւնքին զարգացումը, պարզած են կիսովին արտայայտուած անմասնութիւններ, որոնց միակ միտումնաբերութեան զայրոյթը կանգուն պահելն է, արդարացիւք: Ըսել չենք ուզեր թէ իր գործին մէջ ամբողջութիւն կեանքէն զուրկ են կողմնակի տեղաբնակներ, իրենցիկ մօտ երկրորդական անմասնութիւններուն մէջ ընդհանրապէս պակասներ չկան, այլ ըսել կ'ուզենք, թէ այս թատերակին մէջ Տօթք. Շթովմանն է որ զարած է ամբողջ բեմը, թատերակի ամբողջ կեանքը: Այդ իսկ կը կազմէ թատերակին եւ զոռարութիւնը, եւ տեղաբնակները:

ԲԵՄԻՆԻՍԻՆԻՆԸ ՈՒ ԵՄԻՆԻՍԻՆԻՆԸ. Կեդրոնացած ըլլալով մէկ անմասնութեան շուրջ (Տօթք. Շթովման), երկրորդական անմասնութիւնները շուրջն պէտք եղած զարգացումը, պէտք եղած ուժանութիւնը. եւ եթէ պատահի որ զանոնք մարմնաւորող զերակատարները բեմական բացառիկ կարողութիւններով եւ թէքներով մը չկարենան բերել իրենց դերին յաւելուել կենդանութիւն մը, յաւելուել ուժանութիւն մը (առանց ինչպէս չափազանցութեանց գերիշանչույթ) այդ պարագային թատերակի կենդանացման ամբողջ ծանրութիւնը կ'իյնայ գլխաւոր դերակատարի ուսերուն:

Եթէ ան ունի պէտք եղած ըմբռնումը, բեմական թէքներն ու թատերակուն արուեստի հիմնական սէրը, կրնայ իր հետ առաջ մղել ամբողջ թատերակը. իր խաղարկութեան ուժանութեամբ կրնայ ծածկել միշտ անդամ տկար խաղարկութիւնը իր շուրջիններուն եւ արուեստի գործի մը պատճառած անխառն վայելքը տալ հանդիսականներուն:

Պրն. Ժորժ Սարգիսեան բեմական իրաւ արուեստի այդ մեծ վայելքը տուաւ հանդիսականներուն: Եղաւ այն ամբողջական, լրիւ արուեստագէտը, որ կրցաւ կեանքին կանչել ՄԵՄԻՆԻՍԻՆԸ ԵՄԻՆԻՍԻՆԸ ԵՄԻՆԻՍԻՆԸ: ԵՄԻՆԻՍԻՆԸ ԵՄԻՆԻՍԻՆԸ:

Մարգարէր, բարի, միամիտ, ազնիւ. նոյն
ստանն անկաշառ, ուշիղ, բարձր հոգիի եւ բարձր
թոյնի ճիւղերու տէր. իր գաղափարին համար պայ-
քարելու պատրաստ, անգիւղի, վճռական, գո-
հաբերուող մարդը. փոքն ի փոքն ընկճուած, ու-
րախ, յաղթական, պարտուած, պարտութենէն
բարձրացող եւ գերազայն յաղթանակին դիմող
ընտիր մարդը. ընտանիքի պատուական հայրը,
լաւ բարեկամը, իր թշնամիներուն անգամ ներող
առաքիթի մարդը կրցաւ ըլլալ Պրն. Ժորժ Սա-
րգիսեան, ոչ միայն արտայայտուած մտքերուն
իր բերած հարազատ շնորհիւ ու համապատաս-
խան հարազատ ու բնական շարժումներովը, այլ
մանաւանդ իր լուսնի շնորհով, ուրիշները աւ-
ելընդուն մամանակ, իր ամբողջ կեցումով,
իր ամբողջ մարմնով, զիրաւ քանուանքով ու
նորաւորին արտայայտութեամբը ԱՄԲԱՂԱՆ-
ԿԱՆ ԴԵՐԱՍԱՆԸ ԵՂԱՆ ԱՆ, եւ ամբողջական
ըմբռնումով մին էր դիմել իր խաղը, իր մէջ
վերականգնացումը Տօքթ. Շթովմանին:

Այստեղ որ նոյն արդիւնքին լինի կրցած հա-
նի վրէջ լըկապառող գերասանները: Երկրոր-
դական տիպարներու խաղարկութիւնը պահելով
հանդերձ տանելի սահմաններու մէջ, երբեմն եւ
սեղ տեղ աղղու բնականութեամբ (Օր. Ա. Պո-
յանեան, Շթովմանի աղկան, Բեթրայի դերով
եւ Գ. Պոյանեան, նաւապետ Հոյսթի դերով)
երբեմն ալ անտեղի շափաղանցութիւններով (Գ.
ճանապետի Տիկ. Շթովմանի հօր Օրդի դերին
մէջ. Ն. Մանուկեան, Թղթակից Պիլինի դերին
մէջ եւ Կ. Խաչատուրեան, ապարանտիրոջ դերին
մէջ), Տիկ. Զ. Եսայի (Տիկ. Շթովման), Պրն.
Ժ. Եսայի (Պրն. Պրն. Պրն. Պրն. Պրն. Պրն. Պրն.
պարիտեան (Խմբագիր Հովսէփ), Պրն. Ժորժ
Սարգիսեանի խաղարկութեան դիմաց լիզցան բե-
լի պէտք եղած ճշգրիտ շնորհ եւ բնական խա-
ղարկութիւնը: Պրն. Եսայի բան մը կար իրենց մէջ,
կարծես գիտակցութիւնը, զգայնութիւնը կար թէ

իրենց երկրորդական գերեր ունին, կարեւորը
Շթովմանն է, եւ Շթովմանը շխմաբար: Այդ-
պէս չէ սակայն իրականութիւնը: Ինչքան ալ բա-
ւարար լափով զարգացուած լըլլան այս թատերա-
կի երկրորդական տիպարները, ունին իրենց օն-
գական դիմագիծը, եւ բնածաղիքին ու գերա-
սաններուն պարտականութիւնը պէտք էր ըլլար
փնտռել ու գտնել ճշգրիտ, իրական այն շնորհ,
որը քառերուն պիտի տար ուղիւս, փոխանակ
վերանորոգ արգիւն վրայ լուսն հրապարակաւ բառե-
րու: Բառերը, ինչքան ալ կարն ըլլան անձը,
ինչքան ալ երկրորդական գերի մը պատկանին,
պէտք է Բուին գրութենէ մը ժայթքող, եւ ոչ
թէ սովորով:

Իսկ բառերին անդին գեա կայ ծնոքը: Դե-
րասանին համար հակառէ ծնոքն է. ծնոքը ըն-
լով միայն շարժումները նկատի չունինք, այլ
ընդհանուր կեցումները: Ոչ միայն մարմնական
կեցումները, զիրաւ քանուանքով կամ նախաւորին
ուղղութիւնը, կամ նախաւորը, այլ նաեւ ընդ-
հանուր ՄՏԳԻ ԵՒ ՀՈՂԻ ԳԵՏՈՒՄԻՆԸ: Այս է
որ պակասեալ մնացեալ տիպարները մարմնա-
յաւ պարտաւորութիւնը ունեցողներուն, եւ այս
է որ թերեւս այսքան օւղիւսին լըլլացուէր, ե-
թէ Պրն. Ժ. Սարգիսեան այդքան կատարեալ մե-
ւով թափանցած լըլլար Տօքթ. Շթովմանի նե-
րաշխարհէն ներս, այդքան կատարեալ մեւով
խրոցուցած լըլլար անոր մտային ու հոգեկան
կեցումները:

Յամենայն դէպս, հակառակ կարգ մը ակա-
րութեանց, անոնք որոնք ներկայ եղան Վաղար-
շապէի Թշնամիին ներկայացման, իրենց հեռ
պիտի տանին անմոռանալի ապաւորութիւնը կա-
տարեալ խաղարկութեան մը, Տօքթ. Շթովմանի
կատարեալ մարմնաւորման. իսկ Վաղարշապէի
Թշնամին՝ վերջին հաշուով Տօքթ. Շթովմանն է
միայն:

Բ. Փ.



Ո Ւ Թ Ը Կ Ի Ն Ե Ր

ՀՀայկ Ակումբի Ծրխառարդներու Խումբը իր բեմական նախադասքը ըրաւ, ներկայացնելով Ռոպէր Յոմայի ՁՅ Կիններ 3 արաբնոց ոտակա- նական կատակերգութիւնը, 5 Աղբիւ 1904-ին, ամերիկեան Ուեքս Լոյի մէջ: Աղբիւ 4-ին փիւսը ներկայացուած էր Նոյն արահին մէջ, պարոցու- կաններու համար:

Նիւթը... Միւսփնն Հետադիւղ ստականա- կան կատակերգութիւն մը՝ առանց... սպակա- նի: Այլ մարդ մը (բեմէն բացակայ), իր կե- նը, երկու աղբիւները, զոքանը, թեմին, զոյրը, օպտուհին, զատարարի կինը: Տունին մէջ, յարարարուած բայց իրականին մէջ լիզեալ ո- ճիւր մը: Իբր թէ օպտանած են ընտանիքին աճ- բը, սենեակին մէջ: Իսկոյն, 8 կիններու մէջ փո- խալարձ անվտանգութիւն, հասարակական հիմ- նաւոր կոտորածներ իրաքանիւրին համար, փո- խալարձ ամբաստանութիւն, փնտառուք բուն ոճ- բաղորդի: Ուրիշ խաղը օտարալը պարիկ աղբիւն է, որուն բացարարական հրապարակային խոստո- վանածը հազիւ վերջացած, հօրը սենեակէն դը լսուի հրապարակ մը ասիւր: Հայրը ներսէն իմա- ցած ըլլալով 8 կիններէ զուտանուած ըլլալը, վերջ կու տայ իր կեանքին, եւ փիւսը դը վերջա- նայ:


Խաղարկութիւն... Միւսփնն ու զատուին անգամ բեմ իջողոյք բարեացակամ կանխարար- ժաղարկութիւններ եւ իրիւք խաղարկող նման ալլ հարցեր դրիւն մինչեւ վերջ վերջան բարե- բախտաբար, Թատերական քրոնիկալիքներուն զը- բեմէն ըսելիք չազոյ խաղարկութեան մը շնորհիւ: Ատիկա այսպէս, եթէ չենք ուզեր անպարտան զէ՛լ բուն մը ըսել, անպարտան ուրիշէն արեւել՝ բուն մը զիտացած ըլլալ, զժողով ոտականի պէտ, անպարտան... Պնզա՛ զրեւ: Փիւսը աստուկաբար Միւսփնն ստեղծելու կոչուած էր եւ պահանջ- նած Սիւսփնն բաւարար լափով արուեստու:

Միւսի մէն Թերութիւնը որ պէտք է ժառ- նանել, աստղանական Թերութիւնն է: Այս քա- ղաքի հայ բեմին համար գիւ մը ընդհանուր վերջ է զժառանգարար աստղանական Թերին, որ օր առաջ պէտք է արաղբուի ալլու: Այս դիտո- ղութիւնը հոս այսպէս արժանապրելի ետք, յայտ- նենք անթիւպէս՝

որ բեմին յարգարումը, պարուն Յաղոր Ա- լանեանի կողմէ եղան՝ շատ լաւ էր, որ բեմա- ղրիւ Օր: Սեպա Սէֆէրեան արդիւնաւոր ճիւղ մը Թափած էր իր ղեկավարած Խումբին վրայ:

Գալով զերակատարներուն, կրցած էին ա- նոնք լաւապէս անձնաւորել ու հարկ եղած փայլը տալ փիւսին պահանջած տիպարներուն: Գրցած էր Օր: Ալին Ամասեան (= Մամի) ինքիւնք պար- տաղբող եւ իր հանդիսուն ոչ մէկ զիջում կա- տարող զոքան մը ըլլալ: Օր: Անի Տէտէնան (= Լուիկ) յաջորդած էր որոշ փայլ մը տալ իր անձնաւորած տիպարին եւ չփոթուիլ լաւ ղեկեցիկ եւ բաւական անպարտաւ պատուէրի մը հետ, ու, նովին բանիւ, չփոթ ստեղծել ասան մէջ: Օր: Անի Ամասեան (= Վապի) յաջորդա- թեամբ մարմնաւորեց հանգստաւէտ կեանքի վարձ, 40-ամեայ ղեկեցիկ կնոջ մը տիպարը, որ սակայն տղի զաղտնիք մը եւ զաղտնի անհա- ղըստութիւն մը ունի: Օր: Սեմա Աւանեան (= Օկիւսթի) լաշորէն կրցաւ Թերիւն, իր տարիքին եւ տունը մնացած աշխարհ բարձր Թ- րուններով, եւ Օր: Սեմա Ետէնեան (= Գա- րեթի) յաջորդ՝ շփանալով, լարեւով եւ ապա՝ յուզելով: Օր: Տիանա Սէֆէրեան (= Փիլիք) շուտով մոռցուց իր գիւ մը անպար մուտքը բեմ, վերանուելու համար իսկոյն ցոփուէրի եւ ճան- բինն էակի հանելուկային տիպարին: Օր: Սիւսփն Արուհան (= Սիւզան) կրցաւ սեւային ծանրա- ղայն յանգանք մը ծանկէլ երեւութական հան- ղարտութեան մը հանին, իսկ Օր: Միւսփնն Բամ- պուրեան (Յիկ. Մանի) Նոյնքան անխաղ ար- տաքինի մը մէջ յաջողեցաւ խոսկիլ զաղտնի- րեւու զաղտնապահը ըլլալ:

Սղարակացութիւն... 8 կինները կատարեալ պի- տի ըլլային, թէ անհասական խաղարկութեամբ եւ թէ հաւաքական ներդաշնակութեան տեսակէ- տով, եթէ աստղանութիւնը մարդու ըլլալը, եւ ապա, եթէ յաղուտ խաղին ընդհանուր ներդաշ- նակութեան, օրորողներ Ս. Աւանեան եւ Ս. Ետ- ճինեան պէտք են անմէն անխաղ լաւատէին իրենց ղեկերուն լափազանցութիւններէն: Իրենք ոչինչ պիտի չկորսնցնէին ու չկորսնցնէին: Բայց ընդ- հանուր ներդաշնակութիւնը ըստ մեզի, գիւ մը տուած է:



Ս Փ Ի Ի Բ Է

ՎԱՐՊԱՆ ԳՐԻԳՈՐԻԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԱՍԱՆՈՍ

Համագայիծի Պէշտոյի փայտեցեան ճիւղ-
րանի մայիկիմ սանկիւն վարդան Գրիգորեան, ճը-
շանակում է Սան Ֆրանցիսկոյի համալսարանի
դասախոս: Եարաքը 12 օր կը դասախոսէ հե-
տեւեալ ճիւղերում շուրջ:—

Ա.— Արդի եւրոպայի պատմութիւն (1914-էն
1947):

Բ.— Եւրոպական քաղաքացիական պատ-
մութիւն:

Գ.— Արդի Միջին Արեւելքի պատմութիւն:

Վ.— Գրիգորեան պատրաստած է մասն Աֆղա-
նիստանի պատմութեան վերաբերեալ աշխատու-
թիւն մը: Ասկէ զատ սկսած է գրել Լոմոսնի
Կեդք. Ասիայ Արեւելեան Ընկերակցութեան
պաշտօնաթերթին համար Պաքուի հերետական
ինքնուշառուպանութեան մասին ուսումնասիրու-
թիւն մը: Նմանապէս, սկսած է գրել Խորհրդա-
յին Հայաստանի պատմութիւնը:

ՀԱՅՏԵՐԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԳԻՈՆ

Պերլիի Համալսարանը հայերէնի ուսումն
մնայուն դասընթացք մը հաստատած է, այս
տարուան տարած վեցամսեայէն սկսեալ: Այսու-
հետեւ քէ գրաբար եւ քէ աշխարհաբար պիտի
դասուանդուի եւ քննութեան ալ պաշտօնապէս
ընդունուած գիտութիւն պիտի մկատուի հայե-
րէնը:

Մեծասանի միջազգային այս մօր աշխարհ
հաստատուած է Պերլիի Ազատ Համալսարանի՝
Հնդեւրոպական Հետաքննիչ մէջ եւ դասախոսի
վեարդի պաշտօնին իջուած է, Տոքթ. Պետրոս
Ֆրանկեան:

ԺԱՆ-ԺԱԿ ԱՍԼԱՆԵԱՆԻ
ՆՈՐ ՅԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժան-Ժաք Ասլանեան, որ առեալ տարի նոր
բեմ ժը ստեղծած էր փարիզի մէջ եւ վաճէ Պա-
շայի մէջ թատերգութեամբ սկսած շրջանը, զա-
ւարար կը շարունակէ իր ձեռնարկը:

Արուսեանի կամ Պարտադրեալ Սէրը խոր-
դիւր է նոր թատերգութեան, որուն ներկայա-
ցումները սկսած են Մարտ 18-ին:

Նի.թին Հեղինակն է՝ Փոք Կայառ, բեմա-
դրութիւնը կատարած է Ժան-Ժաք Ասլանեան:

Ժամանակը կանխող այս թատերգութեան
գործողութիւնը կը կատարուի Արուսեանի մոլո-
րակին վրայ, առկէ քանի ժը տարի ետք՝ Թու-
սերն ու Արեւմտեանները կայաններ հաստատած
են հին, բայց պատերազմ կը յայտարարուի եւ
վերջին ողբերգութիւնն է, տարանջատումն է
հրկրին: Արեւմտեան եւ խորհրդային գիտուննե-
րը դատապարտուած են Արուսեանին վրայ ապ-
րելու: Պիտի կարեւորն համարուի, զիբար տի-
րի, շարունակել մարդկութիւնը հակառակ ա-
նոր որ միայն խորհրդային կողմը կրնայ կան եւ
անոնցմէ միայն մէկը զառաւ ի: Պիտի կարե-
ւորն վերապրել եւ նոր երկրի մը վերանել Ա-
րուսեանի:

ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ
ԿԸ ՅՈՒՅԱԴՐԷ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Մէկ ամսուան համար Անգլիայ շուտեմընը
ցուցարարեան մէջ. իւր արձաններուն, իւղեմեր-
կերուն եւ ջրաներկերուն ցուցադրութիւնը պի-
տի կատարէ, ամերիկեան հայկաւոր արձա-
նագործ եւ արուեստագէտ Խորէն Տէր Յարու-
թեան:

Անցեալ 18 ամիսներու ընթացքին, Խորէն Տէր
Յարութեան իր տիկնոջ հետ, գտնուած է Ֆլո-
րանս եւ վերադառնալ աշխատած է պրոնդեայ մօր
արձաններու վրայ: Խորէն Տէր Յարութեան հըռ-
շակաւոր է Ամերիկայի մէջ ընդէս քարէ եւ փայ-
տէ արձաններ փորագրող ուժեղ արուեստագէտ:

Տէր Յարութեան, որուն մօտիւրումը հայա-
գիտութեան բոլորին ծանօթ է, ստեղծագործած
է պրոնդեայ մօր Ս. վարդաւ մը, քաջ եւ հսկայ
դէմք մը, ձեռքին իսկ մը, կանգնած մայմական
կառի մը վրայ՝ որ կը քաշուի ոգնդէն ձեռք
մը: Ստեղծագործութիւն մը՝ ի զգացումով եւ
շարժումով:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՈՒՆԵՍՏԻ

ՆՈՐ ՅՈՒՅԱՀԱՆՊԵՍ ԱՐԸ

Ազգ. Գաղթաբարձի Հայկական արուեստի բաժնին մէջ կազմակերպուած է նոր ցուցանանքէն մը, ուր առաջին անգամ ըլլալով ցուցադրուած են մեծ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկիի «Նայ Նահապետը» Արարատէն իջնելու ասանկը դարձը, ինչպէս նաեւ Գէորգ Բաշինջազեանի «Բաշարձակ լուսթիւն» ու «Բարեկալաքարէն» դարձերը: Նոյնպէս առաջին անգամ ըլլալով ցուցադրուած է Մարտիրոս Մարեանի «Հայաստան» հոյակապ դարձը, զոր նկարիչը պատրաստած է Մուշուկեանի անունն ակազածական թատրոնի վարպետ լինելու համար:

Ցուցադրուած են նաեւ Եփրատահայ կարգ մը նկարիչներու դարձերը ինչպէս, օրինակ՝ համար, Յովհաննէս Ալիսկանի (Ճարտարէն), Եղիա Գառապտիսի (Մ. Նահապետէն), Գրիգոր Վահրամեանի (Գարակառտէն), Ալոս Զորիսեի (Նգիպտոսէն), Փիլոսոփ Սրաքեանի (Խառալիսէն) եւ ուրիշներու դարձերը:

ՅԱԶՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Թիֆլիսի մէջ տաղին անգամ ըլլալով Երևանի քաղաքը բնադրած է Ս. Խանգաւանի ծանօթ վեպը՝ «Միսրաք Սպարապետ»:

Ներկայացումը անցած է շատ յաջող:

Հայրենասիրական բովանդակութիւնը մեծապէս խանգաւանած է ճերկաները:

ԱՐԺԵՓԱՒՈՐ ԳՈՐԾ ԱՐԸ

Մ. Բարեկալաքեան լոյս ընծայած է «Միջնադարեան Հայ Ժողովարարները եւ Քաղաքի Վարպետները» խորագրով գործը ուր կը ներկայացնէ քարէ ձեղք անծանօթ մասցան 70 հարստաւարական, 130 քաղաքապետական վարպետներ եւ 40 վիճակի արձանագրութիւններ: Գիրքին մէջ կան բազմաթիւ յուշարձաններու լուսանկարներ եւ արձանագրութիւններ, որոնց կը կրնն չարքանապետներուն անունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺԱՐՈՒՆԵՍՏԸ

Հայաստանի շարժանկարի արուեստին մը փրուած խորհրդակցական ճիւղի մը ընթացքին, վերստին քննադատուած է «Հայֆիլմ» գործունէութիւնը: Ս. Գէորգով, որ շարժանկարի մէջ աշխատողներու միութեան վարչաժողովի քարտուղարն է, իր գնահատման մէջ ցուով նկատել տուած է, թէ Հայաստանի շարժանկարի արուեստը կը շարունակէ զգալիապէս նա մնալ:

Եղ. Թափեան (Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար) յայտարարած է հետեւեալը. «Հայ գրականութիւնը կ'աճի, կը հարստանայ մօր անուններով, իսկ հինգերորդաւորդեան (այսինքն)՝ շարժանկարի բնադրութիւնը» պարզապէս գոյութիւն չունի:

Ընդհանուր խօսակցութիւններ յայտնի դարձած է, թէ ներկայ պայմաններուն մէջ Հայֆիլմի արուեստանոցը կրնայ տարեկան նկարահանել հինգ-վեց լիամէթր ժապաւնէրներ:

ՆՈՐ ԳԻՐՔՆԵՐ

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Հրատարակութեամբ լոյս տեսած է «Հայ Ժողովրդական Հեքիաթներ» Գ. Հատորը: Այս հատորը կը բովանդակէ պատմական Շիրակի, Բասենի, Զուլաբի ժողովրդական հեքիաթները: Գիրքը ունի յատկապէս, լայն ծանօթագրութիւններ, բառարան եւ ցանկ: Վերոյիշեալ հատորը կազմած է բանասիրական գիտութիւններու թիւնդու Մ. Մկրտիչեան:

ԳԱԼԻԼԵՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Խաչատրի մեծամեծ գիտնական Գալիլեոի ծննդեան 400-ամեակին նուիրուած գիտական ճիւղ մը գումարուած է Երևանի մէջ: Խօսք տեսած են ակադեմիկոս Վ. Համբարձումեան, Գ. Պետրոսեան (ընագիտութեան ուսուցիչներու քեան գիտութիւններու վարդապետ), Օ. Մալանդեան (Գիտութիւններու Ակադեմիայի քաղաքական տնօրէն) Օ. Փայազեան եւ Գերագոյն Խորհուրդի դիւանին նախագահ Ն. Յարութիւնեան:

Վիճաք Համբարձումեան իր քաջամ խօսքին մէջ դիտել տուած է թէ Գալիլեոսի շինած առաջին հեռադիտակը եւ ամբար մշակած սկզբնական գիտնական միջոցն այսօր ալ թօքաւ են եւ կը շարունակեն իրենց արժէքը:

ԼՈՅՍ ՏԵՍԵԻ

ԼՈՅՍ ՏԵՍԵԻ

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ

Ա Ի Ա Ջ Ա Խ Ր Ա Ծ Ն Ա Ի Ը

(Կ. ՋԱՐԵԱՆԻ «ՆԱԻԸ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ» ՎԷՊԻՆ ԵՐԿՈՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ)

Կ. Ջարեանի «Նաւը լեւան վրայ» գործին երկու տպագրութիւնները, արտասահմանեան տպագրութիւնը (1943) եւ Հայաստանեան տպագրութիւնը (1963), յաղդատութեան ենթարկելով այս էջերը կազմեցինք՝

Առաջինը՝ առիթ տալու համար հայ մտաւարակաւութեան, որ փաստաբուղթերու բաւարար այս ամբողջութեան դիմաց կանգ առնէ եւ ապա ըսէ իլ խօսքը գրականութեանց պատմութեան մէջ մախրնթայ չունեցող իմացական այս կամարը այլասերումին առիթով, եւ

Երկրորդը՝ որպէսզի հայ երիտասարդը յստակօք յէն կարենայ տեսնել իր ճակատագրին հետ խաղացող մաքդոց դար եւ պահէ խաբեքաներուն եւ խաբեքայութիւններուն դէմ ընդդէմը եւ ազադակելու ցեղային իր արու նկարագիրը:

Էջ՝ 171, ԳԻՆ՝ 3 Լ. ՈՍԿԻ

Ստամբուլ, համար դիմել

B. SENABIAN

B. P. 2740

Beyrouth - Liban

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ. —

DIKRAN KOUYOUMDJIAN

B. P. 587, Beyrouth — Liban

digitised by A.R.A.R.@